

Fragment



Ռաւարդարի

Օրաւարի

Ֆարգարի

Մանաւելարի

Ալարարի

Մանարի

Մանարի Մանարի Մանարի

Սարարի

Մանարի

Բարարի Թանարի

Անարի

Սարարի

Մանարի Սարարի

Ջանարի Ռի

Սարարի

Սարարի

Անարի

Ջանարի Ռի

Ռարի

Սարարի

Հարարի

Ջանարի

8/35
5-35


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

Կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց,
առաջաբանը գրեց և ծանոթագրեց
ԱՐՄԱՆՈՒԷ ԿՈՋՄՈՅԱՆԸ

2710

ԵՐԵՎԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ», 1990



Խմբագիր՝ ՎԱՐԴԳԵՍ ԲԱԲԱՅԱՆ

Մ 350

Մարգարտաշար: (Ռոբայաթ): Կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը; [նկ.՝ Ֆ. Աֆրիկյան], խմբագիր Վ. Բաբայան, Եր.: Խորհրդային գրող, 1989.— 240 էջ:

Ժողովածուն ամփոփում է երկու տասնյակից ավելի պարսկա-տաջիկական դասականների քառյակներ, որոնց հիմնական մասը հայ ընթերցողին ներկայացվում է առաջին անգամ:

Մ	<u>4703020200 / 98 /</u>	142-89	ԳՄԴ	84.5
	705/01/ 89			

© «Խորհրդային գրող» հրատարակչություն,
թարգմանված է հայերեն, 1990



ԴԱՍԱԿԱՆ ՔԱՌՅԱԿԸ ՌՈՒՂԱՔԻՒՑ

ՄԻՆՉԵՎ ԶԱՄԻ

Ռոբայի՝ այդպես են անվանում պարսկական¹ պոեզիայի փոքր, սակայն ճկուն ու տարողունակ հնագույն ձևերից մեկը: Ռոբայի (հոգնակի՝ ռոբայաթ) արաբերեն բառ է, նշանակում է քառատող, սակայն այն իր ծագումով զուտ իրանական երևույթ է, նրա մշակույթի անբակտելի մասը, առանց որի չի կարելի ամբողջական պատկերացում ունենալ պարսից ժողովրդի միջնադարյան դասական գրական ժառանգության, փիլիսոփայական և կրոնական մտքի զարգացման շատ հարցերի վերաբերյալ: Այն սնվել է իրանական բանահյուսությունից և երկար ու ձիգ դարերի ընթացքում փոփոխվելով, չի կորցրել իր կապը ժողովրդական ստեղծագործության հետ: Որոշ հետազոտողներ քառյակի բանաստեղծական չափի ակունքները տանում են դեպի իրանական գրադաշտական սուրբ գիրքը՝ Ավեստան:

Ռոբային բաղկացած է չորս տողից (միսրա) կամ երկու երկտողից (բեյթ): Այն ունի հանգավորման երկու սկզբունք. կամ հանգավորվում են բոլոր տողերը՝ ԱԱԱԱ, կամ երրորդ տողը մնում

¹ Ֆարսի լեզվով ստեղծված միջնադարյան պոեզիան միաժամանակ տաջիկ ժողովրդի սեփականությունն է և հայտնի է նաև որպես պարսկա-տաջիկական:

է անհանգ՝ ԱԱԲԱ: Տողերի տրամաբանական կապը գիտակցվում է զուգորդությունների, հոգեբանական զուգահեռների, պատկերների համաչափության և այլ միջոցների օգնությամբ:

Հանգը քառյակի կառուցվածքի ամենակարևոր տարրերից մեկն է: Օգտագործելով հանգի չորս տեսակները (պարզ, լրիվ, շքեղ ու ռադիֆոլ*, բանաստեղծները հնչողության հարմոնիայի և հակադրությունների ամենաբարդ և բազմազան տարափոխումների միջոցով հասնում են քառյակի բովանդակությունն ու ներքին լիցքն արտահայտող ռիթմա-մեղեդայնության: Փոքր ժանրային այդ ձևը ունի թեմատիկ լայն ընդգրկում՝ սիրային, էթիկական, փիլիսոփայական, միստիկական, ներբողային և այլն: Արդարացիորեն քառյակը եվրոպական արևելագետների կողմից համարվել է պարսկական մտքի դրսևորման հնագույն և պարսկական պոեզիայի ամենահզոր ձևը:

7-րդ դարում արաբները նվաճեցին Իրանը և Միջին Ասիան, որից հետո պարսիկները կորցրին պետականությունը, զրադաշտական կրոնը: Ղորանի լեզուն՝ արաբերենը, դարձավ պետական լեզու: Խաթարվեցին մշակութային և գրական ավանդույթները: Պարսիկներն ընդունեցին արաբական պոեզիայի ժանրային ձևերը՝ ղասիդեն*, ղազալը*, ղըթան* և արուզ-կոչվող քանակական տաղաչափությունը (երկար և սուղ ձայնավորների հերթափոխությամբ), որը հարմարեցրին ֆարսի լեզվի առանձնահատկություններին:

9-10-րդ դդ. ժողովրդական ապստամբությունները, աղանդավորական շարժումները, ազատագրական պայքարը դանդաղ և հետևողականորեն խաթիվում էին արաբական խալիֆայության հիմքերը: Աստիճանաբար տեղական ավատատերերը անջատվում էին կենտրոնական իշխանությունից և անկախություն ձեռք բերում: Դրանցից էին Սաֆարյանների և Սամանյանների հարըս-

տությունները, որոնց վարած քաղաքականութիւնը մեծապէս նպաստում և սատար էր կանգնում հայրենասիրական նկրտումների իրականացմանը՝ իրանական ոգու վերելքին, ֆարսի լեզվի պետական և գրական լեզու դառնալու պատմական պահանջին: Սամանյանների հարստության մայրաքաղաք Բուխարան, իսկ հետագայում նաև Սամարղանդը, դարձան գիտության, մշակույթի կենտրոններ: 10-րդ դարում Սամանյանների պալատում արդեն ֆարսի լեզվով հնչում էին արքունիքի փառաբանված բանաստեղծի՝ Ռուդաքիի ղազալները և ղասիդները: Նրա անվան հետ է կապված նաև գրական քառյակի ծնունդն ու ձևավորումը, որը մինչ այդ իրանական բանահյուսական ձև էր:

Ըստ ավանդության, մի անգամ Ռուդաքին զբոսնելիս է եղել այգու գեղատեսիլ անկյուններից մեկում, որտեղ պատանիները հավաքված ընկույզ էին գլորում: Հանկարծ սիրունատես մի պատանի ընկույզի գլորվելու հետ միաժամանակ երգել է մի մեղեդի, որ «հմայի» ընկույզը և այն ընկնի փոսիկը. «գլորվեց-գլորվեց, մինչև հասավ իր փոսիկին»: Ռուդաքին խանդավառվել է իր համար մինչ այդ անծանոթ բանաստեղծական չափից և աննկատելի երգել առաջին ռոբային:

Այս ավանդութիւնը պահպանվել է 13-րդ դարի հեղինակ Շամս ադ-Դին Ղայս-ալ Ռազիի պարսկական պոեզիային նվիրված աշխատության մեջ: Պոետիկայի հմուտ գիտակը նշում է նաև, որ արաբական պոեզիան անտեղյակ է եղել քառյակի ձևին և միայն ուշ շրջանում են արաբ բանաստեղծները գրել այդ օտարածին ժանրային ձևով՝ պարսկերեն թարանե և դոբեյթի անվանումը փոխարինելով արաբերեն ռոբայի բառով:

Ըստ մեկ այլ ավանդության, թագավոր Բահրամ Գուր Սասանյանը (5-րդ դ.) բնության գրկում քառյակ-բանաստեղծությամբ իր զգացմունքներն է հեղել սիրեցյալին՝ Դելարամին:

Մեզ հասած ավանդազրույցները քառյակի ծագման երկու հակադիր մեկնակերպով իմաստավորում են հետագայում քառյակի զարգացման երկու ուղղությունները՝ ժողովրդական և արքունական:

Այսպիսով, ժողովրդական երգաքառյակի հենքի վրա ստեղծվել է գրական ոտբային, որը դարձել է լուրջ և խոհական զգացմունքների արտահայտիչ, զարգացման ճանապարհին հղկվելով՝ ձեռք բերել նրբաճաշակ արվեստին հատուկ տարրեր:

Արքունական բանաստեղծի կյանքն ուղեկցվում էր անվերջ խնջույքներով և պալատական խարդավանքներով: Շահի արքունիքը թելադրում էր պոետներին ներբողի թեման, որի հիմնական ժանրային ձևը դասիդեն էր: Չնայած ներբող-դասիդեի նախերգանքում բանաստեղծները նկարագրում էին հայրենի բնությունը, արտահայտում իրենց զգացմունքները, սակայն ներբողի հիմնական թեման տիրակալի գովերգումն էր: Ռոբային, որը ազատ էր մնացել այդ պարտադիր և ծրագրային բովանդակությունից, նույնպես մուտք գործեց արքունիք: Այն հաջողություն էր բերում բանաստեղծին իր հանպատրաստի բնույթով՝ ճկունորեն ու հրատապ արձագանքելով գիշերային խրախճանքներին և արքունիքի իրադարձություններին: Օրինակ, հայտնի է, որ մի սրամիտ քառյակի համար շահ Սանջարը իր արքունական բանաստեղծ Ազրադիի բերանը լցրել է ոսկեդրամներով: Այնուհանդերձ քառյակի հիմնական թեման միշտ եղել և մնում է սերը, որը ստանում է տարբեր երանգավորում, սիրո ցավ, սիրո ուրախություն (սակավ) և սիրուհու արտաքինի նկարագրություն՝ արքունիքին վայել շքեղ պատկերներով և հղկված ոճով: Այդ քառյակներում սիրելիի կերպարը ձևավորվում է նրա դիմանկարով: Ամեն մի համեմատություն կամ այլաբանություն վերջինիս հաղորդում է նոր հատկանիշ, նոր բնորոշում: Բնությունը այդ պատկերների համակար-

գը սնող աղբյուրն է: Միջնադարյան բանաստեղծի գեղեցիկի չափանիշները դուրս չեն գալիս բնության հայեցման և նրան նմանվելու սահմաններից:

Այդ բանաստեղծությունները հաճախ զուրկ են տողերի տրամաբանական կապից, հետևողական սյուժեից, ակնհայտ է պատկերների միտումնավոր գեղագիտականացում, նրանցում բացակայում են հոգեբանացումը, զգացմունքների բնականությունը և անմիջականությունը:

Գեղեցկության ծով ես, հոգիս, մարջանով է շուրթդ շիկնել,
Ատամների ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ,
Հոնքդ նավ է, իսկ ճակատիդ այդ լուսեղեն խորշումն՝ ալիք,
Պարանոցդ՝ ջրապտույտ, և աչքերդ՝ փոթորիկներ:

(թարգմ. Վ. Դավթյանի)

Ռուդաբիի այս քառյակի գեղարվեստական արժեքը ծովային տարերքի պատկերների միտումնավոր խտացումն է (ծով, մարջան, մարգարիտ, նավ, ալիք, ջրապտույտ, փոթորիկ):

Քառյակի այս տեսակը օրինակ ծառայեց 11-րդ դարի արքունական պոետներին (Օնսորի, Ֆարրոխի) ստեղծելու քառյակների շարք դեմքի, խոպոպի, վարսերի բարդ, երբեմն վերծանում պահանջող նկարագրությամբ: Ահա Օնսորիի մի քառյակը՝

Ջուրն ու կրակը իրար հետ ու նույն դեմքին՝ հվ է տեսել,
Մութ գիշերը հյուսված լույսին ու ցերեկին, հվ է տեսել,

Անմեղությունն ընդելուզված կուարով մեղքի՝ ով է տեսել,
Հավատը և անհավատը իրար կողքի՝ ով է տեսել:

(թարգմ. Ս. Կապուտիկյանի)

Դեմքի (լույս, ցերեկ, անմեղություն, հավատ) և վարսերի (գիշեր, կուպր, անհավատ) գունային հակադրությունն այնքան է անհամատեղելի, որքան թվարկված հակաթեզերը:

Սրանք այն մոնոթեմատիկ, դեկորատիվ քառյակի նմուշներից են, որտեղ հոգեկան ապրումներ կամ չեն դրսևորվում, կամ էլ լավագույն դեպքում քնարական հերոսի անմխիթար վիճակը բացահայտվում է սահմանափակ հիպերբոլիկ պատկերներով և հաճախ ցավային-օրգանական զգացումներով (այրվում եմ, խորովվում եմ և այլն): Այս տիպի քառյակների բովանդակությունը միանշանակ է՝ սիրուհին գեղեցիկ է:

Այդ քառյակներում գեղարվեստական արտահայտչամիջոցները արտացոլում են շքեղության առարկաներ. նրբաճաշակ պատկերները, բարդ ալլաբանությունները, տեսողական համեմատությունները ստեղծում են գույնի, բույրի, փայլի, ազնվականի պերճաշուք կենցաղի (թագ, գահ, սուտակ, մարգարիտ և այլն) աշխարհ:

Դեկորատիվ-նկարագրական քառյակին զուգընթաց զարգանում է նաև հոգեբանական քառյակը, որի ամենաբնորոշ հատկանիշը դրամատիզմն է. Ռուդաբիի սիրային քառյակներում այն արտահայտում է անպատասխան սեր, խոհական-փիլիսոփայական քառյակներում՝ մարդու նկատմամբ ճակատագրի անվերապահ հաղթանակ: Ռուդաբիի փիլիսոփայական քառյակը զարգացման մի քանի փուլ պետք է անցնի, մինչև խայամյան ռացիոնալիստական և պաթետիկ աստվածուրացություն: Ռուդաբիի փիլի-

սովորությունը չի հեռանում միջնադարյան ֆատալիզմից, որտեղ քնարական հերոսը սոսկ հայեցող է:

Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի փնտրիր, գտնել չես կարող,
Ուռենուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,
Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,
Սիրտ իմ, հող դարձիր ու քամու նման անցիր աշխարհով:

(թարգմ. Վ. Դավթյանի)

Կյանքը անբերրի այգի է՝ երկու դարպասով, մեկով մտնում ես կյանքի տենչով, հապաղում, սակայն երբ ժամդ եկավ, մյուսով գնում հողմի նման: Քառյակն ունի յուրահատուկ կառուցվածք՝ երկու գործող անձ (քնարական հերոս և ճակատագիր), երկու դարպաս (կյանք և մահ), հին հունական և արևելյան միջնադարյան փիլիսոփայության չորս առաջնային տարրերից երկուսը՝ հող և հողմ: Հակված ենք կարծելու, որ Ռուդաքիի հոռետեսական տրամադրությունները կրում են ինքնակենսագրական նրբերանգ: Հետագայում արքունական պոետները իրենց կյանքի արժանահիշատակ դեպքերը, առօրյա հոգսերը ուղղակիորեն փոխադրում էին քառյակ՝ ստեղծելով նոր՝ վավերագրական քառյակի տեսակ:

10-12-րդ դդ. պարսկական պոեզիայում բուռն զարգացում ապրեց արքունական-կամերային ներբողը (ղասիդե): Սուլթան Մահմուդ Ղազնավին, ակադեմիկոս Ե. Է. Բերտեյսի արտահայտությամբ՝ «բիրտ ու հասարակ թյուրքը», ի դեմս արքունական պոետների, հեռատեսորեն գնահատեց իր քաղաքականության քարոզիչներին և ջատագովներին, ստեղծեց արքունական բանաստեղծների ինստիտուտ, «պոետների արքայի» գլխավորությամբ, որը փաստորեն իր ստորադրյալների բանաստեղծություն-

ների օրինականացված գրաքննիչն էր: Ներքողը ազդեց նաև քառյակի ոճի և բովանդակության վրա: Օնսորիի, Մանուչեհրիի և մյուսների քառյակները հիմնականում կորցրին ժողովրդական քառյակին բնորոշ պարզությունը և զգացմունքայնությունը:

12-րդ դարում հետաքրքրությունը քառյակի նկատմամբ անսովոր կերպով աճեց: Այդ ժամանակաշրջանի պոետների քառյակները հիմնականում արքունական քառյակի ավանդույթների շարունակությունն էին: Դանդաղ փոխվում էր սիրային քառյակի պատկերների համակարգը, մշտական մակդիրներին փոխարինելու էին գալիս նոր, արհեստական, իրականությունից հեռու մակդիրներ և համեմատություններ: Այլաբանությունները դառնում էին բարդ, դժվար վերծանելի:

Ո՛վ Խաղանի, գերի դարձար հուր ու ոսկուց սերված յարին,
Նա սրտի տեղ քուրա ունի ու զուտ ոսկուց ձուլված մարմին,
Քուրայի մեջ ձուլվող ոսկին զարմանալի բան չէ բնավ,
Ոսկու խորքում վառվող քուրա - սա է իրոք զարմանալին:

(թարգմ. Վ. Դավթյանի)

Քառյակն անվերապահորեն հաստատվում էր վերնախավային ժանրային ձևերի համակարգում և հաճախ դառնում հավատարմական զգացմունքների արտահայտիչ, շողոքորթության գործիք: Ահա մի բնորոշ օրինակ Մոեզզիից.

Թող ձմեռ դառնա գարունը չարի,
Ձեռքիդ թող լինի խոպուպը յարի,

Թշնամուդ աչքը կարմրի լյարդի պես,

Բախտը ուղեկից դառնա քեզ բարի:

(թարգմ. Վ. Բաբայանի)

Չնայած ներբող-քառյակը գայթակղում էր սուլթանից մեծ նվեր ստանալու ակնկալությամբ, այնուհանդերձ, նույնիսկ հիրավի ներբողագիր բանաստեղծների դիվաններում սիրային-քնարական քառյակը միշտ գերակշռում է:

Պալատական խարդավանքի և բանսարկությունների միջավայրում անպատեհ խոսքը կարող էր ողբերգական վախճան ունենալ: Զնդանում փտելու, արքունիքից հեռացվելու և նույնիսկ կյանքից զրկվելու սարսափը օր ու գիշեր ուղեկցում էր բանաստեղծին: Ներբողի կեղծ ու խիստ ծրագրային «աշխատանքից» հոգնած բանաստեղծը հաճախ քառյակում էր արտահայտում իր ապրումները, հույզերը: Թախծի պահին գրված շատ քառյակներ հաղթահարելով ժամանակի ավերիչ ուժը, մեզ են հասցրել այդ բանաստեղծների նվիրական զգացմունքները ու նրանց տանջող գաղտնի մտքերը, որոնք ժամանակին գուցե խնամքով թաքցվել են մեկենասներից և ժամանակակիցներից:

Քառյակ-ներբողի տրամաբանական հակադրությունը քառյակ-բողոքն է, որը կատարելության հասավ Մասուդ Սաադ Սալմանի ստեղծագործությունում: Այդ քառյակները զգացմունքների մեծ լիցք են պարունակում, բարդ և զարդաքանդակ պատկերներից զուրկ են, հիմնականում հանգավորվում են բոլոր տողերը, որը նրանց հաղորդում է ժողովրդական քառյակի մեղեդայնությունը և պարզությունը:

Իմ թշնամին գիշեր - ցերեկ հաղթում է ինձ, ով թագավոր,
Իմ բարեկամն ինձնից փախչում, ատում է ինձ, ով թագավոր,
Իմ հրից ու բոցից անգամ կայծ չի թռչում, ով թագավոր,
Ինձ նմանը ինչպես ելնի զնդան - բանտից, ով թագավոր:

(թարգմ. Գ. Էմինի)

Քառյակը զարգանում էր, ընդգրկելով նորանոր մոտիվներ
և թեմաներ:

Պալատական միջավայրում պարսկական բանաստեղծությունը
զուտ աշխարհիկ բնույթ էր կրում և զուրկ էր մահմեդական
մոլեռանդությունից: Ավելին՝ սիրո պաշտամունքը հանգեցնում էր
կրոնի նսեմացման, սիրուհին հասցվում էր աստվածային բարձ-
րության, մահմեդական սրբավայրը հանուն սիրուհու փոխվում էր
քրիստոնեական կամ հեթանոսական տաճարով: Դիցաբանությու-
նից, Ղարանից բերված ուղղակի և զուգորդական մեջբերումները
հետապնդում են զուտ գեղագիտական նպատակ և հեռու են
կրոնական ըմբռնումից:

Ինձ Քաբեից* հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,
Ո՛չ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար,
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դռանն արել,
Սակայն, սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար:

(թարգմ. Վ. Դավթյանի)

10-15-րդ դդ. մեզ հասած պարսկական քառյակները ընդգծում
են քառյակի զարգացման մի քանի ուղղություն. արքունական,
փիլիսոփայական (նաև սուֆիական) և քաղաքային: Քառյակի

տարբեր ուղղությունները իրարից մեկուսացված չեն եղել: Նրանց մեջ տեղի է ունեցել անընդհատ փոխանակություն: Վերնախավի ներկայացուցիչները հաճույքով են հետևել մրցակցող պոետների ըմբոստ և հաճախ կոպիտ երգիծանքին, գնահատելով սուր միտքը, անսպասելի համեմատությունը, հանգի բարդությունը: Հայտնի են, օրինակ, Սանայիի, Սուզանիի և ուրիշների գրական մրցամարտերը: Քառյակի ներթափանցումը հասարակության տարբեր խավեր, արքունիք՝ որպես սալոնային զվարճալիք կամ ներբող, մտավորականության ոլորտը՝ որպես փիլիսոփայական մտքի գեղարվեստական մարմնավորում (Խայամ, Ռումի և այլն) և քաղաքային թաղամասեր՝ հիմնականում պոետ-արհեստավորների ստեղծագործության շնորհիվ, վկայում է այն մասին, որ արդեն 12-րդ դարում քառյակը ամենաժողովրդական ժանրային ձևն էր և կատարում էր ոչ միայն գեղագիտական, այլև գաղափարախոսական դեր: Ժողովրդական տարրերի խորացումը, առտնի կենցաղային տեսարանների նկարագրությունը, նորանոր կերպարների ի հայտ գալը (մսավաճառ, ներկարար, ռենդ*), պատկերների և ոճի պարզեցումը հանգեցրին նրան, որ հղկված արքունական և քաղաքային քառյակի հակադրությունը ավելի ցայտուն և ընդգծված դարձավ: Ոմանց մոտ դա քաղաքային ինքնագիտակցության արտահայտություն էր (Մահսաթի), ոմանց մոտ էլ՝ արհեստավորական խավերի հետ ունեցած շփման արդյունք (Սուզանի): Սիրո թեման դուրս էր գալիս ավանդական շրջանակներից և ստանում նոր նրբերանգ: Իդեալականացումը և սեթևեթ ոճը տեղի էին տալիս ռեալիստական տարրերի և պարզության առջև: Մահսաթիի քառյակը դրա վառ օրինակն է.

Ղասաբս ըստ իր աղաթ - արհեստի,

Ինձ գետնեց, մորթեց, սպանեց էլի,

Հետո գլուխը դրեց ծնկներին,

Թողեց շունչ քաշեմ, որ մաշկս հանի:

(թարգմ. Ա. Սահակյանի)

Տարբեր խավերի ներկայացուցիչների մուտքը քառյակ և նրանց առավել շարժունությունը ծավալում է ոչ բարդ պատմություն, ստեղծում իրավիճակ, որը քառյակը մոտեցնում է էպիկական ժանրին: Բերված օրինակը տղամարդու կոպիտ ուժի ցույց է սիրո մեջ, որը սիրային քառյակի ավանդույթներին օտար երեւոյթ էր: Այստեղ հնավանդ «սիրելի-սիրահար-մահ» հիմքի վրա ձևավորվում են նոր պատկերներ: Անհերքելի է այն հանգամանքը, որ նոր անունների, վավերագրական փաստերի (այն ամենի, ինչը կազմում է միջնադարյան չգիտակցված ռեալիզմի ոգին) ներթափանցումը քառյակ նվազեցնում էր նրանում առկա քնարական լիցքը:

Արքունական և քաղաքային քառյակի յուրովի սինթեզն են Սաադիի և Հաֆեզի քառյակները: Այնտեղ հղկված է ժողովրդական քառյակի ռամկական ոճը, և բարոյախրատական ու իմաստասիրական միտումները գերակշռում են. նրանց բնորոշ են զվարճալի, կենցաղային տեսարանների նկարագրություն, կերպարների բազմազանություն, լեզվաոճական միջոցների պարզություն և այլն: Այս քառյակների համադրումը արքունական քառյակի հետ ցույց է տալիս ժողովրդական և վերնախավային քառյակի զարգացման ուղղությունների սկզբունքային տարբերությունը:

Քառյակը գաղափարախոսական հուժկու գործիք էր սուֆիզմի համար:

Սուֆիզմը կրոնա-միստիկական ուսմունք էր, որը մեծ տարածում ստացավ հատկապես 11-12-րդ դդ. և թափանցեց հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Սուֆիզմի հիմքում ընկած է նեոպլատոնականների կողմից առաջ քաշված էմանացիայի (արտահեղում) գաղափարը, ըստ որի՝ աշխարհը և մեր ամբողջ շրջապատը համաշխարհային ոգու (աստծո) մի մասնիկն է, որը նրան միանալու հարատև ձգտումն ունի: Սուֆիզմի գաղափարախոսությանը բնորոշ են նաև ասկետիզմը, միստիցիզմը, որոնց արտահայտությունը անհատականությունը սպանելու ձգտումն է և վերջին հաշվով էքստազային միացումը աստծո հետ, որին հետևում էր հոգեպայծառության պահը (ֆանա): Այստեղից էլ՝ մոմի և ցայգաթիթեռի խորհրդանշական սիրային խաղի շարքը Քամալ ադ-Դին Իսպահանցու և ուրիշների քառյակներում:

Հոգիս վեր է թռչում այրվող մոմի նման,

Ապա վար իջնում հալվող մոմի նման,

Թե ձուլվել ես ուզում ոնց թիթեռը մոմին,

Արի, քեզ եմ տենչում մարվող մոմի նման:

(թարգմ. Ա. Սահակյանի)

Դրանք պետք է մեկնաբանել որպես ԵՍ-ի, անհատականության ոչնչացում, բոլոր միստիկական հավատների համար բնորոշ աստծո հետ իռացիոնալ շփման ձգտում: Երբ ցայգաթիթեռը այրվում է մոմի կրակի վրա, նա ապրում է սիրային էքստազի պահ, ձուլվում է նրան: Ահա այսպես, սովորական, ավանդական սիրային պատկերները բարձրանում են փիլիսոփայական կատեգորիաների մակարդակի, որտեղ փոխաբերական իմաստով գինին աստծո սիրով արբենալու միջոց է, սիրուհին՝ համաշխարհային ոգին,

սիրուհու դեմքը աստվածային անփոփոխ լույսն է, խոպոպները՝
այդ լույսի փոփոխվող արտահայտությունները և այլն: Ահա
օրինակներ Ռումիի, Սանայիի, Բաբա Թահերի և Ջամիի քառ-
յակներից.

Ես արբած եմ, բայց դա կարմիր գինին չէ,
Իմ մեջ ուրիշ արբեցում է, գինին չէ,
Դու եկել ես, որ իմ գինին ցրիվ տաս,
Բայց հոգուս մեջ քո իմացած գինին չէ:

(թարգմ. Ա. Սահակյանի)

Սուֆի բանաստեղծները Գրիգոր Նարեկացու նման ազդարա-
րում են աստծո հետ հաղորդակցվելու և այդ միջոցով գեղեցիկը
և բարին ճանաչելու հումանիստական գաղափարը.

Ես նա եմ, որ չունի մարմին, չունի ոչ սիրտ, ոչ հոգի,
Գոյության բյուր նշաններից՝ ոչ մի նշան հավաստի,
Եվ որպեսզի դուք հավատաք, որ ես չկամ, իմացեք,
Այս ստվերն էլ ինձանից չէ, այլ զգեստից իմ հագի:

(թարգմ. Վ. Բաբայանի)

Հոգեպայծառության պահին խզվում են բոլոր կապերը նյու-
թական աշխարհի հետ և ֆիզիկապես ոչնչացած անհատը վե-
րածնվում է որպես աստված: Հասկանալի է, որ պանթեիստական
այս գաղափարախոսությունը հիմքում հակադիր էր ուղղափառ
իսլամի մոնոթեիստական այն հիմնական գաղափարին, որ ալլա-
հը միասնական է:

Հոգու կատարելագործումը հետևողականորեն մարդուն մոտեցնում է աստծուն: Այդ ճանաչողության ճանապարհին (թարի-ղա) սուֆին մաքրում է իր սիրտը, որը աստծո նկատմամբ սիրո հայելին է:

Թե որ սիրտը սիրուհի է, հապա ձրն է սիրուհին,
Թե սիրուհին սիրտ է, հապա էլ ինչ անուն տանք սրտին,
Սիրտ - սիրուհի խառնվել են, ձուլվել հոգու խորքերում,
Սիրտս ձրն է, սերս՝ որը, ինչպես պարզեմ վերջստին:


(թարգմ. Ս. Կապուտիկյանի)

Ապակիներ են գույնզգույն գաղափարներն երևի,
Որոնց վրա լույսն է ընկնում գոյության վառ արևի,
Լույսը նույնն է, բայց ամեն մի ապակու մեջ գունավոր
Դեղին, կարմիր և կամ կապույտ գույն է առնում յուրովի:

(թարգմ. Գ. Հմինի)

Գաղափարները գունավոր ապակիներ են, որոնք պայծառու-թյուն են ստանում գոյության միակ՝ աստվածային լույսից: Մըշ-տապես անփոփոխ է աստվածային լույսը, սակայն բազմազան են նրա կոնկրետ արտահայտությունները: Որքան մաքուր է ապակին, այնքան անբասիր է աստվածային լույսի բեկումը:

Սուֆիզիմի պարագլուխներից մեկը՝ Հոսեին Հալաջը, գլխատ-վել է հոգեպայծառության պահին ասված «ես աստված եմ» արտահայտության համար: Աստծո հետ նույնանալը բողոք և ցա-սում էր առաջացնում ուղղափառ հոգևորականների մեջ, որոնք



հետապնդում էին սուֆիներին, մեղադրելով նրանց աստվածուրացության և հերետիկոսության մեջ: Սուֆիական շատ եղբայրություններ և համայնքներ բացարձակապես չէին ենթարկվում իշխանություններին: Իր հիմքում վաղ սուֆիզմը միջնադարյան հակաավատատիրական ընդդիմադիր շարժում էր ամբողջ մահմեդական արևելքում, իսկ հետագայում՝ նաև Իսպանիայում և Բալկաններում:

Սուֆիզմը ամենից վառ հասարակական հնչեղություն և գեղարվեստական մարմնավորում ստացավ պոեզիայում: Սուֆիները (նաև դերվիշ*, ռենդ*) թափառում էին միջնադարյան արևելքի քաղաքներում և ծայրամասերում, տարածում իրենց գաղափարները մատչելի ձևով: Սիրված և ժողովրդի սրտին մոտ քառյակը նույնպես ծառայեց այդ նպատակին: Սուֆիական քառյակին հատուկ է լեզվառճական միջոցների և պատկերների պարզությունը: Պոեզիայում սուֆիների կողմից մշակված խորհրդանիշները բանաստեղծությունը երկիմաստ մեկնաբանելու հնարավորություն են ընձեռում: Հեղինակի գաղափարախոսությանը անտեղյակ ընթերցողը չի տարբերի սովորական սիրային քառյակը սուֆիականից: Մինչև այժմ չկան հեղինակներին տարբերելու հստակ չափանիշներ, բացի մեզ հասած միջնադարյան ծաղկաքաղ-ժողովածուների (անթուղգիա) հեղինակների և պոեզիայի մեկնաբանների գնահատականից, որոնք նույնպես զերծ չէին սխալվելու և ծայրահեղությունների մեջ ընկնելու գայթակղությունից: Ուստի հարկավոր չէ ենթատեքստ փնտրել սուֆի բանաստեղծների քառյակներում, մանավանդ, որ ամենայն հավանականությամբ դրանց մեջ կան նաև աշխարհիկ զգացմունքների լիցք պարունակող բազմաթիվ քառյակներ:

Շատ բանաստեղծներ ժամանակավորապես տուրք են տվել տարածված այդ ուսմունքին կամ էլ նմանակել են սուֆի պոետ-

ներին, օգտագործելով նրանց պոեզիային բնորոշ սուֆիական խորհրդանիշներ և տերմիններ, իրականում չկիսելով նրանց գաղափարները:

Քառյակի զարգացման պատմության մեջ Օմար Խայամի յտեղծագործությունը նոր որակ է, թռիչք՝ թեմաների բազմազանությունից դեպի փիլիսոփայական ազատախոհության ոլորտ: Ժանրային ձևի բարձրագույն կետը, որպիսին իրավամբ համարվում են Խայամի քառյակները, ենթադրում է երկու էական հատկանիշ: Առաջին՝ ժառանգականություն, նախորդների նվաճումների որոշակի կատարելագործում և երկրորդ՝ մի նոր, արմատական, որակական փոփոխություն: Երկու հատկանիշն էլ բնորոշ են Խայամի քառյակներին:

Խայամյան և սուֆիական քառյակները առաջին հայացքից ներդաշնակ են իրենց փիլիսոփայական երանգով, փոխաբերական իմաստով, արտահայտչամիջոցների պարզությամբ: Նմանօրինակ ընդհանրությունները շատ մեկնաբանների հանգեցրել են այն կարծիքին, թե Խայամի քառյակները կրում են սուֆիական բնույթ: Սակայն Խայամի փիլիսոփայական երկերում արտահայտած գաղափարների ռևոլյուցիոնարությունը ապացուցում է, որ նրան վերագրվող քառյակները չեն կարող լինել սուֆիական քառյակի զարգացման շարունակությունը և որ այդօրինակ եզրակացությունները անհիմն են:

Խայամի կենսագրությունից հայտնի է, որ պաշտոնական իսլամը Խայամին չի համարել սուֆի ոչ կյանքի ընթացքում, ոչ էլ մահվանից հետո, և որ խայամյան քառյակները ոչ միայն անընդունելի են եղել իսլամական գրաքննությանը, այլև փաստորեն դուրս են մղվել պարսկական գրականությունից և միայն հանրաճանաչություն ստացել եվրոպացիների կողմից (էդ. Ֆիցջերալդ, 19-րդ դ.) «հայտնաբերվելուց» հետո: Ո՞րն էր դրա պատճառը:

13-րդ դարի արաբ հեղինակ Ալ-Բիֆթին որոշ կենսագրական տեղեկություններ է հաղորդում Խայամի մասին. «Այն ժամանակ, երբ նրա ժամանակակիցները սեւացրին նրա հավատը և բացահայտեցին նրա գաղտնիքները, որոնք նա թաքցնում էր, նա վախեցավ իր արյան համար և իր լեզվի ու գրչի սանձերը ձգելով ուխտագնացություն կատարեց Մեքքա. վախից, և ոչ թե աստվածավախությունից...: Երբ նա ժամանեց Բաղդադ, նրա մոտ շտապեցին հին գիտությունների (ընդգծումն իմն է՝ Ա. Կ.) գծով նրա համախոհները, բայց նա դուռը փակեց նրանց առջև...»:

Բացառված չէ նաև այլ մեկնակետ: Խայամի քառյակները իրենց ռացիոնալիստական ոգով, ձևակերպումների ուղղամտությամբ և գեղարվեստական արտահայտչամիջոցների սակավությամբ դուրս էին գալիս միջնադարյան ավանդական պերճախոսության կանոնների շրջանակներից, հետևաբար չէին գնահատվում սխոլաստիկ պոետիկայի գիտականների կողմից:

Հայտնի է, որ Խայամը փիլիսոփա էր, ճշգրիտ գիտությունների (մաթեմատիկա, աստղագիտություն) բնագավառի գիտնական: Որպես փիլիսոփա Խայամն իրեն համարում էր Էբն-Սինայի (Ավիցեննա), Ալ-Ֆարաբիի ռացիոնալիստական միտումների հետևորդ: Այդ միտումները անվերապահորեն դիմակայում էին սուֆիական-փիլիսոփայական աշխարհայացքին, որի ներկայացուցիչները (Սանայի, Ռումի, Ջամի) սուֆիզմի շրջանակներում արված ամենաըմբոստ ազատախոհության կոչերով հանդերձ չէին համատեղում իրենց կրոնափիլիսոփայական որոնումները գիտականի հետ:

Այսպիսով, Խայամը իր աշխարհայացքով սուֆի չէր, չնայած չի բացառվում որոշ միստիկական տարրերի գոյությունը նրա քառյակներում: Խայամի քառյակների պատկանելությունը որոշելու և ճշտելու բազմաթիվ, համարյա անօգուտ փորձերից հետո՝ ըն-

դուևված է դրանք անվանել «խայամյան»։ «Խայամյան» քառ-
յակների վերլուծությունը հաճախակի ի հայտ է բերում նրանց
գաղափարական բովանդակության հակասությունները։ Դա բա-
ցատրվում է նրանով, որ ինչպես ասել է չեխ արևելագետ Յան
Ռիպկան, «Մի ազատամիտ չէ իր սիրտը թեթևացրել քառյակով,
որը գնացել է շրջելու Խայամի անունով»։ Ինչևէ, գրական փաստի
գոյությունը անառարկելի է։

Խայամյան քառյակները հիրավի ռացիոնալիստական-փիլիսո-
փայական քառյակի նոր որակ են։ Օրինակ, հին հունական փիլի-
սոփաների, մասնավորապես Պլատոնի այն գաղափարը, որ մար-
դիկ հիմնականում տիկնիկներ են և մասամբ են հաղորդակից
«ձշմարտությանը», Խայամյան քառյակներում ստացել է պատ-
կերավոր տարբերակում.

Տիկնիկ ենք մենք, ճակատագիրը՝ դերասան,
Պատկեր չէ սա, այլ հավաստի և իրական,
Մի քանի օր կխաղանք այս բեմ աշխարհում,
Մինչ մեզ նորից նետեն սնդուկն անեության։

(թարգմ. Գ. Էմինի)

Խայամի փիլիսոփայական երկերում արտահայտված այն թե-
զը, որ երկինքը և լուսատուները չեն ստեղծվում և չեն ոչնչանում՝
հաստատվում է քառյակների շարքում։ Աշխարհի հարատևության
ըմբռնումից բխում է մատերիայի անվերջ պտույտի օրինաչա-
փությունը, որն իր արտահայտությունն է ստացել բրուտի և կավի
մասին քառյակների շարքում։ Լռակյաց բրուտի կերպարը մարմ-
նավորում է երկնային բնակչին, որը մարդկային փոշին կժի
վերածվելու կենդանի վկան է։

Սոցիալական շերտավորման հզոր կարգավորիչն են մահը և գինին: Գինու թեման (խամրիյաթ) խայամյան քառյակների կարևոր մասն է կազմում: Գինու գովքը հեռու է խմիչքի նկատմամբ կիրք լինելուց: Դա կոչ է աշխարհիկ հաճույքների՝ ընդվզում մահմեդական քարոզների և շարիաթի օրենքների դեմ: Այդ քառյակները հագեցած են սոցիալական երգիծանքի ոգով, որը նույնպես նոր երևույթ էր քառյակում:

Նա, ով խելքով առաջնորդվի այս աշխարհում,

Միևնույն է՝ թե... եզ կթի այս աշխարհում.

Նախընտրելի չէ հիմարի շորեր հագնի,

Նույն գնով են երբ սոխն ու խելքը վաճառում:

(թարգմ. Գ. Էմինի)

Սա առաջին հայացքից «Հիմարության գովք» է, բանականությունից և խելքից հրաժարվելու կոչ: Սակայն երրորդ տողի նուրբ հեգնանքը վերջաբանում փոխվում է սուր երգիծանքի, դիպուկ բնութագրելով խայամյան ժամանակների կենսաձևի բարոյական հիմքը և չափանիշները՝ «խելքի դիմաց սոխ, իսկ հիմարության՝ ոսկի»: Հետաքրքիր է խայամյան քնարական հերոսի և աստծո (ճակատագրի) բախումը: Ռուդաբիի բարոյա-խրատական մի քանի քառյակում անկախ անհատի կերպարը բնորոշ չէ նրա արտահայտած ֆատալիզմի գաղափարներին և իրականում կենսափիլիսոփայական սկզբունքների միասնությունն չի արտահայտում, իսկ խայամյան քնարական հերոսի և հեղինակային «ես»-ի նույնությունը ակնհայտ է: Որպես կանոն խայամյան

հերոսը ըմբոստ մենախոս է: Խայամը չի շրջանցել բարոյագիտության հարցերը: Բազմիցս շեշտվում է չարիքի ստեղծման գործում աստծո պատասխանատվության խնդիրը:

Խայամը հակասական է: Մի կողմից նա դուրս է գալիս միջնադարյան մտածողության սահմաններից և հասնում չգիտակցված աթեիզմի, իսկ մյուս կողմից արտահայտում իր միջնադարյան մտածողությունը: Խայամյան իրարամերժ գաղափարների, անլուծելի ճշմարտությունների տանջալից փնտրտուքի փայլուն հանրագումարն է հետևյալ քառյակը.

Մի ձեռքին՝ գինի, մյուսում՝ Ղորան,
Մերթ հարամ ենք մենք, մերթ՝ հալալ միայն,
Այսպես, փիրուզի այս երկնքի տակ,
Ոչ թունդ գյավուր ենք, ոչ զուտ մուսուլման:

(թարգմ. Գ. Էմինի)

Հնչյունային և ռիթմամեղեդային (ալիտերացիա, ասոնանս, կրկնություն և այլն) հնարանքները փոխարինելու են գալիս նախորդների բազմերանգ և նրբաճաշակ պատկերների համակարգին և մեղմում են խայամյան անպաճուլճ և ռացիոնալիստական ոճը:

*

* *

Հայ գեղարվեստական մտքին պարսկական դասական քառյակը վաղուց է ծանոթ: Հայատառ պարսկերեն քառյակի առաջին թարգմանությունը պատկանում է Ֆրիկին (13-րդ դ.), որը չի նշել

թարգմանված քառյակի պատկանելությունը, դնելով ապագա հետազոտողներին (Հ. Թիրյաքյան, Հ. Փափազյան, Վ. Ավթանդիլյան, Ա. Շահուվարյան, Բ. Չուգասզյան, Հ. Մովսիսյան) բազմաթիվ դժվարությունների առջև: Այդ քառյակի բնագրի տարբերակը հանգրվանել է տարբեր հեղինակների դիվաններում և ամենայն հավանականությամբ «թափառող» քառյակ է: Ահա Ֆրիկի թարգմանությունը, որի ձեռագիրը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան ձեռագրատանը.

Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղեկն այլ իրք չի զենեն,
Զնիխարն ու զվատուն, եղբայրք աստուծոյ զայն երբ դբլեն
Թո ղորդ սիրելի ես դու, հանց արա, որ զքեզ չիտեն,
Գիտեմ անպիտան դառնայ այն մատաղն, որ զինքն չը զենեն:

Խաղանիի մի քանի քառյակ թարգմանել է Հ. Թումանյանը: Այդ թարգմանությունների համադրումը բնագրի հետ ցույց է տալիս ոչ միայն քառյակի ժանրային ձևի օրենքների բարեխիղճ պահպանումը, այլև քառյակի գաղափարական և բանաստեղծական ոգու ճշգրիտ վերարտադրումը: Դրանք հայ թարգմանական արվեստի դասական նմուշներ են: Հետագայում Խաղանիի քառյակների ընտրանին լույս է տեսել Երևանում (թարգմ. Ս. Ումառյան, 1965): Առավել ուշադրության են արժանացել Օմար Խայամի քառյակները, որոնք հրատարակվել են Փարիզում [թարգմ. Գ. Փառնակ, 1904, Լևոն Մեսրոպ, 1923, Արամ Չարըզ Վտարանդի, 1934], Թեհրանում [թարգմ. Սիմեոն Բազեն, 1950, Հ. Միրզայան, 1963, Ա. Հովհաննիսյան, 1965, Ա. Մինասյան, 1978], Բեյրութում [թարգմ. Զ. Նալբանդյան, 1976], Լոս-Անջելոսում [թարգմ. Ս. Չըթչյան, 1953], Պոլսում [թարգմ. Վ. Մաքսուդյան, 1922, Տեր-Սահակյան, 1922], Երևանում [թարգմ. Ա. Աթայան, 1959, Ս.

Ումառյան, 1971]: Բաբա Թահերի քառյակները թարգմանվել են թեհրանում [թարգմ. Ջ. Միրզայանց, 1923, Ռ. Լերահամյան, 1930], արևմտահայ և արևելահայ պարբերականներում:

Հաֆեզի քառյակները ներկայացվել են Պոլսում [թարգմ. Վ. Մաքսուդյան, 1922], թեհրանում [թարգմ. Ա. Մինասյան, 1976], երևանում [թարգմ. Ս. Ումառյան, 1957] և այլն:

Ներկա ժողովածուն մի համեստ փորձ է, ավելի ընդարձակ ներկայացնելու միջնադարյան պարսկա-տաջիկական այն դասականներին, որոնց քառյակները որոշակի նվաճում են նրա զարգացման ճանապարհին: Քառյակների նմուշները տալով ժամանակագրական կարգով, միաժամանակ ցանկացել ենք ցույց տալ քառյակի զարգացման փուլերը: Ներկա ժողովածուում նույն հեղինակին հիմնականում թարգմանել են տարբեր թարգմանիչներ, ուստի հարկ չենք համարել հետևել պարսկական դիվաններում քառյակի դասավորության սկզբունքին (հանգերի այբբենական կարգով):

Հայտնի է, որ ամեն մի թարգմանություն կրում է իր դարաշրջանի մտածողությունը, իր միջով անց է կացնում հոգևոր գանձերի ոգին: Կարծում ենք, որ քառյակների ներկա ժողովածուն՝ Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Գ. Էմինի, Վ. Բաբայանի, Ա. Սահակյանի թարգմանություններով, ավելի լայն պատկերացում կտա հին քաղաքակրթություն ունեցող մեր հարևան պարսիկ ժողովրդի պոեզիայի հարստության մասին, կնպաստի դրա նոր մեկնաբանմանը, ինչպես նաև դարավոր մշակույթ ունեցող երկու ժողովուրդների մերձեցմանը:

Գրքում տեղ են գտել զանազան տերմիններ և անձնանուններ, որոնք ժամանակին մուտք են գործել մեր լեզու առավելապես ռուսաց լեզվի միջնորդությամբ և որոշ դեպքերում ստացել ավանդույթի ուժ (գազել-ղազալ, քիթա-ղըթա, Խաքանի-Խաղանի

և այլն): Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մենք որպես սկզբունք ընդունել ենք բնագրի ուղղագրությունը, առավել ևս, որ մեր լեզվի հնչյունային հարուստ համակարգը ի վիճակի է տառադարձել դրանք, հարազատ մնալով բնագրին:

Վերջում ուզում ենք շնորհակալություն հայտնել ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Կովկասագիտության - Բյուզանդագիտության բաժնին, որտեղ կատարել ենք այս աշխատանքը:

ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԱՆ

ՌՈՒԴԱՔԻ



Վշտի տան մեջ հավետ փակված տոկացողը մենք ենք, որ կանք,
Այրվող սրտից անվերջ հորդող արցունք-ցողը մենք ենք, որ կանք.
Տանջանքի մեջ մի փշուր բախտ երազողը մենք ենք, որ կանք,
Եվ այս դաժան, այս անողոք բախտի զոհը մենք ենք, որ կանք:



Սիրտ, սա այգի չէ, պտուղ մի փնտրիր, գտնել չես կարող,
Ուռենուտ է սա, որ չի ծանրանում բերքով ու բարով,
Երկու դուռ ունի, իսկ այգեպանը հսկում է վերից,
Սիրտ իմ, հող դարձիր ու քամու նման անցիր աշխարհով...



Բախտի տվածով, սիրտ իմ, գոհացիր ու ապրիր ազատ,
Մերժիր կապ ու լուծ, հոգով զորացիր ու ապրիր ազատ,
Մի նայիր երբեք, թե հվ կա կյանքում քեզանից վերև,
Քեզանից ցածի հոգում խորացիր ու ապրիր ազատ:



Ինձ Քաբեից* հեռացրիր, եկեղեցու դուռը տարար,
Ո՛չ, ինձ նման այլ անհավատ դու չես գտնի երկրում արար,
Երկու հազար աղոթք եմ ես իմ սիրածի դռանն արել,
Սակայն, սեր իմ, ինձ դարձրիր այլ հավատի աղոթարար:



Հենց դեմս դրի սիրատենչ նամակն իմ սեր-լուսնյակի,
Արտասուքներիս աստղաբույլն օծեց շորերն իմ հագի,
Երբ գրիչ առա, որ պատասխանեմ, չիմացա, ավանդ,
Թե սիրտս ինչպե՞ս դնեմ արանքում իմ այդ նամակի...



Երբ իմ կարիքը չեն զգում մարդիկ, մոտս չեն գալիս,
Չեն խոսում, ես էլ իմ տենդի հետ եմ առնում ու տալիս,
Երբ մինչև անգամ հոգիս ելնում է, բերանս հասնում,
Ջուր տվող չկա, իմ հոգնած բիբեր, լոկ դուր եք լալիս...



Երբ անունդ են տալիս մի տեղ, իմ սրտի մեջ լույս է վառվում,
Բախտս իսկույն քո անունի շող ու շուքով է զարդարվում,
Բայց երբ հանկարծ խոսք են խոսում ու չեն անում գովքդ, հոգիս,
Վիշտն է իջնում սրտիս վրա, ու մշուշն է մտքիս փարվում:



Երբ մահանամ ես քո սիրուց, նկ, սիրելիս, նկ ինձ այցի,
Ե՛կ, տես մարմինն իմ տանջահար ու հասկացիր՝ որքան լացի,
Սնարիս մոտ նստիր մի պահ ու շուրթերով քո քնքշաթերթ
Ասա միայն. «Ավանդ, ես քեզ սպանեցի, բայց զղջացի»...



Այն կռվարար, վրիժառու գեղեցկուհուն որոնելով,
Չափչփեցինք աշխարհն արար, անցանք անթիվ ցամաք ու ծով,
Շատ հոգնեցին ոտքերը մեր, ձեռքերն այնքան տառապեցին,
Որ քարն առան ու մեր գլխին տվին ահեղ մի հարվածով:



Սիրո ճանապարհն արյունով լեցուն մի անդունդ ունի,
Եվ խորությունը հասնում է հազար - հազար կանգունի,
Լեյլու նմաններն քնչ գիտեն, ավանդ, մեր վերք ու վշտից,
Մեջնունը գիտե վիճակը խենթի ու ցավն անքունի'...



Քեզ բախտն սպանեց ու չամաչեց իր անգթությունից,
Սիրտը չփափկեց ու չմաքրվեց չարության թույնից,
Ու զարմանում եմ, որ հոգեառն այդ չամաչեց անգամ
Քո այդ երկնային, քո աստվածային գեղեցկությունից...



Քո անունը բացվող օրվա դրոշի պես է փողփողում².
 Ձեռքիդ գավը նորած լույսի արծաթով է, ասես, շողում,
 Բախտս նման, շատ է նման փոփոխական քո մտքերին,
 Իսկ իմ հացը՝ այն նվերին, որ աղքատին ես շնորհում:



Դու կարմիր վարդից գույն ես գողացել, բույր ես փախցրել,
 Գույնը՝ այտերիդ, բույրը՝ քո առատ վարսերին ցրել,
 Երբ լվացվում ես, քո վարդագույնից շիկնում է առուն,
 Երբ ծամդ ես քանդում, մուշկն* է սկսում բուրմունքն իր փռել...



Գեղեցկության ծով ես, հոգիս, մարջանով է շուրթդ շիկնել,
 Ատամներդ ծովից հանած մարգարիտի սուրբ հատիկներ,
 Հոնքդ նավ է, իսկ ճակատիդ այդ լուսեղեն խորշոմն՝ ալիք,
 Պարանոցդ՝ ջրապտույտ, և աչքերդ՝ փոթորիկներ...



Տանջված եմ խիստ...Խոպոպների միշտ թակարդ են իմ դեմ լարել,
Հնդկական կուռքն* իր նետի դեմ արնոտ սիրտս է թիրախ արել,
Ո՛վ քարոզիչ, խորհուրդների ինձ չտվին ոչ մի օգուտ,
Ու ես հիմա տուն եմ ավեր, որին հողմերն են ավերել...



Վարսերդ սահել քո գլխաշորի ծոպերի տակից
Եվ շոյում են մեղմ դեմքդ, որ ալ է անգամ սուտակից,
Քո ամեն մազից ասես վիրավոր մի սիրտ է կախված,
Ու մի հոգի է կախված խոպոպիդ ամեն օղակից:



Չէ, չի հագենում, դաժանությունն իր չունի վերջ ու ծայր,
Երբ նայում է ինձ, չեն արցունքոտվում աչքերը պայծառ,
Նա, իմ միակը, որին իմ կյանքից ավել եմ սիրում,
Հավատացեք ինձ, հազար թշնամուց առավել է չար...



Միրտ, գործերդ նրա ծամով ամուր կապված հանգույց դարձան,
 Մարմնիս բոլոր երակներում իմ տենչանքներն ընդարմացան,
 Միակ հույսս արցունքն էր իմ, որ նա տեսներ ու ինձ գթար,
 Բայց այդ գիշեր իմ կոկորդում, անարցունքներս էլ քարացան:



Իմ թարթիչներին արտասուքն ասես շար է գոհարի,
 Սրտիս գաղտնիքը շիկնեց վարդի պես, որ դեմքս այրի,
 Իմ այդ գաղտնիքը, որ պահում էի բոլորից թաքուն,
 Լաց ու կոծ դարձավ ու ականջն ընկավ արար աշխարհի:



Անջատման վշտից այրվում եմ, լալիս, փախավ իմ քունը,
 Բայց վիշտն այդ, զարմանք, դարձավ իմ միակ ուրախությունը,
 Ու միտք եմ անում, թե այսպիսին է անջատումը մեր,
 Հապա ինչպիսին կլինի ժամն այն, երբ գաս իմ տունը...



Թե վարսդ փռես, օրվա լույսն անգամ կարող է հանգել,
 Իսկ եթե հյուսես, դարձնես պիտի բազեի ճանկեր,
 Թե խոպոպների դարսեդարս անես, կթվա մարդկանց,
 Թե ալիք - ալիք Թարազի* մուշկն է այդպես հորձանքել:



Քամու ճամփին եմ, ասես, իմ սիրո կանթեղը վառել,
 Քանի որ հոգիս քո շողուն շուքից կարող է մարել,
 Սիրտս այրվում է, ծուխը բռնել է աշխարհը արար,
 Կեցցեն ռունգերդ, որ մինչև հիմա հոտը չեն առել...



Թե դու չերևաս, թող արեգակն էլ հուրն իր չվառի,
 Թե ինձ չշողաս, թող լուսընկան էլ վերում խավարի,
 Թե գաս, այդ պահին թող ոչ ոք կյանքում չլինի դժբախտ,
 Քո չեկած օրը՝ օր չէ, սիրելիս, բաժինն է մահի:



Եկավ... Ո՞վ՝ յարս: Ե՞րբ՝ լուսադեմին:
 Թշնամուց փախած: Հայրն է թշնամին:
 Մի համբույր տվի: Ո՞րտեղ՝ շուրթերին:
 Շուրթեր: Ո՞չ՝ հակինթ: Համը՝ շաքարի:



Բախտի չարխի պտույտը սխալ է հավետ,
 Խառնում է լավն ու վատը՝ ամեն պտույտի հետ:
 Գիշերս անցավ, խոսքս պրծավ, իսկ զառը ձեռքիս,
 Բայց չբերեց իմ բախտը՝ մի անգամ էլ գեր:



Թե կրքերին հաղթում ես, դու տղամարդ ես,
 Կույրին - խուլին հարգում ես, դու տղամարդ ես:
 Ով ընկածին խփում է՝ տղամարդ չէ նա,
 Երբ ընկածին օգնում ես, դու տղամարդ ես:



Կարգին չէինք հանդիպել, որ ինձ հուշ լինի,
 Սերդ չէի վայելել, որ ինձ ուժ լինի,
 Մեկ էլ հանկարծ երկնքից լսվեց հրաման՝
 Խմիր գավը բաժանման՝ թող անուշ լինի:



Քեզ սիրելուց - տանջվելուց՝ ոչ խելք մնաց, ոչ սիրտ,
 Քեզ տեսնելուց - մերժվելուց՝ ոչ երգ մնաց, ոչ սիրտ:
 Այդ ցավը, որ իմն է, տե՛ր, ցավ չէ՝ Ղաֆ* սարն է այդ,
 Սիրտդ, որ քոնն է, վաղուց քար է հանգած, ոչ սիրտ:



Սիրո եշխում, ոնց Ռուդաքին, մարմնից կշտացա,
 Արնաշաղախ արցունքներից նորից վշտացա,
 Վերջապես, երբ պահը եկավ տխուր անջատման,
 Դժոխքի մեջ ծանր խանդի հրից կոշտացա:



Սիրտս էժան ծախեցի, որ ինձ յարս նայեր,
Մի լավ համբույր քաղեցի, որ մի համբույր առներ:
Այո, եթե իմ սիրելին վաճառական լիներ,
Սիրո համար և համբույրի՝ սիրտս - կյանքս կառներ:



Հովսեփադեմ սիրուհիս խոցեց իմ սիրտը,
Եգիպտուհու մատի պես՝ կտրեց իմ սիրտը³,
Նախ համբույրով հմայեց, գերեց իմ սիրտը,
Հետո վշտի մեծ թիրախ արեց իմ սիրտը:

ՕՆԱՈՐԻ



Զուրն ու կրակը իրար հետ ու նույն դեմքին՝ ղվ է տեսել,
Մութ գիշերը հյուսված լույսին ու ցերեկին՝ ղվ է տեսել,
Անմեղությունն ընդելուզված կուպրով մեղքի՝ ղվ է տեսել,
Հավատը և անհավատը՝ իրար կողքի՝ ղվ է տեսել:



Փափուկ սամույրը քո կրծքի, քար սիրտդ չի փափկեցնի,
Դու և թութակ քաղցրալեզու, դու և հովազ վայրենի.
Ճենապակի դեմքիդ սևաթ խոպուպներն են խաղվտում,
Քո հայացքը մեռածին էլ գերեզմանից կհանի:



Ասացի թե՛ ինչո՞ւ եմ ես այսպես մթնած՝ ամպի պես,
Որովհետև, ասաց, դեմդ եմ ես մի բացված վարդի պես,
Ասացի թե՛ ես առանց քեզ ինչո՞ւ եմ միշտ վշտահար,
Որովհետև, ասաց, դու սոսկ մարմին ես, իսկ հոգին՝ ես:



Երբ որ ունեմ բարի անուն, վատի հետ ինչ գործ ունեմ,
Երբ ձիրք ունեմ, էլ աստծու դատի հետ ինչ գործ ունեմ,
Երբ տգեղն էլ լավ է թվում, ինչո՞ւ տենչամ գեղեցկին,
Երբ որ քիչն էլ հերիք է ինձ, շատի հետ ինչ գործ ունեմ:



Համ արծաթե մարմին ունես, համ էլ մազեր մշկաբույր,
Համ դեմք ունես մեղմ ու բարի, համ էլ անուն մի մաքուր.
Շուրթդ՝ գինի, խոպոպների որոգայթ է նրբացանց,
Խմեցի քո շուրթի գինին, ընկա ցանցդ սևաթույր:



Ես քեզ լուսին չեմ անվանում, պաշտելիս,
 Լուսինն է քո լուսյից առնում, պաշտելիս.
 Ես աշխարհի տերն եմ, իսկ իմ տերը՝ դու,
 Հրամանովդ է կյանքս ընթանում, պաշտելիս:



Քո այտերից վարդ է կաթում, իմ աչքերից՝ արցունքը,
 Ես այրվում եմ, խոպոպների ոլորաբոց խարույկ եմ.
 Վառվում եմ ես ու խորովվում այդ չմարող խարույկին,
 Անքուն եմ ես, աչքերդ եմ, որ անուշ քնի ակունք եմ:



Ասի՝ իմ կուռք, զբաղմունքդ ինչ է. «տանջելը» - ասաց.
 Նկատում ես տանջվողներին, ասաց «օ, ի՜նչ անկասկած».
 Ասի՝ ոսկով համբույր կտամս, «կտամ» — ասաց աներկյուղ,
 Ասի՝ հետո՞, համբույրից զատ... Տեր իմ, «այո» փսփսաց:



Ասացի՛ թեզ եմ փնտրում ամեն տեղ,
Ասաց՛ քո դարդին իմ համբույրը դեղ,
Ասացի՛ ճամփադ դժվար է և նեղ,
Ասաց՛ անտես եմ փերիներն անմեղ:



Քո համբույրից մեռածը ողջ կդառնա,
Քո բույրերից հիվանդն առողջ կդառնա,
Քո հայացքից ծիլը բողբոջ կդառնա,
Քո հմայքից վիուկը ո՛չ կդառնա:



Ես թեզ հուրի չեմ անվանում, թե՛զ է վնաս, հիշիր,
Հուրին թեզ մոտ չի երևա՝ ճուր էլ գնաս հիշիր,
Դու, որ այդքան գեղեցիկ ես և հեզանազ, հիշիր,
Ճիշտ կլինի, որ թեզ արժան յար ունենաս, հիշիր:



Ասացի՛ շատ եմ լացել, հավատա,
 Ամեն արցունքս՝ մի կարմիր լալա:
 Կարմիր արցունքից, ասաց, մի՛ դողա,
 Քանզի իմ կարմիր այտերից է դա:



Քո երեսի վարդ - լալայի այդքան վառ ներկն ի՞նչ է տվել,
 Սև խոպոպը սիրահարի՛ նռան ծաղկին ի՞նչ է տվել,
 Քո լույս դեմքը՝ սև մազերիդ գիշերվա ձեռքն ի՞նչ է տվել,
 Սիրեկանին այդ արժանի՛ սիրածի գիրկն ի՞նչ է տվել՝



Խնկի բույր ունեն խոպոպներիդ տաք,
 Մերթ դեմքիդ ընկած, մերթ՝ ականջիդ տակ,
 Բայց հանելուկ են քո շուրթերը փակ,
 Ամբողջ աշխարհն է դրանց տալիս փառք:



Շուրթդ չեմ համբուրի, թեև գրավում է,
Շաքարն համտեսելիս՝ իսկույն հալվում է,
Արցունքի ոսկերիչ եմ, իսկ դեմքս դեղնում է,
Լացիս ամեն կաթիլ՝ ոսկու պես գլորվում է:



Շիմշատ բոյի, քաղցր լեզվի և նուրբ մարմնի տեր ես,
Արծաթ վզի, ոսկե գոտու և նուրբ սրտի տեր ես,
Համ նոճու պես գեղեցիկ ես, համ կուռքի պես վեր ես,
Հուրի - փերին հավ է քեզ մոտ, դու աշխարհի տեր ես:



Երբ հիշում եմ հաջորդ օրվա ժամադրությունը,
Ամբողջ գիշեր չի այցելում աչքերիս քունը,
Վախենում եմ, թե հանկարծ գիշերը մեռնեմ,
Չկայանա մեր վաղվա ուրախությունը:



Սևահեր վարդ՝ այսպիսի հարս ղվ է տեսել,
Դեմքի վրա նուրբ աղվամազ՝ ղվ է տեսել,
Աչքերի մեջ իր սիրտն է պարզ՝ ղվ է տեսել,
Բայց իմ հանդեպ՝ դաժան ու թարս, ղվ է տեսել:



Հաբեշ շահից էլ մոլգ են մազերդ,
Կակաչ է դեմքդ, թագ են մազերդ,
Ալ վարդերով ես զուգել մազերդ,
Բայց ես մերժված եմ, սոլգ են մազերդ:

ՖԱՐՐՈՒԻ



Ես գիտեմ՝ սիրտս սիրուց հպարտ է,
Սակայն քո սիրո չափը անհայտ է,
Քո ամեն խոսքը նուրբ, անարատ է,
Երևի, հոգիս, քո սերն էլ այդ է:



Դու շատ լավն էիր, դու մի անուշ յար,
Հարևանուհիդ՝ դառը և մռայլ,
Դու հենց նրանից դառնություն առար,
Պտուղը պտղից գույն է առնում, յար:



Հասմիկի բույր է գալիս քո մազից,
 Ամբողջ աշխարհն է լալիս քո նազից,
 Արդյոք սիրո՞ւն ես եղել է՞ն գլխից,
 Թե այդպես դարձար զարդարանքներից:



Ասացի՝ ո՞ր է խոսքդ երեկվա,
 Արի հանդիպենք, սիրտս հովանա:
 Ասաց՝ անիրավ, զգո՞ւյշ, մի՞ գոռա,
 Ականջներ ունեն պատերն էլ հիմա:



Մինչ շտապում եմ, որ ընկեր ճարեմ,
 Կյանքը թռչում է, էլ հնց համբերեմ:
 Ասենք՝ ճարեցի սրտակից ընկեր,
 Իսկ անցած կյանքս ինչպե՞ս ետ բերեմ:



Ասում են, թե իմ յարը սիրուն չէ,
 Եթե սիրուն չէ, դա իմ մեղքը չէ,
 Սիրուն է, թե ոչ, դա իմ պետքը չէ,
 Եթե սիրում ես, յարդ տգեղ չէ:



Ասում են, յարդ ուրիշ յար ունի,
 Դա նախանձներն են ասում երևի,
 Մեր սերը ոմանց բեռ է հիրավի,
 Էշն ուզում է՝ իր փալանչին մեռնի:



Իմ հանդեպ շատ ես դաժան մշտապես,
 Դու դաժանության գիրքը լնվ գիտես:
 Կարծում ես՝ չկա հավատարմություն,
 Այն ծտի կաթ չէ՝ կն, բայց չգիտես:



Արցունք հեղեցի նրա կարոտից,
Իզուր մի՛ լացիր, խորհուրդ տվեց ինձ,
Կարծեց՝ չի մնա վաղն այդ արցունքից,
Բայց նույնն է՝ բռնվ ջուր հանես ծովից:



Ասացի՝ գարնան վարդ ես ինձ համար,
Ասաց՝ ավելին դու ես ինձ համար,
Ասացի՝ սերդ քաղցր է ինձ համար,
Ասաց՝ ափսոս չէ կյանքս էլ քեզ համար:

ՄԱՆՈՒԶԵԼՐԻ



Մթնեց իմ օրը, որ քեզնով, քո սիրով պայծառ էր երեկ,
Իմ օրը մութ գիշեր դարձավ, ու ախ եմ քաշում թևաբեկ.
Ցերեկս լույսից զրկվեց, գիշերս զրկվեց իր սևից,
Հիմա ոչ գիշերս է գիշեր ու ոչ էլ ցերեկս՝ ցերեկ:



Ցանցում եմ քո սև մազերի՝ խավար է խավարի վրա.
Ես զոհն եմ քո ալ շուրթերի՝ շաքար է շաքարի վրա.
Շփոթ է խոստումդ, թե՛ կգաս, ու զաղս անհույս է, անլույս.
Բաժանման քո վիշտը ինձ այսպես թողել է չոր քարի վրա:

ԱԶԻԱՂԻ



Սերդ լոկ երկնքում կարելի է պահել,
Միայն տանջված հոգում կարելի է պահել,
Գովերգում եմ միտքդ, ով իմաստուն դու մարդ,
Սերդ միայն խոսքում կարելի է պահել:



Տեր, ով մեծությունդ չի ճանաչել,
Կարճ է առանց քեզ փառք նվաճել,
Բայց գիտենք, որ նա է մարգարիտներ հանում,
Ով լավ ջրասույզ է և իզուր չի ննջել:



Ձեր այգու բուրմունքը՝ խենթ քամին է բերում,
Քո մարմնի բուրմունքը իմ մարմնին է բերում,
Այրում է իմ սիրտը այն բուրմունքը քո տաք,
Որ սիրահար քամին ուշ ժամին է բերում:



Տղամարդը նա է, ով իր ուղին ունի,
Ոչ թե կնոջ նման՝ գաղտնի ուղի ունի,
Իսկական տղամարդը չի ապրի հույսերով,
Հույսը կնոջ պես է, որ անկողին ունի:



ՄՈՒԶԶԻ



Ճամփան՝ մեր թաղից մինչև թաղը քո,
Ծով դարձավ՝ լցված աղի - արցունքով,
Թե ինձ մոտ գալու համար նավ է պետք՝
Նավ արա սիրտն իմ, որ ավանն է քո...



Լուսաստղը թե քո մասին իմանար,
Քո գավի գինին լինել կուզենար,
Թե լուսինը քո պատգամը լսեր,
Կիջներ, ոտքերիդ փարված կմնար...



Աչքս առատ արցունքներից սիրո մի գավ է դարձել,
 Հոգիս վշտից՝ սիրո թիթեռ ու փարվանս է դարձել,
 Տէր եմ դարձել սիրո տան մեջ ու մշտական բնակիչ,
 Աշխարհն՝ սթափ, ես քո սիրուց խենթ - դիվանս եմ դարձել:



Քո սիրո մեջ լավ օրերի հույս - սպասում ու շահ չկան,
 Մեր գիշերվա հանդիպումի խոստումի լույս ու ջահ չկան,
 Վախենում եմ սիրույդ բոցից սիրտս այրվի, մոխիր դառնա,
 Քո սիրո մեջ կարեկցանքի ոչ մի կայծ ու նշան չկան...



Իմ հավանած, ինձ արժանի յարժս երբ իմ ձեռքից գնաց,
 Հանգիստ, դադար ու խնդություն իմ սիրահար սրտից գնաց,
 Նրա համար է իմ աչքից սրտիս արյունը հեռանում,
 Որ իմ սրտից էլ հեռանա, նա, ով արդեն աչքից գնաց:



Եթե դու ես լուսինն ու մոմն այս աշխարհում,
Ինչիս է իմ այրում - հատնումն այս աշխարհում.
Թե դու ես մոմն՝ — ինչու եմ նս այսպես այրվում,
Թե լուսին ես՝ ինչու եմ նս, նս փոքրանում:



Ինչ ասում եմ , Շահ իմ, հարբած եմ ասում,
Առանց հանգ — բայց հանգավորված եմ ասում.
Ուզում ես, որ մի թեթև տանդ ասեմ քեզ —
Ծանր գավուվ ով է թեթև տանդ ասում...



Կրծքիս վրա, սրտիս վրա գոհարներ կան պերճ,
Բայց կրծքիս ու սրտիս ցավից տանջվում եմ անվերջ¹,
Թեկուզ լուսնյակ իմ սիրուհու վարսերն են կրծքիս,
Հետն էլ, ավանդ, Սանջար շահի նետն է սրտիս մեջ:



Երբ մի ձեռքս կրծքիս դնեմ, մի ձեռքս՝ գլխիս,
Գինին մոտ բեր ու ինձ ասա՝ խմիր, սիրելիս,
Բայց ես ինչպե՞ս վերցնեմ գինին քո ձեռքից, ասա՛,
Երբ մի ձեռքս գլխիս է միշտ, մյուսը՝ կրծքիս:



Երբ ծիծաղում է այն գեղեցկուհին լույսի պես մաքուր,
Մի տեղ օրինանք է սփռում աստղծո, մի տեղ՝ մշկաբույր,
Կարծես աստղերը գոչում են բարձր երկնակամարից.
«Ապրի այն մայրը, որ ծնել է քեզ ի պատկերի յուր»:



Ամեն գիշեր հոգիս ինձնից փախչում է ցավից,
Խուսափեցի ես ինձ տված խրատից, լավից,
Մինչ լուսաբաց ինձ հետ է միշտ դեմքդ բյուրակունք,
Բայց, տես, ահա մեռնում եմ ես այրող ծարավից:



Կյանքիս բոլոր գիշերներից եկավ գիշերն իմ ուզած,
 երբ որ ռուդի* նվագի հետ երգդ հասավ ինձ հուզված,
 Բայցև լույսը դեռ չբացված՝ անհետ կորավ ամեն բան,
 Լուսին չկար էլ երկնքում, իմ գրկում էր նա սուզված:



Թեկուզև ունի թշնամիդ բազում գանձեր ու ստակ,
 Բայց տես, տանջանքից վերջը ինչ մնաց՝, ո՛չ կյանք, ո՛չ վաստակ,
 Կորխից էլ, իրավ, շատ գանձեր ուներ ու հարստություն,
 Բայց, տես, ամեն ինչ ագահ Կորխի պես անցավ հողի տակ²:



Վրան խփեց, բայց ոչ մեկին և ո՛չ մի վարձ,
 Հացատնից և ո՛չ մեկին՝ մի պատառ հաց,
 Եթե դրսից ծուխ էլ մտնի ծխնելույզը,
 Ծխնելույզից ծուխ չի լինի էլ հետադարձ³:



Այն գիշեր, երբ որ փարվում, ձուլվում եմ քաղցր յարիս,
Գիշերը՝ թեթև նավակ, լուսինը հողմ է մի խիստ,
Իսկ երբ որ բաժան եմ ես լուսաստինք իմ սիրուհուց,
Գիշերը դառնում է նավ, արևը՝ նավախարիսխ⁴:



Թարթիչներդ նետեր են սուր, սիրտս՝ նշանակետ,
Խոպոպներիդ կրծքիս վրա լանջապաններ են վերտ,
Ձեռք չեմ քաշի կյանքում երբեք քո խոպոպներից,
Նրանք են լոկ ինձնից վանում ամեն մի աղետ:

ՄԱՍՈՒԴ ՍԱԱԴ ՍԱԼՄԱՆ



Օ՛, բախտ, դու ինձ, ոտքից գլուխ, հրդեհված դեզ արեցիր,
Զույգ ոտքերիս, - իմ մեղքն ինչ էր — շղթա - կապանք դրեցիր.
Իմ թշնամու ուզած ձևով թշվառիս հետ վարվեցիր, —
Քարին անգամ չեն անի այն — ինչ որ դու ինձ արեցիր:



Իմ թշնամին գիշեր - ցերեկ հաղթում է ինձ, ով թագավոր,
Իմ բարեկամն ինձնից փախչում, ատում է ինձ, ով թագավոր,
Իմ հրից ու բոցից անգամ՝ կայծ չի թռչում, ով թագավոր,
Ինձ նմանը ինչպես ելնի զնդան - բանտից, ով թագավոր:



Օ՛, ամպ, ինչո՞ւ գիշեր - ցերեկ աչքըդ թա՛ց է արցունքներ՝
 Օ՛, աղավնի, ինչքա՛ն պիտի ծեգին նվա՛ս քո վշտերից,
 Կակա՛չ, ինչո՞ւ դու պատռեցիր ալ շապիկը քո վրայից,
 Չլինի՞ թե, Մասուդի պես, դուք էլ բաժան եք ձեր յարից...



Նորուզի՞* ալ վարդի հոտից ես հալվում եմ.
 Գեղեցկուհու հուր կարոտից ես այրվում եմ.
 Այրվող մոմից ես երեք բան սովորեցի, —
 Լա՛ց եմ լինում, այրվում եմ ու սպառվում եմ:



Հերիք է, որ ամպին նայեմ — ամպը՝ մեզ ու մհուժ է դառնում,
 Հերիք է, որ ծաղիկ քաղեմ — ծաղիկն իսկույն փհուժ է դառնում,
 Հերիք է, որ տուն ունենամ՝ բանտ է դառնում տունն ու զնդան,
 Կյանքը դառնում է ժամանակ և անցածի հիւժ է դառնում...



Ամպի նման ես սիրուց լնց եղա անձայն,
 Դեմքս վշտից, տերևի պես, դալճուկ դարձավ,
 Դալուկ դեմքից ու աչքերիս արցունքներից —
 Դեմքըս՝ աշոճ, իսկ աչքերս գարոճն դարձան:



Արն է քո դեմքը սիրուն, ես՝ նունուֆա՛ր, իմ սիրելի,
 Նա ջրի մեջ, ես՝ աչքերիս արցունքների, իմ սիրելի,
 Եթե դու ինձ արևի պես և ջերմություն, և լույս չտաս,
 Ինչպես ծաղկեմ ու գլուխըս հանեմ ջրից, իմ սիրելի...



Հերիք է, որ գավն ստանամ մատռվակից, —
 Գավը գինուց է դատարկվում, աչքն՝ արցունքից,
 Վշտոտ մարդը որ չխմի — էլ ինչ անի. —
 Պիտի հարբի, որ դատարկվի հոգս ու վշտից:



Սերըդ՝ վեհ է, համբերանքիս չափը՝ նվաճստ,
 Դեմքըդ՝ սիրուն, իսկ քո վարքը՝ տգեղ ու վատ,
 Ե՛ս եմ խմում՝ քո զույգ աչքերն են խենթանում,
 Ձեռքերդ ինչ՝ երբ կողքիս է քո շուրթը վարդ...



Երբ խնջույքի զվարթ ժամին մարդիկ խնդում են, բերկրում.
 Սրինգն այնժամ նրանց հրճվանք, ուրախություն է բերում.
 Երբ տխրության ժամն է գալիս, մահ է տանը, սուգ ու սև,
 Նույն սրինգից նույն սրտերում արցունքներն են վարարում:



Իմ արցունքը ու քո դեմքը իրար հանգույն են դարձել,
 Իմ վիճակն ու քո սև ծամը նմանագույն են դարձել.
 Ինձ աշխարհն էլ նեղ է դարձել՝ բերանի պես քո փոքրիկ,
 Անվերջ լալուց իմ սիրտն էլ է քո սրտի պես քարացել:



Աչքս ամպ է, ու արցունքս ցող - շափյուղա է դարձել,
Մի գիշերվա տառապանքս՝ հարյուր տարվա է դարձել.
Նայը՝ բանտ էր, հիմա՝ դժոխք, ժանտ ու դժնյա է դարձել.
Շունչս՝ հառաչ ու սրինգս՝ հառաչաձայն է դարձել:



Իմ սիրելուն չտեսնելուց աչքս լույսից է զրկված,
Տառապում եմ գիշեր - ցերեկ, սիրտս արյամբ է լցված.
Հարյուր անգամ կրկնում եմ, ինչ հարյուր տեղ է ասված՝
Սեր կոչվածը այս ֆնչ ցավ է, ֆնչ աղետ է, ո՛վ աստված:



Այրվում է իմ սիրտը սիրուդ արցունք - կրակում,
Երկու աչքս սուզվել են այդ կրակե արցունքում.
Կրակի ու ջրի մեջ երերում եմ օրնիբուն,
Վախենում եմ թե քնեմ՝ քունս դառնա մահվան քուն:



Ասացի, թե քո անունը պիտի սրտիս խարան անեմ.
Ասաց՝ երկու աչքդ պիտի իմ ոտքերի ճամփան անեմ.
Տեսա, թե իր կամքը, որպես վերից իջած հրաման անեմ,
Կյանքս իսպառ զոհեմ պիտի, տունս մահ ու տապան անեմ:



Ճակատագրի ճանկերից դու չես կարող ազատվել.
Ինչո՞ւ իզուր ամեն պահ բախտի անվից գանգատվել.
Ինչ շահ զարկվես պատեպատ, երբ ցերեկը չգիտես՝
Գիշերն ինչո՞վ է հղի ու քո դեմ ինչ է նյութվել:



Դու չբացված կոկոնից էլ անարատ ես ավելի.
Դու արբեցնող նարգիզից էլ թավշապատ ես ավելի.
Գեղեցկությամբ արևից էլ հուրհրատ ես ավելի.
Տասնհինգօրյա լուսնյակից էլ լուսառատ ես ավելի:



Համբերում եմ՝ կյանքս իզուր է ընթանում.
Հառաչում եմ՝ թշնամիս է ուրախանում.
Կհամբերեմ՝ չուրախանա թող թշնամիս,
Մեծահոգի աստծուն եմ ապավինում:



Ցերեկը վառելիք չունեմ, գիշերը՝ ճրագի ձեթ,
Աչքերս չարչրկվում են թուլացած մարմնիս հետ,
Արևի լույսով միայն ու լուսնով գոհ եմ բանտում,
Մեկը ինձ տաքացնում է, մյուսը՝ լույս տալիս գեթ:

ՕՄԱՐ ԽԱՅԱՄ



Գինուս կուժը դու կոտրեցիր, աստված իմ.
Բախտիս դուռը դու փակեցիր, աստված իմ,
Իմ ալ գինին դու թափեցիր, աստված իմ.
Ե՛ս եմ խմում՝ դու հարբեցիր, աստված իմ:



Այս աշխարհում խելոք ու լուրջ պիտի լինես,
Խելքը գլխիդ և լուռ ու մունջ պիտի լինես,
Քանի ականջ, աչք ու լեզու տեղում են դեռ,
Էն գլխից կոլյր և համր ու խոլ պիտի լինես:



Ես չգիտեմ՝ նա, ով տվեց ինձ շունչ - հոգի.
Ինձ Դրախտի համար երկնեց, թե Դժոխքի.
Գավը, սիրունն ու քնարն ինձ կանխիկ տվեք —
Ձեր ապառիկ Դրախտը ձեզ լինի, հոգի:



Օղը մեղմ է, օրը՝ պայծառ ու մաքուր,
Վարդի դեմքից ցողը փոշին է մաքրում.
Դեղին վարդին թեքված սոխակը գինով
Շշնջում է,- «ձիշտը հարբելն է կյանքում...»:



Տիկնիկ ենք մենք, ճակատագիրը՝ դերասան,
Պատկեր չէ սա, այլ՝ հավաստի և իրական, -
Մի քանի օր կխաղանք այս բեմ - աշխարհում,
Մինչ մեզ նորից նետեն սնդուկն անէություն:



Եթե մեզ վարդ բաժին չընկնի - փուշն էլ բավ է,
 եթե կրակ բաժին չընկնի - լոյսն էլ բավ է,
 եթե ոչ շեյխ լինի, ոչ քուրձ, ոչ մենաստան,
 ժամի գանգը և Հարության հոլսն էլ բավ է:



Ո՛վ, օրենսգետ, մենք քեզանից ջանասեր ենք այս աշխարհում.
 Թեև՝ հարբած, սակայն սթափ խելքի տեր ենք այս աշխարհում,
 Մենք՝ խաղողի արյունը ալ - մարդկանց արյունն ես դու խմում, —
 Խղճով ասա, մենք, թե՛ դու ես արյունախոմն այս աշխարհում:



Երագիս մեջ մի իմաստուն ասաց ինձ,
 Թե ոչ մի մարդ, խեր չի տեսել դեռ քնից.
 Իսկ ինչ պիտի անես, երբ քո մահը գա՛, -
 Խմիր, քանի... արթնանում ես դեռ քնից...



Ոչ դրախտը, ոչ դժոխքը - դեռ չի տեսել ոչ ոք, սիրտ,
Դեռ հանդերձյալ այն աշխարհից ետ չի դարձել ոչ ոք, սիրտ,
Ինչքան հույս ու հավատ ունենք, մենք վստահել ենք մեկին,
Ում անհունն ու ինչ լինելը՝ դեռ չի պարզել ոչ ոք, սիրտ:



Գոռոզությունը անցնում է գինուց,
Կնճռոտ հարցերը լուծվում են գինուց,
Սատանան, մի կում թե գինի խմեր՝
Խոնարհում կաներ մարդ - աստծուն հնուց¹:



Եթե իմ ձեռքը հասներ ճակատագրի տախտակին,
Կգրեի այն նորից՝ համաձայն իմ տենչանքի.
Կջնջեի մեկընդմիշտ այս աշխարհից հոգս ու ցավ,
Բարձրացրած իմ գլխով այս կամարը երկնքի:



Քանի որ իմ աշխարհի գալը իմ կամքով չէր այս աշխարհում.
Եվ անմուրազ հեռանալը - իմ կամքով չէ այս աշխարհում,
Վեր կաց, գոտիդ ամրացրու և գինի բեր ինձ, մատռվակ,
Որ աշխարհի ցավը խեղդեմ այս գինով լի կուժ - կուլայում...



Ասում են, թե արգելված է գինի խմել Շաբան* ամսին,
Արգելված է և Ռաջաբին* Աստծուն ձոնված հատուկ ամսին.
Շաբան - Ռաջաբ՝ ամիսներն են Աստծո՛ւ և Մարգարեի՝
Ռամազանին* մենք կխմենք - մեզ պատկանող միակ ամսին²...



Հավատից մինչև անհավատություն - չնչին մի պահ է,
Կասկածից մինչև հավաստիություն, - չնչին մի պահ է.
Երջանիկ ապրիր, թող ուրախ անցնի պահն այդ անցավոր —
Քանի որ կյանքի իմաստը միակ - հենց այդ մի պահն է:



Իսայան, հարբած ես թե անուշ գինուց, - երջանիկ եղիր,
Եթե հարբած ես սիրունի սիրուց - երջանիկ եղիր:
Ամեն բանի վերջն՝ անեությունն է այս փուլն աշխարհում,
Կարծիր, թե... չկաս, բայց քանի որ կաս՝ երջանիկ եղիր:



Մատռվակ, վարդն ու սեզն այս դուրեկան,
Տես, մի շաբաթ անց, ինչ օրը ընկան,
Խմիր, վարդ քաղիր - զի մեկ էլ տեսար —
Այս սեզը՝ չոր հարդ, վարդը՝ հող դարձան...



Նորուզի* սյուքը՝ ալ վարդին լավ է,
Սիրահար զույգը՝ թարմ մարգին լավ է.
Հերիք դարդ անես անցածի մասին —
Այսօրվա օրն է ամենից լավը:



Թե ձեռքըս հասներ անիվին բախտի,
 Ցած կնետեի նրան իր թախտից,
 Եվ կստեղծեի ուրիշ մի անիվ,
 Որ մարդ տեր դառնար իր ուզած բախտին:



Դրախտն - ասին, - «հուրիներով է անուշ».
 Ես ասի. «լոկ խաղողի հյութն է անուշ».
 Առ Կանխին ու Ապառիկից ձեռքաշիր —
 Հեռվից է լոկ դիտլի ձայնը անուշ...



Ինչքան ընկեր քիչ ունենաս, այնքան լավ,
 Ինչքան մարդկանց քիչ մոտենաս - այնքան լավ,
 Ում այս կյանքում քո բարեկամն ես կարծում, —
 Նա է քո դեմ, - կույր մի լինի, նյութում դավ:



Նրանք, ովքեր իմաստությամբ կյանքի գաղտնիքը բացեցին,
Եվ Աստծո մեծ էության մասին խոսքեր շռայլեցին,
Ոչ գաղտնիքի թելը գտան, ոչ էլ կծիկը քանդեցին,
Նախ՝ խելքներին զոռ տվեցին, հետո՝... աչքերը փակեցին...



Հավերժության գաղտնիքը մութ ոչ դուր գիտես և ոչ էլ՝ նս,
Ոչ դու կարող ես վերծանել գրերն այս մութ, և ոչ էլ՝ նս.
Իրականը՝ բողի ետև եղած զրույցն է միայն, —
Երբ բողն ընկնի՝ էլ չենք լինի այս աշխարհում ոչ դու, ոչ՝ նս:



Մի ռենդ* տեսա՝ խանի սեմին նստած մուր,
Ոչ գյավուր էր, ոչ՝ մուսուլման հավատավոր,
Ոչ ճշմարիտ շարիաթ ուներ, ոչ էլ՝ հավատ, —
Կհր Այս ու Այն կյանքում Սուֆի* այդքան հզոր:



Երեկ գիշեր քարին տվի խաս կուժը ես,
 Հարբած էի, երբ ջարդեցի այս կնոժը ես,
 Կուժը դարձավ ու մարդկային լեզվով ասաց. —
 «Քեզ պես էի. դու էլ վաղն ինձ կնամանվես...»:



Գարնանը, երբ մանուշակի թուփն է ծաղկում,
 Վարդի թփին զեփյուռը չանգ* է նվագում.
 Եւ սթափն, ով կնոջ հետ արծաթամորթ,
 Խմում է ու գինու գավը՝ քարին զարկում:



Գինետանը՝ հարցում արի ես մի ծերից.
 «Ի՛նչ լուր, - ասի, - այս աշխարհից մեկնողներից...».
 «Խմիր» - ասաց, - մեզ պես քանիսն են գնացել,
 Եվ նրանցից դեռ չի դարձել ոչ ոք նորից:



Երբ կյանքն անցել է, վերջացել. - Բալխ* ու Բաղդադ*՝

բառեր են սին,

Երբ լցվել է գավն ու թափվել. - դառն ու քաղցր - բառեր են սին.

Դարդ մի անի, մեզնից հետո լուսինը դեռ շատ կդառնա —

Լիալուսնից՝ նորալուսին, նորալուսնից՝ լիալուսին:



Մենք կանք - չկանք՝ աշխարհը կա ու կմնա,

Եվ մեզանից հետք ու անուն էլ չի մնա,

Երբ չկայինք՝ աշխարհը բան չէր կորցրել,

Երբ չլինենք՝ նա էլի նոյնը կմնա:



Այն պալատում, ուր Բահրամը քեֆ էր անում,

Հիմա եղնիկն ու առյուծն են ձագեր հանում.

Բահրամ, որ գոռ* էիր որսում քո ողջ կյանքում,

Տեսար, ինչպես գուռը որսաց քեզ աշխարհում³:



Երեկ գիշեր բրուտի մոտ մտա մի ծեր,
Տեսա երկու հազար խոստուն ու լուռ կժեր.
Նույն հարցն էին տալիս նրանք. - «Ո՛ր եք, ասե՛ք,
Կուժ սարքողներ, կուժ ծախողներ, կուժ առնողներ...»:



Մեզանից ո՛վ մեղք չի գործել այս աշխարհում, ասա՜,
Թե չի գործել, ո՛նց է ապրել այս աշխարհում, ասա,
Եթե դու իմ վատին վատով պատասխանես, աստված,
Ինչո՞ւմն է մեր միջև եղած տարբերությունն, ասա:



Ա՛ռ այս գավը՝ նորուզի* կակաչի պես արնագույն,
Կակաչադեմ կույսի հետ խնջո՞ւյք արա ողջ կյանքում.
Խմի՛ր, հարբի՛ր, քանի դեռ երկնակամարը կապույտ
Քո աճյունը չի խառնել այս հողի հետ արնագույն...



Ամեն վատ - լավ, որ մարդու էությունից է գալիս,
Ամեն խինդ - ցավ, որ մարդու բնությունից է գալիս,
Բախտի վրա մի բարդիր - քանզի անիվը բախտի,
Քեզնից հազար անգամ խեղճ ու անճար է ավելի:



Եթե քո կյանքի գեթ մի պահն անցնի,
Չթողնեն - առանց խնդության անցնի...
Կյանքի իմաստը՝ հենց ինքն է, որ կա, —
Ինչպես որ ապրեն՝ այնպես էլ կանցնի:



Գարուն, թե ձմեռ, քնած, թե արթուն,
Կյանքի գիրքը մեր թերթվում է, հատնում,
Խմիր և հիշիր խոսքը Հաքիմի*,
Վշտերը թո՛ւյն են, գինին՝ հակաթո՛ւյն...



Ո՛վ, անտեղյակ այս աշխարհքից, - ոչինչ ես դու, դու չկանս,
 Քամին է հիմքը քո կյանքի - ոչինչ ես դու, դու չկանս.
 Քո գոյությամբ ընկած երկու անգոյության արանքում, -
 Որպես Ոչինչ՝ Ոչինչի մեջ - ոչինչ ես դու, դու չկանս⁵:



Անձրդ՝ Ֆալաքի* հոգսերին մի տա,
 Հոգիդ անցավոր վշտերին մի տա,
 Թե տալիս ես՝ քեզ գինճն տուր, յարին, -
 Քո կյանքն անցավոր զուր քամուն մի տա:



Այն բրնձր, որ հունցում է կավը,
 Թե խելքը գլխին զննի այդ կավը.
 Չի հունցի նրան, բռննցք ու ոտնով՝
 Իր նախնիների հոգն է այդ կավը:



Տէր, դու ես իմ կապը հունցել - ես ինչ անեմ,
Բուրդըս դու ես մանել - գործել, ես ինչ անեմ,
Այն ամենը, ինչ կա իմ մեջ - թե լավ, թե վատ, —
Իմ ճակատին դու ես գրել - ես ինչ անեմ:



Այն փոշին, որ տրորում ես քո ոտքի տակ,
Եղել է մի արևադեմ, լույս Արուսյակ⁶,
Զգույշ սրբիր թևքով փոշին քո երեսից,
Ո՛վ գիտե, - նա որ նազելու դեմքն է ճերմակ...



Մի կաթիլ ջուր էր - և մի ծով դարձավ.
Փոշի էր՝ հողին ձուլվեց - միացավ.
Քո աշխարհ գալու իմաստն ինչ էր, մարդ. —
Աննշան մի ճանճ, որ... անտես դարձավ:



Օ՛, բախտի անիվ, ամեն չարիք քո քենից է գալիս,
 Անարդարության բիրտ արհեստը քո հնից է գալիս.
 Թե վաղը բացեն քո կնիքները, - որ սև կնիքն է մայր հողի, —
 Ինչ գանձեր ասես, որ չեն գտնի քո սրտում գաղտնալից...



Թե ես մոգերի գինուց հարբած եմ - այդպես եմ, որ կամ՝
 Սիրահար, գյավուր և կռապաշտ եմ - այդպես եմ, որ կամ.
 Ամեն մի թայֆա իր կարծիքն ունի կյանքում իմ մասին —
 Թե ո՞վ եմ, կամ՝ ինչ - ես ինքըս գիտեմ - այդպես եմ, որ կամ...



Ինչ իմաստուն կոչեց դիտմամբ իմ թշնամին,
 Աստված վկա՝ սուտ են խոսքերն այդ ու քամի...
 Քանի որ ես ընկել եմ այս խոհու ցավի,
 Հեչ չլինի՝ գիտեմ, թե ո՞վ եմ ես, կամ՝ ինչ:



Երկնականարից վատ արարքներ ու վատ վարք սպասիր,
Այս աշխարհը փուչ՝ բարեկամներից դատարկ իմացիր.
Ինչքան կարող ես - եղիր այնպիսին, ինչպիսին որ կ'աս -
Ոչ երեկ տենչա, ոչ վաղվան ձգտիր, Այսօրվան հասիր:



Ափսոս, որ իմ ջախելության գիրքը թերթվեց - վերջացավ,
Եվ իմ կյանքը - հազար ափսոս, - վաղ գարնան պես շուտ անցավ,
Երջանկության հավքն այն, որին ջախելությունն են կոչում,
Ե՛րբ երևաց, երբ ծլվլաց ու երբ չվեց՝ չիմացա...



Ես մեծ գավերով գինին կխմեմ,
Երկու գավ ավել ինձ կնվիրեմ,
Նախ... ապահարզան կտամ իմ խելքին,
Իսկ հետո՝ գինուն կնության կառնեմ...



Երբ մեռնեմ, դուք ինձ գինով լվացեք,
 Եվ գավը ձեռքին ինձ թալղին* ասեք,
 Թե հարության օրն ինձ գտնել ուզեք,
 Գինետան շեմի փոշո՜ւմ փնտրեցեք:



Շեյխը* հարբած մի պոռնիկի հայ էր տալիս, -
 «Մեկ սրահ ետ, մեկ նրահ ետ ման ես գալիս»:
 Կինն ասաց. «Շեյխ, ես այն եմ, ինչ ասո՜ւմ ես դու,
 Իսկ դու այն ես, ինչ որ կյանքում ցո՜ւյց ես տալիս...»:



Թեև մզկիթ ես կարիքից դողված եկա,
 Բայց չկարծեք, թե նամազի* համար եկա,
 Այն սեջադեն*, որ գողացել եմ այստեղից,
 Մաշվել է... նոր սեջադեի համար եկա:



Այս աշխարհին ինչ օգուտ իմ աշխարհ գալուց,
Կամ ինչ օգուտ՝ այս աշխարհից իմ գնալուց,
Գոնե մեկն, իմ զույգ ականջից մեկին ասեր,
Թե ինչ իմաստ՝ մեր այս գալնուց ու գնալնուց:



Այս կուժն՝ ինձ պես սիրով տարված է եղել,
Սիրունի սև ծամին գերված է եղել,
Կժի վզին փարված այս կանթը սիրուն,
Ձեռք է, որ իր յարին փարված է եղել...



Ա՛յն, ինչ տեսար ու հայեցիր - ոչինչ է.
Ինչ ասացիր ու լսեցիր - ոչինչ է.
Կուզես արար աշխարհն անցիր - ոչինչ է.
Սողա՛, մուլք ու կայք կուտակիր - ոչինչ է...



Նա, ով խելքով առաջնորդվի այս աշխարհում,
 Միևնույնն է՝ թե... եզ կթի այս աշխարհում,
 Նախընտրելի չէ - հիմարի շորեր հագնի, -
 Նույն գնով են երբ սոխն ու խելքը վաճառում:



Մի ձեռքին գինի, մյուսում՝ Ղորան,
 Մերթ հարամ ենք մենք, մերթ՝ հալալ միայն.
 Այսպես, փիրուզի այս երկնքի տակ,
 Ոչ թունդ գյավուր* ենք, ոչ՝ զուտ մուսուլման:



Երեխա էինք՝ հասուն այր դարձանք,
 Բայց դրանից էլ մի խեր չտեսանք.
 Կուզես իմանալ՝ թե վերջն ո՞ր հասանք՝
 Զրի պես եկանք, - քամու պես անցանք:



Մի գավ գինին հարյուր սիրտ ու հավատ արժե,
Մի կում գինին մի չինական պալատ արժե,
Նրա մի կում դառնությունը, - ինչ լալ - հակինթ, —
Հազար ու մի քաղցր կյանք ու լազնթ արժե:



Մի բրուտանոց մտամեր տան կից,
Տեսա, բրուտը, կավի մեծ կույտից,
Կժերին՝ գլուխ ու կանթ էր սարքում —
Շահի գլխից ու աղքատի ձեռքից...



Քանի որ հիմա շահ չկա խելքից,
Եվ անխենքն է լոկ օգտվում կյանքից,
Գինի լից, թող իմ խելք - միտքը տանի —
Գուցե քաղցրանա անքը Ֆալաքի*:



Երեխա, ջահել, թե ծեր անկենդան,
Իրար ետևից կգան ու կերթան,
Աշխարհն համ մնաց, որ համը մնա —
Գնացին, կերթանք. կգան ու կերթան...

ՍԱՆԱՅԻ



Ո՛չ իմ ցանկությամբ պտտվեց մի օր բախտի անիվը,
Ո՛չ կինս մի օր հասկացավ գործիս ճշմարիտ գինը,
Ո՛չ էլ մեր սիրտը մի հանգիստ գտավ մեր կրծքերի տակ,
Կեցցե՛ն այդ սիրտը, կեցցե՛ն այդ բախտը, կեցցե՛ն այդ կինը:



Իմ ծնվելու հետ սկսվեց նոր տանջանքս, լալս,
Իմ գոյության հետ լեզու չգտավ խեղճ տառապյալս,
Իմ մահվան վախից թախծում եմ անվերջ, քարեքար ընկնում,
Ո՛չ գալս լիներ, ո՛չ գոյս լիներ, ո՛չ էլ գնալս:



Եթե սիրտն է սիրո գերի, ազատ մարմնից ինչ օգուտ,
 Եթե հոգին ավերված է, հավերժ կյանքից ինչ օգուտ,
 Գոռում եմ ես աշխարհով մեկ, դու չես ուզում լսել ինձ,
 Եթե կանչս լսող չկա, էլ իմ ջանքից ինչ օգուտ:



Քեզ նմանին ես չեմ գտնի, դու կգտնես ինձ պես հարյուր,
 Ինչպես լսեմ անարգ մարդու բամբասանքը թունոտ ու սուր,
 Երեխա չեմ ես միամիտ, լավ եմ հիմա ես տարբերում
 Ոտքը գլխից, լավը վատից, ջուրը հրից ամենակուլ:



Գավաթդ վերցրու ու երկու կյանքում ապրիր դու գինարբ,
 Անշահ մի մնա երկու աշխարհում և կամ ձեռնթափ,
 Իսկ եթե հանկարծ այսուայն կյանքում քո խոսքը չանցնի,
 Լավ է դժոխքում հարբած լինես, քան դրախտում սթափ:



Կյանքի գավը դատարկեցի ահա ես քեզ հետ,
Բայց չտեսա գուրգուրանքդ, լավդ ես երբեք,
Ապրում եմք մենք այս աշխարհում, ó, բարձր իմ նոճի,
Ես բոլորի համար՝ գիտուն, քեզ համար՝ տգետ:



Ո՛վ սեր, դու ինձ հուր ու բոցի մեջ ես գցել,
Թշվառության ու սև խոցի մեջ ես գցել,
Դու էիր, ի՞նչ համբերություն, նեցուկս միակ,
Բայց դու էլ ինձ մենախցի մեջ ես գցել:



Դու մի՛ նայիր նրան, ով որ ճարավիկ մարդ է,
Թեկուզ գիտուն, թեկուզ խելոք ու կիրթ մարդ է,
Խոսքին նայիր ու խոստումին՝ դրժում է թե ոչ,
Ով չի դրժում, նա հիրավի ճշգրիտ մարդ է:



Ես նա եմ, որ չունի մարմին, չունի ո՛չ սիրտ, ո՛չ հոգի,
Գոյության բյուր նշաններից ո՛չ մի նշան հավաստի,
Եվ որպեսզի դուք հավատաք, որ ես չկամ՝ իմացեք,
Այս ստվերն էլ ինձանից չէ, այլ՝ զգեստից իմ հագի:



Տված թույնդ բալասանից բաժանող պատ չկա,
Քո ցավերից ինձ պես ցավոտ ուրիշ մարդ չկա,
Քո տան շեմի հողից անգամ ինձ բաժին չունեմ,
Դու լավն ես միշտ ու լավ մնա, ինձնից վատ չկա:



Այն օրը, երբ քո չադրայից գլուխդ դուրս բերես,
Աշխարհն ամբողջ, կասկած չունեմ, իսկույն կգերես,
Իսկ եթե դու հրապույրդ գոմարես դրան,
Քանի սրտեր արյունվա՝ կայրես, կավերես:



Նունուֆարն ու կակաչը գլուխ գլխի են թեքել,
 Մեկը կապույտ է հագել, մեկը՝ շուրթերն ալ ներկել,
 Մենք էլ, իմ քաղցրաշուրթ, քո բաժանման հուր սիրուց,
 Մեր դեմքն արնով ենք ներկել, կապույտ հագած դուրս եկել:



Կաքավ, որսորդդ չար բազեն է լոկ,
 Երկնքի ծիրն ես չափում շաղառտ,
 Ինչպես իմանանք գաղտնիքդ, իրոք,
 Երբ քեզ հավասար չի թռչում ոչ ոք:



Ովքեր սիրուց տառապում են ու այրվում,
 Բախտի ձեռքից միշտ էլ թափում են արյուն,
 Սիրուց, ավանդ, անբաժան է բախտը չար,
 Սերն ու բախտը ընկերներ են աշխարհում:



Հարյուր աղբյուր իմ աչքերից հեղեցիր ու գնացիր,
Բաժանման թեժ կրակի մեջ թողեցիր ու գնացիր,
Մրրկասյան պես դու մոլեգին գալարվեցիր շուրջբոլոր,
Երկու աչքս՝ քեզնով լցված, հողեցիր ու գնացիր:



Ասենք թե վարդի ամբողջ հմայքը ու վառքը քոնն է,
Ասենք սոխակի նուրբ գեղգեղանքը, նազանքը քոնն է.
Հայելու ցուանքը ու կախարդանքը ասենք թե քոնն է,
Բայց այդ բոլորից ինչ օգուտ, չէ որ վատ վարքը քոնն է:



Ո՛վ կուռք, հարբած են աչքերդ նորից ու դեռ չեն գոցվել,
Հարբած աչքերի նետերից, ասա՛, քանիսն են խոցվել,
Եթե քո դեմքն էլ զրահով պատվի՝ կներեն, անշուշտ,
Ո՛վ չի վախենում նետից, երբ հարբած աչքերն են բոցվել:



Ինձ որ տեսավ՝ սերս ժպտաց ու փակվեց,
 Լուսնի նման դեմքը չադրած՝ նա փակվեց,
 Նազ է անում հոգեհանիկ իմ հոգին,
 Լուսնի նման ամպը պատռած՝ նա փակվեց:



Օրը մի նոր պահանջ ու միտք է փոխվում,
 Քո շուրթերի քաղցր գաղտնիքն է փոխվում,
 Օրը՝ մի նոր սադրանք ու քայլ խորամանկ,
 Քո նազուտուզն ու նախատինքն է փոխվում:



Նա, որը քեզ չի խնայում՝ վշտահարդ նա է,
 Նա, որ գլխարկ ունի գլխին՝ բարերարդ նա է,
 Նա, որ բեռ է դնում մեջքիդ, այդ նրա՞ բեռն է,
 Նա, որ քեզնից կտրում է քեզ՝ սիրած յարդ նա է:



Պարտիզմեց սիրտս ուրախությունից,
Ախ, կիզվեց հոգիս ունայնությունից,
Ուղեղս, իրավ, չի գործում արդեն,
Ես կամ, թե՛ չկամ, - ասացեք դուք ինձ:



Հմայիչ տեսքդ՝ աղոթատեղի,
Ճակատագիրն ու արքան՝ քեզ գերի,
Հուզմունք ու կասկած ու հավատի հույս
Մխում են խորքում դաժան աչքերի:



Հենց այսօր կյանքից վերցրու ամեն բան,
Վաղը կդնեն հազար մի կապան,
Վայելիր կյանքը, զի գումարն ամբողջ
Մի քանի օր է, ո՛վ գիտե ինչքան:



Տանդ դռնով անցնող ամեն սիրահար,
Դու կարծում ես ողբում է հենց քեզ համար,
Երբ քեզ մոտ են՝ ծառայում են քեզ խոնարհ,
Ընտրիր մեկին, որ քո սրտի մեջ է հար:



Քեզնով եմ հարբած, թեկուզև գինուց - գավից հեռու եմ, -
Իմ որսը դու ես, նետուաղեղից, դավից հեռու եմ,
Դու ես իմ տենչը և Քաբեում* սուրբ և թե մեհյանում,
Երբ որ դու չկաս, աշխարհում ամեն լավից հեռու եմ:



Խոսում էր հետս փոքրիկ, ցանցավոր իր պատուհանից,
Ես ճամփին կանգնած մի խեղճ անցավոր՝ իր պատուհանից,
Եվ հանկարծ տեսա, ես ինչ որ տեսա, հրճաբ էր իրավ,
Հարյուր հատ աստղ ծնվեց լուսավոր իր պատուհանից:



Քանի դեռ դու աչքերիս դեմ շողում ես ոնց ծիածան,
Իմ աչքերից մարգարիտներ պիտի թափեմ ես անձայն,
Իսկ այժմ, երբ դու հեռացար, ազատվեցի տանջանքից,
Աչքերիցս փուշը ընկավ, արցունքներն էլ քչացան:



Մատռվակը գինի տվեց ինձ վարդագույն,
Վարդագունեց Ամու - Դարյան գինու հանգույն,
Այնքան գինի պիտի բաշխեմ ես բոլորին,
Որ արբենա Կորիսը անգամ մյուս կյանքում:



Մարմինս սուզվեց արցունքներիս մեջ,
Լեզուս չորացավ կրակից անշեջ,
Հայրենիքի հուր կարոտից, վշտից,
Թող թշնամիս էլ չտանջվի անվերջ:



Ինչպէս ես, ջանս, - սրտիկիս հարցրի.
 Ես հրի մեջ եմ, - ասաց,- դու՝ ջրի,
 Սիրեցյալիդ հետ մի գավ չխմած,
 Հարբած ու ավեր ընկած ես էլի:



Բաժանվելուց հետո աչքս քիչ է տեսնում,
 Դեմքիս վրա սրտիս արնից լիճ է տեսնում,
 Բայց ես էլի իմ աչքերից դժգոհ եմ շատ,
 Էլ առանց քեզ այս աշխարհում ինչ է տեսնում:



Լուսին, ղվ լուսին, թե չարախոսը քեզ վատաբանի,
 Սիրող սրտերը, մեկ է, քեզանից երբեք չի վանի,
 Դու մի նեղացիր չարախոսի չար խոսքերից երբեք,
 Երբ է սև դեմքից սևացել հայելին, ղվ իմ նազանի:



Տղամարդը նա է միայն, որ սիրուն է միշտ գերի,
Սիրած էակ ունի թե չէ, իր խորքերում դեզերի,
Սիրահարը սիրո ճամփին պիտի լինի այնպիսին,
Որ դժոխքի ու դրախտի սարսափը միտք չբերի:

ԲԱԲԱ ԹԱՆԵՐ



Դու երկնքի գաղտնիքներին դեռ հասու չես, շատ ավստս,
Դու չես անցել կյանքի ճամփան ամենատես, շատ ավստս.
Դու, որ ապրել ու չես ջոկում լավն ու վատը աշխարհում,
Քո իսկական բարեկամին ինչ ճանաչես, շատ ավստս:



Աչքս ու սիրտս մեղքի մեջ են գցում ինձ,
Աչքս տեսնում, սիրտս տանջվում է թախծից,
Մի սուր սարքեմ, խրեմ անկուշտ աչքիս մեջ,
Սիրտս ազատվի նրա նայած - տեսածից:



Նորից մթնեց, որ իմ հոգին այրվի,
 Նորից հիշի կարոտ ու կին, այրվի.
 Վախենում եմ սիրո համար սիրունի
 Սուրբ հավատս բեկվի կրկին, այրվի:



Սիրտս վերք է, սիրտս վերք է, սիրտս՝ վերք,
 Բժիշկ բերեք, հեքիմ բերեք, ճար արեք,
 Բժիշկն եկավ, դարման արավ ստիպված,
 Երբ որ տեսավ, թե ինչպես եմ սրտաբեկ:



Ճամփան մութ էր, քարոտ, ու ես էլ՝ արբած,
 Հանկարծ գավս ձեռքից սահեց, ընկավ ցած,
 Չկոտրվեց՝ աստծո աչքն էր վրան,
 Ինչքան գավեր կոտրվում են՝ դեռ չընկած:



Մի շինական ելել, հնձում էր դաշտը,
Լացող աչքով, բայցև հնձում էր դաշտը.
Ե՛վ հնձում էր, և մրմնջում՝ «Ա՛խ, փսո՛ս»,
Որ կակաչից ամայացնում էր դաշտը:



Ես այն խեն եմ, որին դերվիշ* են ասում,
Չունեմ տանիք ու ապաստան, պատ ու սյուն.
Լուսանում է՝ պտտվում եմ քո տան շուրջ,
Գիշերները գիշերում եմ ավազում:



Կառնեմ գավս ու վարդերով հմայվելու կգնամ,
Զուլալ ջրով ու կանաչով հագենալու կգնամ,
Երկու - երեք գավ կխմեմ ու կհարբեմ ջրափին,
Վայրի - կակաչ սիրուններին սիրտս տալու կգնամ:



Ո՛վ արարիչ, առանց քեզ թող ծաղիկն իսկ չծաղկի.
Թե ծաղկի էլ, թող մնա առանց գույն ու բուրմունքի,
Եթե մեկը՝ առանց քեզ՝ խնդա անհոգ, անիմաստ,
Թող իր սրտի արյունով ներկվի կարմիրն իր դեմքի:



Շուրթդ՝ շաքար ու մարմինդ՝ զուտ արծաթից է ձուլված,
Թե գաս գիրկս, իմացիր, որ սիրտս բոց է, աչքս՝ թաց.
Վախենում եմ իմ բոցերից հալվի արծաթը մարմնիդ,
Հալվի շաքարը շուրթերիդ արցունքներից իմ անսանձ:



Ա՛խ, առանց քեզ բարձը օձ է իմ աչքին,
Օրը՝ գիշեր, խինդը խոց է իմ աչքին.
Թե առանց քեզ պարտեզ ելնեմ շրջելու՝
Վարդանոցը փշանոց է իմ աչքին:



ձգամորդուն երեք դարդ կա անընդհատ.
Նարիբության, գերության ու յարի դարդ.
Հեշտ է տանել դարիբություն, գերություն,
Յարի դարդն է, որ դժվար է, ծանր է շատ:



Իմ աչքերը քո կայանն է, քո տունը,
Աչքիս շուրջը քո ճամփան է, քո հունը.
Վախենում եմ ոտքդ դնես անզգույշ,
Թարթիչներս ոտքդ ծակեն, սիրո՞ւնս:



Ա՛խ, ինձ համար քո քար սիրտը չի այրվում,
Ի՛նչ զարմանամ, գրանիտը չի այրվում,
Բռնկվում եմ, որ հոգիդ էլ բռնկեմ,
Խոնավ փայտը, որ հոգիդ է, չի այրվում:



Ես որ գինուց ու սիրուց եմ ալիքացել,
 Էլ ինչո՞ւ եմ քեզնից հեռու մնացել.
 Ես, որ երբեք չեմ տաքացել քո հրից,
 Էլ ինչո՞ւ եմ ցավի ծխից կուրացել:



Սարի գլխին լուռ նստեցի քանի՜ ժամ,
 Որ կակաչը բացվի, քաղեմ, լիանամ:
 Այն չբացվեց, չզգաց տենչը իմ սրտի,
 Ա՛խ, կակաչն էլ անհավատ է քեզ նման:



Ա՛խ, սիրելիս, առանց քեզ հուսահատ եմ ու նկուն,
 Աչքս փշով ծածկվել, հող է լցվել իմ աչքում.
 Այն ձեռքերը երջանիկ, որ քեզ էին փաթաթված,
 Հիմա անճար ճանճի պես զարկվում են ապակու՝



Ալ կակաչը կանաչ սարին սոսկ մի շաբաթ է մնում,
Մանուշակը քարաժայռին սոսկ մի շաբաթ է մնում.
Երկրից երկիր ճամփա ընկա՝ ճաշակեցի ամեն բան,
Գեղեցկուհին հավատարիմ սոսկ մի շաբաթ է մնում:



Դու հեռու ես, ու սրտիս՝ լայն աշխարհում տեղ չկա,
Մարմնիս, հոգուս ցավերին ուրիշ ճար ու դեղ չկա,
Երդվում եմ քո անունով՝ թե երկրում, թե երկնքում
Քեզանից զատ ուրիշ տենչ, ուրիշ թովք ու գեղ չկա:



Եթե մի օր ձայնս հասներ առ աստված,
Կասեի՝ տներ, քեզ եմ հղում սոսկ մի հարց,
Ինչո՞ւ մեկին տվել ես բյուր բարիքներ,
Իսկ մյուսին՝ արյամբ հունցած գարեհաց:



Վագր ու առյուծ ասես լինես, սիրտ, այ սիրտ,
Ինձ հետ անվերջ կռվի մեջ ես, սիրտ, այ սիրտ.
Ձեռքս ընկնեիր, կթափեի արյունդ,
Որ տեսնեի, թե ինչ գույն ունես, սիրտ, այ սիրտ:



Թե որ սիրտը սիրուհի է, հապա հրն է սիրուհին,
Թե սիրուհին սիրտ է, հապա էլ ինչ անուն տանք սրտին.
Սիրտ - սիրուհի խառնվել են, ձուլվել հոգուս խորքերում,
Սիրտս հրն է, սերս՝ հրը, ինչպես պարզեմ վերստին:



Վայ այն օրվան, երբ ինձ շիրիմ կդնեն,
Գլխիս վրա հող ու մոխիր կցանեն.
Ոչ ոտք կլնի, որ փախուստ տամ օձերից,
Ոչ ձեռք կլնի, որ մրջյունին փախցնեմ:



Արի, սոխակ, մեկտեղ լացենք մեր սերը,
Դու ինձնից առ ցավոտ սիրո դասերը,
Կորած վարդիդ դու լոկ հինգ օր ես ողբում,
Ես իմ յարին՝ տարվա օրն ու գիշերը:



Սիրահարը էլ մահից չի վախենում,
Դատից, բանտից ու ահից չի վախենում.
Սիրահարը սոված գայլի է նման՝
Հովիվների հարայից չի վախենում:



Գարուն եկավ, սար ու ձորեր կանաչ հանդերձ են հագնում.
Ամեն գարուն մարդու կյանքից մի գարուն էլ է տանում.
Երբ գեղուհիք դաշտ են ելնում ժողվելու վարդ ու շուշան
Ջահեղների շիրիմներին վառ կակաչներ են բուսնում:



Զույգ հյուսքերդ զույգ լարերն են ռոբաբիս*,
 Ինչ ես տանջում հալից ընկած խարաբիս.
 Թե սեր չունես, էլ ինչո՞ւ ես հայտնվում
 Կեսգիշերիս երազներում ու ճամփիս:



Մի պահ արի՛, հա՛լս նայիր, աչագեղ,
 Գեթ մի գիշեր ինձ կյանք տայիր, աչագեղ.
 Գլխիդ վարդ ես խփել, ո՞վ իմ բողբոջ վարդ,
 Ես ձեռքերս եմ գլխիս խփում վարդի տեղ:



Գանգատ ունեմ իմ սրտից, որ բախտիս դուռն է փակում,
 Գանգատ ունեմ իմ սրտից, որ ինձ տանջում է անքուն.
 Գանգատ ունեմ իմ սրտից, որ մի վայրի թռչնի պես
 Անվերջ՝ դեռ կուտ չկերած՝ հայտնվում է վանդակում:



Ա՛խ, առանց քեզ սիրտս հրդեհ է իմ մեջ,
էլ ուրիշ գործ չունի, այրվում է անշեջ.
Երբ գնացիր, ես մանկան պես անխոհեմ
Ձեռքս գլխիս զարկում, ողբում եմ անվերջ:

ԱՄԱՂ



Սիրող աչքը թե որ քնի՝ թույլ մի տվեք,
Վառվող սիրտը ինչքան կրկնի՝ ջուր մի տվեք,
Ցավոտ սիրտս ինձնից փախավ, աստժո սիրուն,
Թե որ ետ գա դուռը ընկնի՝ լուր մի տվեք:



Դատաստանի վերջին օրից եմ վախենում,
Հողի տակի անհայտ հորից եմ վախենում,
Ինչքան էլ ինձ ասեն՝ զուր է ախուվախդ,
Բկիս չոքած մահվան գորից եմ վախենում:



Սիրտս մարմնիս մեջ հնց է զետեղվում,
Սերս գլխիս մեջ հնց է զետեղվում,
Քո մազե մեջքին՝ մի մազե գոտի,
Մազը մազի մեջ հնց է զետեղվում:



Թե որ ուրիշ ճամփա չկա, որ տեսնեմ յարիս,
Թող մի անգամ նա մոտենա մահվան սնարիս,
Թե որ սիրուց ես տանջահար՝ չտեսնեմ նրան,
Թող նա տեսնի գեթ մի անգամ խեղճ տանջահարիս:



Երբ քեզ տեսա՝ քո այտերի վարդ շուքից
Աչքս արյան ակունք դառավ արցունքից,
Ողջ գաղտնիքս վարագուրված սրտիս մեջ՝
Արցունքիս հետ հորդեց իմ աչք - ակունքից:



Կուգեմ կուրանա հիմա ամեն ոք,
Որ հրաշք դեմքդ ես վայելեմ լոկ,
Կուգեմ ես ինքս էլ կուրանամ լոկվ,
Չտեսնեմ՝ ո՞նց են քեզ նայում այլոք:



Քո խոպոպը դարձի բերեց գյավուրին,
Զոնար* դարձրեց մեղեսիկը իմ հուրին²,
Քո տենչանքից Քաբեն* դարձրեց ատրուշան*
Կենդանացավ կուռքը՝ կարոտ քո բույրին:



Թող ձմեռ դառնա գարունը չարի,
Ձեռքիդ խոպոպը լինի քո յարի,
Թշնամուդ աչքը կարմրի լյարդի պես,
Բախտը ուղեկից դառնա քեզ բարի:



Չկա մի պահ, որ դու սիրտս տակնուվրա չանես,
Եթե դա է քո ուզածը, էլ ինչո՞ւ դա չանես,
Դու իսկապես սիրում ես ինձ, ես դա լավ գիտեմ,
Բայց չես ասի, մինչև սիրտս արյուննվա չանես:

ՍՈՒՋԱՆԻ



Ո՛վ գեղուհի, ես չգիտեմ, թշնամի ես, թե բարեկամ,
Ա՛խ, մեր ջուրը դեռ նույն առվով չի գնացել ոչ մի անգամ.
Թե համբույր տաս ու այնուհետ բյուր հարվածներ տեղա գլխիս,
Հարվածը բախտ է ինձ համար, թե դրա մեջ ձեռքերդ կան:



Ես այն ընկերն եմ որոնում, որ արյան պես մերված է ինձ,
Ընկերոջից փախչել չկա, ընկերը քաղցր է ամենից.
Այն յարին եմ ես յար ասում, որ կողքիս է օր ու գիշեր,
Ինձ ինչ, թե նա բարեկամ է, եթե հեռու է ինձանից:



Քո զարդատուփ շուրթին դիպավ իմ շուրթը¹,
 Ասես քո թեժ սրտին կպավ իմ շուրթը:
 Գոհ եմ, թեև դիմացը մեն համբույրիդ
 Բյուր հարվածի արժանացավ իմ շուրթը:



Մի ողջ քաղաք նրա հրաշք գեղեցկության խոսքն է անում,
 Բոլոր սրտերը մարդկային նա իրեն է ընդմիշտ գամում.
 Զանք ենք թափում մենք ամենքս՝ թե ես, թե դու, թե ուրիշը,
 Տեսնենք թե հմ կշռկի նա, տեսնենք այդ հմ բախտն է բանում:



Քո շուրթերին դեռ մայրական կաթի նրբին ցողերը կան,
 Շուրթիդ վերև ոսկեդեղձան աղվամազի շողերը կան,
 Ի՞նչ աղվամազ, քանի որ կեռ աղեղների տակ հոնքերիդ
 Քո աչքերում աջ-ձախ զարկող սուր նետերի շեղբերը կան:



Ամեն օր իմ սրտի լեզուն տարբեր-տարբեր բան է խոսում.
 Ամեն օր իմ պաշտելին էլ տարբեր-տարբեր բան է ուզում.
 Իմ հոգյակը չի մտածում ու վեջը չէ բոլորովին,
 Որ այս անցվոր կյանքից հետո ուրիշ կյանք է մեզ սպասում:



Սիրուդ ցավից ինձ սև հողը սև անկողին դարձավ, սէր իմ,
 Երբ հեռացար, քաղցր կյանքս թույն ու լեղի դարձավ, սէր իմ.
 Ո՛վ իմ լուսին, այս լուսնի տակ ես այնքան շատ տառապեցի,
 Որ իմ ջուրը արցունքների հոլր ու աղի դարձավ, սէր իմ:



Մինչ վարդ դեմքիդ սիրով է իմ սիրտը տարվել,—
 Վարդի նման, ոտքըս... ցեխի մեջ է խրվել,
 Մինչ գերվել եմ խոպոպներիդ,— նրանց նման,
 Խճճվել են իմ գործերն ու հանգույց դառել...



Լվացարար տղան՝ արև դեմքով գերում՝
Մեր աչքերից հույզի արցունքներ է բերում,
Որպեսզի այդ տղան լվացքը լավ անի՝
Զրին-արևին է հույսով ապավինում:

ԶԱՄԱՆ ԱԴ - ԴԻՆ



Ասաց, որ իմ սիրուց իր հոգին շատ սուրբ է,
Եվ առանց ինձ, ասաց, իր համար շատ ցուրտ է,
Ես լավ գիտեմ, անշուշտ, որ անկեղծ չէ խոսում,
Բայց ինչ անեմ, եթե... դա հաճելի սուտ է:



Իր խոպոպներով սիրտ է գերում նա,
Սակայն ոչ մեկին չի պատկանում նա,
Ասում են՝ ալ են խոպոպներն այդ սև,
Ո՞նց ալ չլինեն՝ սիրտս է քերում նա:



Իմ հալը սև է՝ քո խալի նման,
 Մեջքս ծոված է՝ ծուռ տառի նման,
 Զնգզնգում եմ թույլ՝ քո ոտքերն ընկած,
 Ոտքիդ ոսկեգույն շղթայի նման:



Յարս, որ դեմքը թաքցնում էր հեզ,
 Ասաց. «Չեմ քնել գիշերն առանց քեզ»:
 Գերի կգնամ, թե այդպես լինի,
 Եվ՝ ծառա, եթե միշտ ասի այդպես:



Ինձ մերժած՝ յարս նորից հետ դարձավ,
 Իմ սիրտը գերեց, մարեց դարդ ու ցավ,
 Կամ իմ անարդար աստվածն է քնել,
 Կամ քնած բախտս նորից արթնացավ:



Գնացիր, քեզ համար շատ էի վախենում,
Եկար, բայց ես հիմա նորից եմ վախենում,
Երեկ վախենում էի դուշմաններիս լեզվից,
Այսօր բարեկամիս աչքից եմ վախենում:



Ասացի՝ ինչո՞ւ, երբ իրար հետ ենք,
Շուտ անջատվում ենք, ասես թե խենթ ենք,
Ասաց՝ շատ հաճախ պիտի անջատվենք,
Քանզի միասին աղեղ ու նետ ենք:



Դեմքը լուսնի պես՝ սև մազեր վրան,
Ծամը օձի պես փարվել է վրան,
Ունի է՛ն գլխից՝ սուրբ, արդար բերան,
Աստված, չար աչքից հեռու տար նրան:

ՄԱՀՍԱԹԻ ԽԱՆՈՒՄ



Արի ինձ մոտ, քեզ լավ տեղ եմ պատրաստել,
Վարագույրը շատ շքեղ եմ պատրաստել,
Եկ վայելենք գինի-քյաբաբ, դրանք իմ
Լացից-սրտից՝ որպես դեղ եմ պատրաստել:



Քո շուրթերը համբուրել եմ ես տենչում,
Գինին քեզ հետ հա ըմպել եմ ես տենչում,
Արբած և խենթ, նաև սթափ վիճակում -
Չանգդ* իմ մեջ ամբարել եմ ես տենչում:



Ղասաբս՝ ըստ իր ադաթ-արիեստի,
 Ինձ գետնեց, մորթեց, սպանեց էլի,
 Հետո գլուխը դրեց ծնկներիս,
 Թողեց շունչ քաշեմ, որ մաշկս հանի:



Դու իմ ղասաբն ես, բայց ինձ մի կախիր,
 Բաժանման հրով դու ինձ մի դաղիր,
 Քո արիեստն այն է՝ մորթես ու ծախես,
 Եթե ինձ մորթես՝ գոնե մի ծախիր:



Ճամփին գլորված մի մարդ գինով էր,
 Օգնեցի-տարա, դա ապահով էր,
 Հիմա, երբ լուրջ է, ոչինչ չի հիշում,
 Իբր չգիտի, թե օգնողն ո՞վ էր:



Քեզ քնքուշ փարված վառ գիշերներս անցան-գնացին,
Թարթիչով հղկած վառ արցունքներս անցան-գնացին,
Իմ բերկրանքն էիր, երանությունը, հույսը իմ սրտի,
Քեզ անկեղծ ասված պայծառ խոսքերս անցան-գնացին:



Սերս գնաց արյուն հանող հեքիմի մոտ,
Սա վեր կացավ, լուռ շոշափեց ձեռներ ու ոտ,
Ու հենց դիպավ սայրը նրա նուրբ երակին,
Բյուրեղ հոսքից կարմիր մարջան կայծկլտաց հորդ:

ԱՆՎԱՐԻ



Յարս մեր պայմանը մտքից հանեց-գնաց,
Մեր սիրո պատգամը քամուն տվեց-գնաց,
Ոտքս կապեց տանը, ազատ վազեց-գնաց,
Հուր գցեց իմ ջանը, ու քամու պես գնաց:



Երեկ գիշեր յարիս հետ միացման պահ էր,
Երջանկության և գինու լիացման գահ էր,
Այսօր առանց իմ յարի՝ սրտիս մեջ ահ է,
Այսօր ահ է, իսկ երեկ հիացման պահ էր:



Բացի վշտից երկար՝ ինձ հուզմունք չմնաց,
Իմ խելքից բնական՝ մի արդյունք չմնաց,
Մեկ-մեկ արցունքներից հովանում էր սիրտս,
Բայց լաց եղա այնքան, էլ արցունք չմնաց:



Մի երկու գավ անարատ գինի խմեցի երեկ,
Ընկերներիս հետ գիշերը դարձրի մի ցերեկ,
Այսօր այնպես եղավ, որ խեղճ եմ ու մենակ,
Հոգսի մոտ եմ նստած, մի շիշ գինի՜ բերեք:



Երեկ քեզ հետ նստած էինք միասին, անհոգ,
Այսօր արդեն ձեռնուռայն եմ, մենակ ու անօգ,
Ես ամոթից կմեռնեմ, թե վաղը հարցնես,
Թե այն կրքոտ սիրահարն ապրո՞ւմ է արդյոք:



Բացի քեզնից՝ սիրտս ոչ մեկին չեմ տա,
Թանկ եմ առել սերս, ոչ մեկին չեմ տա,
Ես հարյուր կյանք կտամ՝ քեզ հասնելու համար,
Բայց քեզ տենչող սիրտս, հարյուր կյանք տան՝ չեմ տա:



Կյանքս ապրեցի բաժանման հրում,
Սրտիս մեջ շեմիդ հողն եմ ես կրում,
Վարսերիդ բույրն եմ առնում զեփյուռից,
Պատկերդ տեսնում ամեն մի ջրում:



Այն սերը, որ չի մեռանում՝ այս է,
Այն ցավը, որ չի հեռանում՝ այս է,
Այն, որ տանջում է անանուն՝ այս է,
Գիշերը, որ չի լուսանում՝ այս է:



Իր նազանքով յարդս իմ սիրտն ավար արեց ու գնաց,
Թեթև վարքով վշտիս մեկը հազար արեց ու գնաց.
Ինչքան որ հւշ իմ ձեռքն ընկավ, այնքան, ավանդ, շուտ գնաց
Հուր կրակն իմ սիրտը գցեց - ինքը ծխի պես գնաց:

ԽԱՂԱՆԻ



Հոգուդ հավքը հանկարծ թռավ՝ ինչ ես դու¹,
Ճամփիդ կիսում ձիդ որ կորավ՝ ինչ ես դու.
Եթե մարդ ես, կյանքը փոխ է տրված քեզ,
Փոխ տվողը որ ետ տարավ՝ ինչ ես դու:



Ասում են թե հազար տարին մի անգամ
Մի փրկիչ է աշխարհ գալիս, մի պատգամ.
Մին երբ եկավ, ծընված չէինք մենք մորից,
Մին էլ որ գա՝ մեռած կըլնենք ցավերից²:

¹ Այս և հաջորդ երկու քառյակը թարգմանել է Հ. Թումանյանը:



Անցա՛ք քարը սըրտիս վրա՛ ջրի պես,
 Մենակ տատասկ ու փուշ տեսա՛ք ջրի պես,
 Իմ աշխարհում հանգիստ չառա՛ ջրի պես,
 Ու գնացի, ետ չդառա ջրի պես:



Կորավ հոգին հեգ Խաղանու, գերի դարձավ ահ ու դողին,
 Բախտը փշրեց սիրտը նրա, կարոտ թողեց հուսո շողին,
 Ինչ աշխարհում բաժինն է մեր ու եփվում է Աստծո ձեռքով,
 Կամ անալի, շատ անալի, կամ աղի է ամբողջովին:



Իր քաղցրահամ շրթունքներից երեք համբույր ինձ խոստացավ,
 Գիշերն ամբողջ՝ այրող տեսիլք, գիշերն ամբողջ տենդ էր ու ցավ,
 Առավոտյան նրան ասի. «Խոստացածդ տուր, սիրելիս»,
 Նա վեր քաշեց բարակ ուսերն ու մանկան պես չքմեղացավ:



Թեև կյանքում մարդ ես անկախ դու տաղանդով քո անհատնում,
 Բայց չար մարդիկ ծաղրում են քեզ ու թույնն իրենց վրադ
 վատնում,
 Երբ տաղանդ է մեռնում հանկարծ, ուրախանում ես դու, աշխարհ,
 Ցույց չես տալիս լավին մատով, մատով մահվան ես դու մատնում:



Ոտքիդ հողը կդառնայի, թե չար ու վատ չլինեիր,
 Կտանեի նազերդ ամեն, թե անհավատ չլինեիր,
 Թե հույս տայիր, որ միտք ունես իմ սրտի հետ ընկերանալ,
 Դու արցունքոտ իմ աչքերից առավել թանկ կլինեիր:



Մեզ վրա երկինքն այս որքան չար է իր պտույտն անում,
 Կրկնելով իրեն, հին-հին ցավեր է մեզ բաժին հանում,
 Սակայն երկնքից դու մի բողոքիր, հողս իր գլխին,
 Նա չար է այնքան, որ այդ հողին էլ չի արժանանում:



Դու այն օրվանից, որ սիրո հրով սիրտս վառեցիր,
 Հազար սրտի հետ, հազար սրտի մեջ այդ նույնն արեցիր,
 Դաժանությունն այդ հմից ես, ասա՛, սովորել կյանքում,
 Ինչո՞ւ ինձ համար դու այս կրակե կապան կարեցիր:



Խենթ խաղանին կրծքին սեղմեց ու համբուրեց քեզ անկշտում,
 Շրթունքներն են ցավում հիմա, ինչպես սիրտը՝ սիրո վշտում,
 Կրակ էին շուրթերը քո, ու բշտեցին շուրթերն իմ խեղճ,
 Ի՞նչ կա այստեղ զարմանալի, կրակից է մաշկը բշտում:



Քո խոպոպը սահել է վար, ասես դեմքիդ քող է տվել,
 Քո այտերին մուշկի* բուրմունք, շողքիդ մի նոր շող է տվել,
 Դրախտային փերի ես դու, հուրի ես դու... ինձ ճիշտն ասա,
 Ո՞վ է արդյոք քո ստնտուն, այդ կաթը քեզ ո՞վ է տվել:



Դու արև ես, ես՝ նունուֆար, ականջ արա սրտիս լացին,
 Թեև ժպիտ կա շուրթերիս, բայց ծաղիկ եմ արցունքածին,
 Դեմքս դեղին, խիստ է դեղին, կապուտակ է սիրտս, սակայն,
 Գիշերները մեռնում եմ ես, կենդանանում՝ լուսաբացին՝:



Անհետ կորած իմ մարգարիտ, ասա, ախ, ի՞նչ քեզ որոնեմ,
 Ոտքս՝ հազար փուշ ու քարի, այսպես տխուր քեզ որոնեմ,
 Ամեն մարդուց մեկիկ-մեկիկ հարցում անեմ ես քո մասին,
 Սակայն գիտեմ, ուր էլ գնամ, ախ, պիտի զուր քեզ որոնեմ:



Ո՛վ Խաղանի, գերի դարձար հուր ու ոսկուց սերված յարին,
 Նա սրտի տեղ քուրա ունի ու զուտ ոսկուց ձուլված մարմին,
 Քուրայի մեջ ձուլվող ոսկին զարմանալի բան՝ չէ բնավ,
 Ոսկու խորքում վառվող քուրա - սա է, իրոք, զարմանալին:



Ամբողջ շաբաթ արև-յարս ինձ տանջանք էր միայն բերում,
Հետո եկավ Խաղանու մոտ ու նրանից հայցեց ներում,
Ստիպված է արեգակը խեղճ հյուլեին գնում այցի,
Ինքը հյուլեն ինչպես գնա - կայրվի նրա հրդեհներում:



Սրտիս մոխիրը՝ քո թաքցրածը, հետ տուր, սիրելիս,
Թեև նա՝ սրտիս արյունով թաց է, հետ տուր, սիրելիս,
Շուկայում, ուր ես սիրտ էի ծախում, իսկ դու՝ շուրթերդ,
Առատուր չեղավ, ձրի տարածդ հետ տուր, սիրելիս:



Կյանքը՝ ոչինչ, սին ու ոչինչ, այս գոյությունն էլ է ոչինչ,
Ամենայն ինչ՝ կալվածք ու ինչք ու այս հին տունն էլ է ոչինչ,
Այս եղյալի ու չեղյալի հարստությունն ամենամեծ
Ջահեղությունն է, բայց, ավանդ, ջահեղությունն էլ է ոչինչ:



Ո՛վ Խաղանի, սիրտդ կյանքում սիրո հրին սիրահարվեց,
 Համբերանքդ սնվեց ցավով, անվերջ վառվեց ու սպառվեց,
 Թիթեռնիկը խավարի մեջ տեսավ հանկարծ բոցը մոմի
 Եվ նմանվել ուզեց նրան, բայց նրա հետ ինքն էլ այրվեց:



Քաղցր շուրթերդ երկերեսանի դինարի* պես են,
 Ջրպարտիչ մարդու ու դավաճանի հնարի պես են,
 Օտար շուրթերից պղծված շուրթերով անունս չտաս,
 Քո այդ շուրթերը ահեղ արատի ու չարի պես են:



Գեղեցկուհու հետ ես սեր խաղացի, օգնւտ չտվեց,
 Խորամանկեցի, սուտ ու մուտ լացի, օգնւտ չտվեց,
 Խարդավում էի, բայց խարդավանքից հվ է շահ տեսել,
 Ձեռքս դատարկ է, անի, զուր ջանացի, օգնւտ չտվեց:



Ամաչեց գինին, երբ այգում բացված ալ վարդին նայեց,
Վարդն էլ ամաչեց, երբ սիրուց շիկնած քո այտին նայեց,
Այնպես ամաչեց, որ ոտից գլուխ կաս կարմիր դարձավ,
Դա քիչ էր ասես՝ դեմքին ամոթի քրտինք էլ թառեց:



Ընդունիր սիրտն այն, որ ինքդ ես մի օր անփույթ կորցրել,
Ընդունիր որսն այն, որի սրտի մեջ քո նետն ես խրել,
Կուգես չգործած մեղքերս ներիր, կուգես սպանիր,
Ինձ համար մեկ է, միթե ինձ նոր ես գերի դարձրել:



Ո՛վ Խաղանի, թե աշխարհում միևնույնն են թե լավ, թե վատ,
Դու ոչ ոքից մի բողոքիր, ուրեմն բախտն է ապերախտ,
Եթե ամեն չարիք ու սուտ ճակատագիրն է առաքում,
Էլ ճիշտ պիտի ճիշտը փնտրես և ճիշտ պիտի գտնես դրախտ:



Կուռքերն անգամ քեզ տեսնելիս խոնարհվում են ամոթահար,
 Քո շուրթերի փայլը շողուն հոգու համար դեղ է ու ճար,
 Համբուրել եմ, իմ սիրելիս, մարջանները քո շուրթերի,
 Բայց իմ սրտի վերքերը խոր ատամներիդ հետքերն են չար:



Երբ հավքն իր երգով սաստիկ է թախծում, սերն է, իմացիր,
 Երբ գաղտնիքներ է սոխակը բացում, սերն է, իմացիր,
 Երբ գոյն անհունի խորքն է թևածում, սերն է, իմացիր,
 Այն, որ մարմինն է ոգու վերածում, սերն է, իմացիր...



Այս մոմն իր սրտի՝ իր սև պատրույգի պատճառով այրվեց,
 Այս լույս մարմինն էլ սրտի սև սուգի պատճառով այրվեց,
 Թիթեռը տեսավ, թե մոմն ինչից է այրվելով մաշվում,
 Նետվեց պատրույգին ու ինքն էլ, ավանդ, այդ չարով այրվեց:



Գիտեն դու, արդյոք, թե ես աշխարհից ինչ տարա- ոչինչ,
Իմ հունձ ու կալից, իմ բերք ու բարից ինչ տարա- ոչինչ,
Ես կախարդական հրաշք-գավ էի, գավն այդ փշովեց,
Մտքի լույս էի, հանգած լամպարից ինչ տարա - ոչինչ:

ՆԵՋԱՄԻ



Թե ես այսպես խեղճ ու խն եմ, պատճառը դ՛ուր ես միայն.
Գիտեմ, որ քեզ արժանի չեմ, որ մերժելի՛ն ես միայն.
Քեզ կերագեր անգամ ինքը՝ Խոսրո՛վն՝* արքան արքայից,
Դու՛ անուշ տենդ մեր ուղեղում, մեր տենչերո՛ւմ ես միայն:



Ինձ ասում են ինչ ես գնում անվերջ նրա ետևից,
Ծաղր ես դարձել ամենքի մոտ, ընկել տեսքից ու ձևից.
Ախ, գիտուններ խորհրդատու, ես չեմ գնում, հասկացեք;
Վզիս նետել օղապարան՝ ինքն էր քաշում-տանում ինձ:



Աչքեր, աչքեր, դուք չտեսա՞ք՝ իմ սիրելին ինչ գնաց,
 Ծիծաղեց իմ լացի վրա, խղճի դուռը գոց գնաց.
 Սիրտս հոգուցս էր ուժ խնդրում, հոգիս՝ սրտիցս, իսկ նա
 Թողեց այսպես մեզ ցրտահար, ինքը՝ հուր ու բոց գնաց:



Այն հատիկը մարգարիտի, որ բնությունը թաքուն
 Գողացավ քո շուրթի տակից, այդ ղուր տարավ, տվեց ղում.
 Անշուշտ տարավ ու զետեղեց ծովի ափին ու ասաց՝
 «Ծով, իմացիր, մարգարիտը ահա այսպես է լինում»:



Ասացի թե՛ ետ տար փշերը քո սուր,
 Վարդ-համբույրդ նվիրիր, իմ սիրասուն.
 Ի՜նչ հրաշք է, երբ շուրթերդ հեզորեն
 Մոտեցնում ես, հետն էլ «պետք չէ» ես ասում:



Ընկերն այն է, երբ քո վշտից իր վիշտը ծով կլինի,
Համբերում եմ, տեսնեմ թե այդ ընկերը ո՞վ կլինի.
Միշտ այն օրից եմ վախենում, որ տրտմությունս խորունկ
Կուրախացնի իմ թշնամուն, նրա սրտո՞վ կլինի:



Դու գնացիր, քեզ այսուհետ որտե՞ղ ման գամ, ինչ անեմ,
Սիրո ցավս ես ո՞ւմ պատմեմ, ո՞ւմը պահ տամ, ինչ անեմ.
Գիտեմ, որ ես այսուհետև երբեք քեզ չեմ տեսնելու,
Սրտիցս արյուն - արցունք հանեմ, աչքս լվամ, ինչ անեմ:



Ախ եմ քաշում, ո՞ր է լսես թե հոգիս,
Համբերում եմ, գուցե հասնես դու վերքիս.
Քեզ հիշելիս շունչս հատնում է իսպառ.
Աստված չտա այսպիսի սեր ոչ մեկիս:



Ճամփա անցանք, կյանք ապրեցինք, բոլորն անցավ ու գնաց,
Դարերից դար թափառեցինք, բոլորն անցավ ու գնաց,
Մեզ ստեղծող ցեղը ո՛ր է, ինչո՞ւ ձայնը չի լսվում,
Ա՛յն, ինչ առձեռն վաստակեցինք, այն էլ անցավ ու գնաց:

ՔԱՄԱԼ ԱԴ-ԴԻՆ



Այս աշխարհում՝ չար բախտից եմ վախենում,
Նրա լավից և վատից եմ վախենում,
Մարդկանց հանդեպ չի մնացել էլ հավատ,
Ինձ ուղեկցող ստվերից եմ վախենում:



Վարդը նախանձով լսեց թո մասին
Ու քմծիծաղեց մեծամիտ և սին,
Բայց քամին այնպես ապտակեց նրան,
Որ արյուն-արցունք մաղվեց երեսին:



Ես և սիրածս՝ երկու աչքի պես
Իրար օգնում ենք հավիտենապես,
Գիշերն իրար հետ ննջում մինչև լույս,
Բայց երբեք իրար չենք տեսնում այդպես:



Ինձ լավությունն յարս արեց: Չարեց:
Գոնե արդար մի բան արեց: Չարեց:
Թերթևունքի հազար նետեր ուղղեց վրաս,
Բայց վրիպեց, սխալ արեց: Չարեց:



Լացը մեր մեջ թաքցնում ենք, ինչպես վարդը,
Աշխարհ գալիս և անցնում ենք, ինչպես վարդը,
Մենք վշտերին միշտ հենակ ենք, ինչպես վարդը,
Եվ մարդկանց մեջ միշտ մենակ ենք, ինչպես վարդը:



Չնայած արևն աշխարհում մեկն է,
Բայց էլի վշտով երևի լիքն է -
Երբ նա ծագում է՝ թույլ է և գունատ,
Երբ մայր է մտնում՝ արյունաներկ է:



Երբ տեսա քո սուրբ գեղեցկությունը,
Կորավ իմ խինդը, ուրախությունը,
Արցունք - գանձերով լիքն է իմ տունը,
Քանի որ բաց է աչքերիս դուռը:



Ուզում ենք իրար հանդիպել անհագ,
Բախտն է երկուսիս ծաղրում շարունակ:
Բայց թող իմանա՝ հենց իրար գտանք -
Այդ բախտի՛ վրա մի կուշտ կխնդանք:



Ես վախենում եմ հալչել քո հրից,
Անվերջ ուզում եմ փախչել քո հրից,
Բայց ես նման եմ պատրույգի թելին —
Կայրվեմ, չեմ կարող շրջվել քո հրից:



Ամեն ինչ փոխվում է ժամանակի հետ,
Չեն քաղցրանում մարդիկ շաքարից էլ գեթ,
Երեկ ծիծաղել եմ աշխարհի վրա խենթ,
Այսօր իմ ծիծաղն է աշխարհին թվում խենթ:



Ես, տառապյալս, քո ոտքն եմ ընկել,
Քեզ միանալու համար եմ եկել,
Մոմ եմ, ում գլխին պաղ ջուր է եկել,
Բայց ծարավից է լեզուն դուրս եկել:



Ասի՛ լավ փերի աշխարհում շատ կա,
 Ասաց՝ ինձ նման աշխարհում չկա,
 Ասի՛ բոլորն էլ ունեն երկու աչք,
 Ասաց՝ ամեն աչք աչք չէ, հավատա:



Շատ եմ տեսել այս աշխարհի վերքը ես,
 Հազար տեսակ ոսոխների ձեռքը ես,
 Բայց գործերս լավանում են նույն պահին,
 Երբ տեսնում եմ գինու գավի դեմքը ես:



Հիմա, երբ կյանքում մի լավ բան չկա,
 Եվ բացի գինուց՝ բարեկամ չկա,
 Մի սեղմիր այլ ձեռք, բացի բաժակից,
 Նրան արժանի ուրիշ բան չկա:



Ամեն պահը, որ մենք կյանք ենք համարում,
 Չենք սխալվում, որ շատ թանկ ենք համարում,
 Վերջում կգգանք, որ ապրել ենք լոկ մի կյանք,
 Եվ այդ կյանքն էլ շատ դատարկ ենք համարում:



Նետի նման ես, հեռու ես գնում,
 Լուսնի նման ես, ցերեկն ես գնում,
 Լացի նման ես, ինձնից ես գնում,
 Կյանքի նման ես՝ գալիս ես-գնում:



Ինչքան հեռու է դեռ լուսաբացը,
 Ասես կորել է ջինջ լուսաբացը,
 Թե մթնում սիրտը ճամփան չի գտնում,
 Արև, մոտեցրո՛ւ քո լուսաբացը:



Բաժանման խոր դարդից հորդել են արցունքներս,
Դեմքիս վարդագույնը բերել են արցունքներս,
Անսահման երկնքում աստղեր կան պսպղուն,
Երկինք են աչքերս, աստղեր են արցունքներս:



Գիտես, թե որքան ժամանակ անցավ,
Երբ ինձ թողեցիր, հեռացար, անցար:
Չես էլ ուղարկում սուրհանդակ, հարցնես՝
Առանց քեզ ինչեր իմ գլխով անցավ:



Չեղավ, որ բախտը ինձ մի դավ չտա,
Ճակատագիրս՝ դատարկ գավ չտա,
Չեղավ մի գիշեր, որ ինձ տա բերկրանք,
Իսկ առավոտյան դարդ ու ցավ չտա:



Կյանքն անցավ, իղձերից չենք խաբվի այլևս,
Ավելորդ հույսերից չենք կապվի այլևս,
Եթե մաքուր գինու գավից չհարբեցինք,
Գինու սև մրուրից չենք հարբի այլևս:



Աշխարհն, ասում են, միշտ պտտվում է,
Չգիտեմ, գուցե և պտտվում է,
Երբ կարմիր գինին իմ գավաթում է,
Ես հաստատ գիտեմ, որ պտտվում է:



Կյանքն ապրեցինք, բայց չտեսանք ոչ մի օգուտ,
Ճամփորդեցինք, բայց չտեսանք ոչ մի օգուտ:
Գիտությունից մենք չտեսանք ոչ մի օգուտ,
Մտքից-խելքից մեզ չմնաց ոչ մի օգուտ:



Ասում են՝ իբր իմ սիրտը խենթ է,
Աշխարհը գիտե, որ սիրտս խենթ է,
Քո խոպոպին է սիրտս հանգուցված,
Իսկ քո խոպոպը խենթերի խենթն է:



Թե չկարենամ քեզ գրկել-սիրել,
Քեզ հետ մի գավաթ գինի վայելել,
Գոնե կարող եմ համբուրել հողն այն,
Որտեղ քո սիրուն ոտքերն ես դրել:



Սիրտ չկա, որը չտանջվի վշտից,
Մարդ չկա, որը չտանջվի վշտից,
Երգող սոխակն էլ երգում է վշտից,
Կարմիր վարդն անգամ կարմիր է վշտից:



Պետք է շռայլես ոսկի և գումար՝
 Սիրեցյալիդ հետ հանդիպման համար,
 Թե մեջքին կապես ոսկեձուլլ բյամար,
 Կփաթաթվի քեզ, ինչպես մի բյամար:



Երբ սիրտը լավ է սիրում՝ նա տանջվում-լալիս է,
 Երբ մարդը լավ է զգում՝ նա հրճվում-լալիս է,
 Երբ չանգը* լավ է ձգվում՝ նա հնչում-լալիս է,
 Երբ մոմը լավ է այրվում՝ նա հալվում-լալիս է:



Երբ յարս տեսավ անկեղծ արցունքս,
 Լուռ վրա հասավ, մաքրեց արցունքս,
 Ես մոմ եմ, նա իմ պատրույզն էր վառել,
 Իսկ հիմա եկավ՝ սրբեց արցունքս:



Վարդն ուզեց քեզ պես լինել բախտավոր,
Հմայիչ լինել և քեզ նման նոր,
Հմայքը պետք է լինի մշտական,
Մի օրվա հմայք ղում է հարկավոր:



Տառապում եմ քո կարոտից, հանդիպելու քնի լուր կա,
Վառված ջիգյար՝ հեռու ջրից, հանդիպելու քնի լուր կա,
Քո խոպոպը և նազանքը տեղյակ չեն իմ վիճակին,
Խենթի համար՝ այս աշխարհից սփոփվելու քնի լուր կա:



Վարդը փորձեց բուրել քեզ պես, սակայն իզուր,
Քո գույնն առնել, սիրել քեզ պես, սակայն իզուր,
Մի տարվա մեջ փորձեց հազար ձև ընդունել,
Գոնե մի պահ նմանվել քեզ՝ սակայն իզուր:



Նայեք կակաչին և այս գավին դուք,
Գավն էլ սև ունի՝ գինու մեջ արցունք,
Այն ցողը, որ կա թերթին կակաչի —
Իմ արցունքն է դա, լավ հիշեցեք դուք:



Հոգիս վեր է թռչում՝ այրվող մոմի նման,
Ապա վար իջնում՝ հալվող մոմի նման,
Թե ձուլվել ես ուզում, ոնց թիթեռը մոմին,
Արի, քեզ եմ տենչում, մարվող մոմի նման:



Թող դու կյանքում ցավ չտեսնես, չզգաս երբեք,
Թող դու կյանքում դավ չտեսնես, չզգաս երբեք,
Թող քո սիրուց նիհարեմ ես՝ մի մազի պես,
Բայց քո գլխից թող չպակսի մի մազ երբեք:



Բարեկամ, զուր ես դուշման կարծում ինձ,
Իմ հալը լավ ես հասկանում ինձնից,
Ես քեզ չեմ խնդրում ներել ու սիրել,
Իմ խոր ցավերը հայտնի են լոկ ինձ:



Եթե ուզում ես սիրուց մեռնեմ,
Քո ցանկությունը կկատարեմ,
Եթե կրակից այրվի տենչդ,
Մոմի պես կայրվեմ և կհալվեմ:



Ես չեմ հասկանում, թե սա ինչ բան է,
Սիրո կարոտը ցավի նման է,
Այն ցավը, որ դու տալիս ես հեռվից,
Իմ երազանքի պես անսահման է:



Դեղ ու ճար չկա երբեք մահին,
Շահն ու վեզիրն են նրա գերին,
Շահն էր՝ որպես որդ աշխարհն ուտում,
Այսօր որդերն են ուտում շահին:



Աչքերիցդ ցած կթափես, եթե ջուր դառնամ,
Օջախումդ ինձ կմարես, եթե հուր դառնամ,
Ձեռք չես մեկնի գավին, թե դառնամ գինի,
Աչքերիցդ ինձ կվանես, եթե քուն դառնամ:

ՌՌԻՄԻ



Խղճով դատիր, սերը սուրբ է և միշտ նոր է,
Իսկ սիրո մեջ նենգությունը վշտից խոր է,
Դու քո կիրքը մի հորջորջիր, որպես մեծ սեր,
Կրքից մինչև անկեղծ սերը՝ սար ու ձոր է:



Ասացի՝ գարուն է, այգին տեսնել է պետք,
Եկ այնտեղ՝ վարդն ու գինին տեսնել է պետք,
Թե դու այնտեղ ես, այդ բոլորն ինչիս է պետք:
Թե դու այնտեղ չես, այդ բոլորն ինչիս է պետք:



Ով իր կրծքի տակ մի քիչ սիրտ ունի,
Առանց քո սիրո՝ դժվար թե ապրի,
Իսկ ով խոպոպիդ օղակն համբուրի
Ու չխենթանա՝ խենթ կհամարվի:



Ես արբած եմ, բայց դա կարմիր գինին չէ,
Իմ մեջ ուրիշ արբեցում է, գինին չէ,
Դու եկել ես, որ իմ գինին ցրիվ տաս,
Բայց հոգուս մեջ քո իմացած գինին չէ:



Ես ինքս ինձնից փախչել եմ ուզում,
Ազատության մեջ շնչել եմ ուզում,
Միշտ եղել եմ քո շղթաների մեջ,
Այդ շղթաները փշրել եմ ուզում:



Խելառ չեմ, բայց ինձ խելառ են ասում,
Օտար չեմ, բայց ինձ օտար են ասում,
Գիշերապահներն իրենք են հարբած,
Բայց ինձ հարբեցող - տկար են ասում:



Երբ գարնանային ջերմ շունչ է լինում,
Յարը յարի մոտ և շուրջն է լինում,
Այնժամ, երբ յարը գտնում է յարին,
Ասես վարդերի մի փունջ է լինում:



Ես միշտ աշխարհում քեզ պես եմ եղել —
Սերը ծաղրել եմ, այդպես եմ եղել,
Հիմա խելառ ու արբած եմ սիրուց,
Կարծես ողջ կյանքում այսպես եմ եղել:



Ես ծերացա, բայց ոչ ծերի տարիքից,
Ես ծերացա քո նազերի չարիքից,
Դու շատ էիր կարիք զգում՝ ինձ գերել,
Թռչունն էիր, կուտ դարձա՝ քո կարիքից:



Աստված չանի, թե աշխարհում քեզանից լավ յար լինի,
Կամ, քո դեմքին նայելուց զատ, ուրիշ բարիք-բար լինի,
Դու ես միակ իմ սիրելին և Ա՛յս և Ա՛յն աշխարհում,
Որտեղ դու ես՝ լույսը վառ է և պիտի միշտ վառ լինի:



Ասացին. «Քո դեմքը՝ դալուկ, ասա, ինչի համար է,
Քո անի ու վախն ու վիշտը լուռ, ասա, ինչի համար է»;
Ես ասացի. «Նայիր յարիս լուսնի նման երեսին,
Եվ առանց խոսք կհասկանաս՝ թե ինչն-ինչի համար է...»:



Երբ ես մեռնեմ,- ինձ օգնեցե՛ք,—
 Իմ դին՝ յարիս նվիրեցե՛ք,
 Իսկ երբ նրա ջերմ համբույրից
 Ես շնունչ առնեմ՝ մի՛ զարմացե՛ք:



Թե կյանքն անցնի - աստված ճշմարիտ կյանք կտա քեզ,
 Փնայ կյանքի տեղ՝ հավերժ, դյուրթի՛շ կյանք կտա քեզ,
 Սերը «Կենաց ջո՛ր» է - նրա կաթիլն ամեն,
 Կյանքի ծո՛ղ է, որ մի ճշմարիտ կյանք կտա քեզ...



Երեկ գիշեր, խոպոպների միջից նայեց յարըս ինձ,
 «Ինչպե՛ս կարող ես,- ինձ ասաց,- ապրե՛լ, շնչե՛լ առանց ինձ»:
 Ասի. «Աստված վկա,- այնպե՛ս, ինչպե՛ս ձուկը... առանց ջո՛ր...»;
 Ասաց. «Մեղքը քոնն է, ազի՛զ, ո՞վ էր ասում նայես ինձ...»:



Հովսեփ, քո հոր տանն էիր լոկ դու ապահով դավ ու դատից,
Քո եղբայրներն ու անապատն՝ ահ ու մահ են, Աստծո պատիժ¹,
Ընկերացիր թեկուզ գայլին, բայց նախանձից հեռու մնա,
Նախանձի գայլն ահավոր է՝ քան քաղցած գայլն անապատի:



Սիրահարը չխոնարհվի թե իր յարին - Դնչ անի.
Գիշերը թե այցի չգա յարի թաղին - Դնչ անի.
Երբ նա ծամերըդ համբուրի, մի նեղվի ու նեղանա,—
Խելագարն իր շղթաները թե... չծամի - Դնչ անի:



Երբ գիշերը երազիս մեջ երևում ես մինչև լույս,
Ցերեկն էլ ես անվերջ ինձ հետ, թեև անհաս ու անհույս.
Փիղը, երբ որ երազի մեջ իր Հնդկաստանն է տեսնում,
Առավոտյան առավել է տենչում փակից ելնել դուրս:



Գիշերն անցավ, բայց չգիտեմ ես գիշեր է, թե ցերեկ,
 Իմ գիշերս ցերեկ դարձավ նրա դեմքից լուսատեսք.
 Ո՛վ գիշերներ, դուք գիշեր եք, զի չգիտեք դուք նրան,
 Ո՛վ ցերեկներ, նրա լույսից դուք էլ լույս տալ սովորեք



Զուլալ է իմ սերը, ինչպես զուլալ ջուր,
 Իմ սերը ինձ դարձրեց բարձր ու մաքուր,
 Թե գցում է սերն ուրիշին դռնեդուռ,
 Ես ու սերս մեր սիրելի՜լ ենք ամուր:



Քեն ու նախանձ քո սրտիցը դուրս վանիր.
 Գեշ մտքերդ, գեշ բնույթդ այպանիր,
 Թե վատ գործ ես բռնել՝ իսկույն կասեցրու,
 Լավ համբավդ ավելացրո՛ւ, պահպանիր:



Ես ասացի՝ աչքս. ասաց՝ Ամու-Դարյա կդարձնեմ.
Ես ասացի՝ սիրտս. ասաց՝ արյուն-արցունք կհոսեցնեմ.
Ես ասացի՝ իսկ մարմինս. ասաց՝ երկու-երեք օրում
Խաղք-խայտառակ կանեմ ու քեզ աքսորի դուռ կհասցնեմ:



Ասա՛, քամի, դու քնչ տեսար քո ճամփին.
Վառված-տարված մի սիրտ տեսա՛ր քո ճամփին.
Սիրտ, որ հրով ժռ քարեր է հալեցնում,
Ածուխ կտրած գրանիտ տեսա՛ր քո ճամփին:



Իմ սիրուհին ամենքի մեջ հույժ թաքուն է, իմացի՛ր.
Մի կես խոսքից ինձ հասկացող, խիստ գիտուն է, իմացի՛ր.
Կրծքիս վրա իջած լուսին, լույսի սյուն է, իմացի՛ր,
Հոգու նման՝ իմ խորքերում, իմ մարմնումն է, իմացի՛ր:



Երեկ տեսա իմ հոգյակին սիրասուն,
Ամենքի մեջ նստել, ասում էր, խոսում.
Տենչս զսպած՝ դեմքս դեմքին մոտեցրի՝
Իբր՝ նրա խոսք ու զրույցն եմ լսում:

ՍԱԱԴԻ



Աչքում, սուրմայի* տեղ, փռւշ տեսնելը,
Կայծակից՝ դեզիդ այրված տեսնելը.
Վզիդ Ֆռանկի* լուծը տեսնելը, —
Լավ է՝ քան ... դոստի ... դուշման տեսնելը:



Երբ սիրտը չի հասնում տենչին իր անհնար,—
Ճարն ինչ, պիտի լուռ համբերի ու դիմանա,
Նա կամ պիտի վարդ չքաղի - անվարդ մնա,
Կամ՝ փշերի ցավը տանի ու դիմանա:



Ասում են, թե «յարըդ վատն է, ապահարզան տուր քո յարին,
Աղարտվում է թեթև վարքից գեղեցկությունը քո յարի»:
Աստծո՛ սիրույն - իմ ու յարիս արանքը մի՛ մտեք, մարդիկ,
Եվ լավ, և վատ, և վիշտ, և ցավ - գալիս է իմ սիրած յարից:



Այս գիշեր, երբ սիրած յարըս հոգիս հանում է.—
Ի հեճուկս իմ ոսոխների, բախտըս բանում է.
Մո՛մ, մի՛ վառվիր, հանգի՛ր, լուսի՛ն, քանզի ինձ համար
Այն գիշեր, երբ նա ինձ հետ է՝ ցերեկանում է...



Ղազին* սիրով նահատակվեց ալլաիի սիրույն —
Բայց ամենից խելոք է նա, ով զոհվի ... սիրոյն ...
Աստված ահեղ դատաստանին ինչպե՛ս իմանա —
Ո՛վ է զոհվել ... իր թշնամուն, ո՛վ՝ իր սիրելուն ...



Ամեն մի քար Բադախշանի* սուտանկ թե լիներ,
 Սուտակի և քարի գինը նոյնը կլիներ,
 Թե պատահած ամեն հորում՝ «Կենաց ջուր» լիներ,
 Ինչ ուզեիր՝ գտնելը հեշտ - հանգիստ կլիներ:



Այն գիշեր, երբ կողքիս ես դու, լույսի պայծառ տոն է դառնում,
 Այն օրը, երբ կողքիս ես դու - նորուզի* վառ տոն է դառնում.
 Երեկվա օրն արդեն անցավ, վաղվա օրվան մի սպասիր,
 Այսօրվա մեջ է մեր կյանքի բարիքն ու տոնը աշխարհում:



Ամեն օր իմ սիրող սրտից արյուն է կաթում,
 Որն անտեղյակ, անգետ մարդիկ չեն էլ նկատում,
 Ով որ տեսել է Լեյլիին, գուցե միայն նա
 Հասկանա, թե Մեջնունին ինչ ցավ էր կտրատում:



Մարդկությունից առանձնացած ու դառնացած լալիս եմ ես,
Աչքըս՝ սրտիս վշտով լցրած ու վեր հառած լալիս եմ ես.
Ինչպես մանուկը - իր ձեռքից թռած-կորած ծտի համար,
Կյանքի համար իմ գնացած ու զհր անցած լալիս եմ ես ...



Ով կարծում է, թե կարող է այս աշխարհում երկնր մնալ,
Հետաձգել իր կյանքը կարճ և աշխարհում երկնր մնալ,
Նրան ասան. «մեխ մի խփիր և վրան մի սարքիր իզուր»,
Ասա. «բեռդ զուր մի քանդիր. շուտով պիտի կապես - գնաս...»:



Այն լուսինը, որ աստծո գութն էր կարծես,
Թե լավ նայես՝ հիմա մի դև է դարձել,
Դեմքը, որ նուրբ տաքացնում էր ու շոյում,
Հիմա ամռան կաշու պես է կարծրացել:



Աերս դրժեց իր խոստումը, ասաց՝ քեզնից կգնամ.
Գնաց... Ձեռքիս իր փեշերի բույրն եմ զգում ամեն ժամ.
Ասաց՝ դու ինձ մյուս անգամ երազումդ կտեսնես,
Կարծեց, որ ես իրենից ետ աշխարհում քնն կունենամ:



Հագած քուրձերը քավության խոսք բացեցի աստծու հետ,
Աչքս՝ շուրթին քարոզիչի՝ ունկնդրեցի ակնդետ.
Հանկարծ տեսա նոճեհասակ փերին անցնում էր հուշիկ,
Ո՛ր գիտունի խոսքերն իսկույն թռան մտքիցս անհետ:



Մոմը արցունք էր կաթկթում՝ հալվելիս,
Մեկ ծիծաղում էր երեսանց, մեկ՝ լալիս.
Լաց - ծիծաղը նրա գլխից կտրեցին,
Երկսայր լեզվով հիմա լեզվին է տալիս:



Հարյուր անգամ ասել եմ ես ամենքին,
Որ հայելի երբեք չտան քո ձեռքին.
Վախենում եմ տեսնես դեմքդ լուսեղեն
Ո՛ր հայացքիդ չարժանացնեն ոչ մեկին:



Ամեն անցնող չինար հասակ վրաս թափում է շողեր,
Աչքս գամում իր աչքերին, իր հրաշքին հողեղեն.
Ես բնավ չեմ ակնկալում ջահելանալ նորից-նոր,
Զէ որ ջահել օրերիս էլ ոչինչ պակաս չեմ թողել:



Սիրահարները քո դռանն այրված շրջում են, արի,
Վատ բնույթդ չեն նկատում, գերված տենչում են, արի.
Թե չեն ներել քո տված ցավն ու տանջանքը մինչ հիմա,
Հիմա ներում, ներում են քեզ ու քեզ կանչում են, արի:



Եթե մարդը հասու չէ իր սխալին,
 Դու մի ջանա խելքի բերել այդ խեղին.
 Նա իր խոսքով, իր էությամբ է այդպես,
 Գեղեցկությունն ցույց չի տա ծուռ հայելին:



Մի օր ասիր, թե այս գիշեր քեզ կտամ խինդ, սեր ու գանձ,
 Քեզ կազատեմ հոգս ու ցավից, կապանքներից մթամած.
 Իմանայիր, քանի գիշեր եկավ-անցավ այդ օրից,
 Քո խոսքերից, ավանդ, ոչինչ քո մտքումը չմնաց:



Քո օրհասը թե որ եկավ, էլ երբեք ետ չի դառնա,
 Մահը հասավ, էլ չի թողնի քեզ ու դատարկ չի գնա.
 Այսօր, երբ դեռ շնչում ես, կաս, քոնն է պահը, վայելիր,
 Որովհետև այս շենը միշտ շինականին չի մնա:



Ասում են, թե երեկ գիշեր ոստիկանները թաթար,
Մի գող էին բռնել աղտոտ, խաբեբայի մի վատթար,
Երբ դահիճը այսօր նրան կառափնարան էր տանում,
Ասաց. «Ազատ թող օձիքս, որ չպատռես բրտաբար»:

ՀԱՅԵԶ



Քամի, շրջիր աշխարհով մեկ ու սիրուս ասքը ասա,
Հարյուր լեզվով սիրուս գաղտնի տենչն ու տանջանքը ասա.
Այնպէս ասա, որ քո խոսքից ուրախները չտխրեն,
Ցավից բացի՝ դեղ ու ճարն էլ, բախտն ու բերկրանքը ասա:



Բացի քեզնից՝ աչքիս ոչ մի ուրիշ սիրուն չի գալիս.
Քո թաղից զատ՝ աչքիս ուրիշ ճամփա ու տուն չի գալիս.
Քո պատկերով քուն եմ մտնում՝ գուցե տեսնեմ երազիս,
Ա՛խ, առանց քեզ, իմ նազելի, աչքերիս քուն չի գալիս:



Ամաչում է կույս կոկոնը առաջինը քեզանից,
Շփոթված է նուրբ նարգիզը, այդ անգինը, քեզանից.
Վարդը զուր է չափվում քեզ հետ, նրա ուժն ինչ է քո դեմ.
Երբ լուսնից է իր լույսն առնում, իսկ լուսինը՝ քեզանից:



Ուրախաբեր այն հին գավը ձեռքս տուր,
Ու գավի մեջ գինու լավը ձեռքս տուր,
Գինին, որ պաղ պղպջում է, խենթացնում,
Հանգցնում է սիրո ցավը, ձեռքս տուր:



Սեր խոստացավ ու ինձ սիրո գինին որպես խաղ տվեց.
Երբ արբեցի՝ տառապանքի գավն ու ախուլախ տվեց,
Զույգ աչքերս արցունքով լի ու սիրտս լի կրակով՝
Նրա ճամփի փոշին դարձա, քամին տարավ, շաղ տվեց:



Հարստությունն՝ ինչքան էլ շատ, չարժե մեր այս զրկանքին,
Ոչ մի հաճույք չարժե մեր այս կրած անբավ տանջանքին.
Յոթը հազար տարվա խինդն ու ուրախությունն աշխարհի
Չարժե մեր յոթ օրվա քաշած հեծությանը դառնագին:



Առ խնդաբեր գինու սափորն ու արի,
Փախիր մարդու դավից ստոր ու արի,
Ականջ մի դիր ասողներին «մի գնա»,
Լսիր միայն սրտին իմ խոր ու արի:



Ընկած սիրո ետևից՝ ես անդադրում տարվեցի,
Բախտի խաղը ինչ է որ, կյանքի խաղում տարվեցի.
Ում կարծեցի ես ընկեր՝ վերջում դարձավ թշնամի,
Այդ ինչ բախտ էր իմ բախտը՝ միշտ աշխարհում տարվեցի:



Ճակատագրի խաղերը միշտ անսահման են, անհատակ,
Այդ խաղերից դողում ենք մենք և աշխարհը բովանդակ,
Ասում են, թե սևը ուրիշ ներկ չի առնում երբևէ,
Հապա ինչպես սև մազերս դարձան այսպես սպիտակ:



Եթե դու ել հանկարծ սիրո թակարդն ընկնես ինձ նման,
Հերիք է դա, որ դու գինու զոհը լինես ինձ նման.
Ո՛ր թե ինձ հետ՝ սիրո խենթիս՝ սեղան նստես գեթ մի օր,
Հերիք է, որ անբարոյի անուն հանես ինձ նման:



Այս գիշեր քո սիրո ցավից արյան մեջ եմ քնելու.
Հեռու սեր ու առագաստից՝ խուլ ու խեղճ եմ քնելու.
Չես հավատում, մոտս ղրկիր քո ստվերը - քո հոգին,
Որ տեսնի, թե քեզնից հեռու ես ինչպես եմ քնելու:



Ամեն մի օր սիրուդ ցավը մի նոր բեռ է ինձ դրկում,
 Աչքերիս մեջ մի նոր փուշ է դեմս աշխարհը փակում.
 Ես տնքում եմ, իսկ իմ բախտը հիշեցնում է ինձ անվերջ՝
 «Քո սիրուց զատ ես շատ ուրիշ հոգսեր ունեմ այս կյանքում»:



Այս աշխարհում ձեռք բերածից բան չմնաց՝ դարդից բացի,
 Սիրո լավից, սիրո վատից - բան չմնաց՝ դարդից բացի,
 Սիրտ սփոփող մի սիրած ու ջան չմնաց՝ դարդից բացի,
 Գոնե անկեղծ մի ընկերոջ «ջան» չմնաց՝ դարդից բացի:



Քեզ գրկելու-համբուրելու հուր տենչանքից մեռնում եմ ես.
 Քո հյուսիսի, ալ շուրթերի կախարդանքից մեռնում եմ ես.
 Ինչքան երկնի եմ սպասել՝ այնքան կարճ իմ ասածն ասեմ, —
 Վերադարձիր - սպասումի տառապանքից մեռնում եմ ես:



Մի անդորր անկյուն. նազը սիրունի,
 Սրինգ ու քնար, և մի շիշ գինի, —
 Հենց որ արյունըս սիրուց խենթանա՝
 Թող Հաթամ Թայի* գանձը ձեզ լինի:



Լուսնյակ յարս իր շողը արեգակից է վերցրել,
 Թաթիչների նուրբ դողը պարզ գետակից է վերցրել,
 Ողջ սրտերը սուզված են նրա այտի փոսիկում,
 Փոսիկն էլ՝ իր բուրմունքը մուշկ-համպարից* է վերցրել:



Երբ նա հանեց շորերը, ընկա հրի մեջ,
 Ասես մի-մի արև էր՝ ամեն խալի մեջ,
 Այնքան նուրբ էր իր կուրծքը՝ սիրտն էր երևում,
 Ինչպես հակինթ այն քարը՝ զուլալ ջրի մեջ:



Լուսնադեմ իմ յարը ճկուն է նոճու պես,
 Հայելին իր ձեռքին՝ նայում է ժպտերես:
 Երբ նրան թաշկինակ նվիրեցի, ասաց՝
 Ուզում ես հանդիպել, շատ մեծ մտքեր ունես:



Գինին ձեռքին՝ առվակի դեմ պետք է լինել,
 Հոգսի ծովից հեռու և դեն պետք է լինել,
 Վարդի նման մի տաս օր է կյանքը տևում,
 Ծիծաղադեմ, ջահելադեմ պետք է լինել:



Ինչպես պատմեմ Չեգեղի* նուրբ կույսերի մասին:
 Ինչպես պատմեմ իմ հալի և հույսերի մասին,
 Նրանից եմ ես տխուր, որ չկա մի մարդ,
 Որին պատմեմ իմ ցավի և հույզերի մասին:



Հավատարիմ ամեն ընկեր՝ թշնամի դարձավ,
Հալալ ամեն մի կաթնակեր՝ հարամի դարձավ:
Գիշերը շատ ունի գաղտնիք, և չես իմանում՝
Ո՞ւմից ու երբ է պատահել, որ հղի դարձավ:

1932

ԶԱՄԻ



Սովետները, իրենց խոսքով՝ ոչ բանական,
Ասում են, թե «Անցավոր են աշխարհ ու կյանք...»,
Աշխարհն, այո, և ունայն է, և անցավոր, —
Հարատն է ձգմարտությունն այնտեղ սակայն...



Դու ասում ես, թե «Սն է քուրճը իմ հագի»,
Ես բերել եմ գույնն այդ վանքից մի ֆռանկի*,
Ամեն անգամ, երբ զնգում է զանգն այդ վանքի,
Հոգիս հեռվից արձագանքում է այդ զանգին¹...



Օրըս՝ աշխարհի հոգսերով անցավ,
 «Լինել-չլինել ...» հարցերով անցավ,
 Կյանքըս, որ ամբողջ մի աշխարհ արժեք,
 Անօգնուտ ու զոհ մտքերով անցավ...



Տառապանքի, թե խնդության - երկու ակունքն էլ դու ես, Տեր,
 Անդորրության ու նեղության - երկու ակունքն էլ դու ես, Տեր,
 Աստված չանի, թե առանց քեզ ես որևէ գործ սկսեմ —
 Եվ առիթի, և պատճառի - երկու ակունքն էլ դու ես, Տեր:



Ապակիներ են գույնզգույն գաղափարներն երևի,
 Որոնց վրա լույսն է ընկնում Գոյության վառ արևի,
 Լույսը նոյնն է, բայց ամեն մի ապակու մեջ գունավոր, —
 Դեղին, կարմիր և կամ կապույտ գոյն է առնում յուրովի:



Դու գնացիր, որ, տանջանքի բեռանն ի տես սիրտս, տանջես,
 Որ իմ հոգին, ցավի փշով արյունոտես ու ինձ տանջես,
 Քեզնից հեռու ես կյանք չունեմ, և, թե այցի գաս ինձ մի օր,
 Ոտքըդ զգուշ դիր աճյունիս, որ ցավ չտաս ու չտանջես...



Այս տունն՝ իջևան չէ ուրախության,
 Այլ՝ տառապանքի, ջանքի, տրտմության,
 Ո՛ր պիտի տքենս գիշեր ու ցերեկ,
 Հանուն քո հոգու կատարելության...



Գրքի պես լավ յար - աշխարհում չկա,
 Վիշտն սփոփող ճար - աշխարհում չկա.
 Գրքից խաղաղված, անդորր իմ հոգում,
 Այլևս ցավ ու խավարում չկա...



Աչքս փակեմ՝ քեզ հիշելով եմ երջանիկ,
Աչքս բացեմ՝ քեզ նայելով եմ երջանիկ,
Քնած լինեմ, թե արթմնի, իմ գեղեցիկ,
Քո պատկերը փայփայելով եմ երջանիկ:



Կյանքիս կեսը՝ պարնայ խոսքի մեջ անցավ,
Կեսն էլ՝ ցավի ու խռովքի մեջ անցավ,
Կյանքըս, որի մի պահն արժեր մի աշխարհի —
Տես ինչ ձևով, ինչ ցնորքի մեջ անցավ...



Ափսոս, որ իմ սիրած յարն ու գեղեցկուհին ձեռքից գնաց,
Իր ծամի հետ, կյանքիս թելն էլ՝ ոլորած իր հյուսքին, գնաց.
Նա՛ իմ աչքից է հեռանում, արյունն էլ՝ իմ լքված սրտից,
Քանզի սրտից գնում է այն, ինչ որ, ավանդ, աչքից գնաց...



Թե չխախտես մարդու գոյի թալիսմանը մեծագոր,
 Ճշմարտության վարագույրը դու չես բացի քո ուժով.
 Ճշմարտությունը մի ծով է, իսկ խոսքն ու երգը՝ միրաժ.
 Ո՛չ ոք ծովի իր ծարավը չի հագեցրել միրաժով:



Իմ սիրուհին մեկն է, դիմացը սակայն
 Հարյուր հազար հայելի կա զանազան.
 Նրա դեմքը յուրաքանչյուր հայելի
 Ցույց է տալիս՝ իր մաքրության համաձայն²:



Երբ առանց քեզ գավը տարա շուրթերիս,
 Հաճույքից չէր, որ պարպեցի, սիրելիս.
 Սև աչքերդ իմ օրը սև դարձրին.
 Օրս մթնեց ու վերջ չեղավ գիշերիս:



Ամեն վայրկյան Չեգելի* գովքն եմ ասում,
 Սիրտը կոտրած մարդու վերքով եմ ասում.
 Որ աշխարհը գաղտնիքներս չիմանա,
 Գաղտնիքներս թուղթ ու երգով եմ ասում:



Ով որ քո հուր շուրթը տեսավ, քեզ հրակեզ անվանեց,
 Ով որ քո լույս դեմքը տեսավ՝ արեգնատես անվանեց.
 Գեղեցկության քո կերպերը անհամար են, անհաշիվ,
 Քո կերպերից ով ինչ տեսավ, քեզ հենց այդպես անվանեց:



Անեության աշխարհից գոյության կողմը ընկա.
 Օտարական մի անցորդ՝ այս կյանքի հողմը ընկա.
 Ասին, Ջամի, ինչ կուզես այս կողմերում, ասացի՝
 Անեություն, ուր իսպառ գոյության հետքը չկա³:



Վայ նրան, ում սերը լքի ու գնա,
Որի այգուց նոճին թեքվի ու գնա.
Ասում ես թե՝ թույլ տուր գնամ, բայց ինչպես
Կյանքը թույլ տա՝ հոգին պոկվի ու գնա:



Քո շողարձակ դեմքի կողքին լուսինները ոչինչ են,
Հյուսքիդ կողքին՝ Սալսաբիլի* լույս ջրերը ոչինչ են.
Քեզ որ տեսա՝ աչքս դարձավ հազար տեղով տեսնող աչք.
Հազար տեղն էլ քեզ եմ տեսնում, մյուսները ոչինչ են:



Աչքը, որ տեսավ քո լույս պատկերը,
Հեռվում կցողի իր արցունքները,
Ապշում եմ՝ ինչ եմ առանց քեզ ապրում,
Կամ ինչ՝ մի անգամ քեզ տեսնողները:



Իմ թշվառ սիրտը վառվեց քո սիրուց,
Իմ էությունը վառվեց քո սիրուց,
Դու ինձ զրկեցիր քեզնից, քո սիրուն,
Տխուր հաշտվել եմ այդ մտքին վաղուց:



Էյ, ինչո՞ւ տարար հոգուս խինդը բորբ,
Կարմիր կրակ է դարձել սիրտս որբ,
Երբ մի օր հողը մտնեմ քո սիրուց,
Հողից վարդ կաճի, իսկ սրտիցս՝ ողբ:



Երբ արթուն եմ լինում, հարյուր դարդի մեջ եմ,
Երբ քնած եմ լինում. հարյուր վարդի մեջ եմ,
Ամեն վայրկյան, երբ ես նայում եմ վիճակիս,
Ուզում եմ ինձ վերջ տալ, հարյուր վատի մեջ եմ:



Ես մերթ գինի, մերթ էլ գնալ եմ անվանում քեզ,
Մերթ որոգայթ, մերթ էլ դնալ եմ անվանում քեզ,
Քո անվան մեջ՝ հղջ աշխարհին է և ամեն ինչ,
Ի՛նչ անվանեմ, միայն լնալ եմ անվանում քեզ:



Դու ինձ մոտ, ով իմ սեր, դիտմամբ ուշ եկար,
Ուզեցիր շուտ սպանել, ուստի ուշ եկար,
Երբ չկա էլ կյանքս, էլ ինչո՞վ հիանամ,
Կյանքի պես գնացիր, հոգու պես ուշ եկար:



ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՂԱՔԻ (860-941)

Աբու Աբդալլահ Ջաֆար էբն Ռուդաքին՝ ֆարսի լեզվով գրող առաջին բանաստեղծը, ծնվել է Սամարղանդի մոտ՝ Փանջուղ գյուղում: Բուխարայում՝ Սամանյան թագավորների արքունիքում, գլխավորել է բանաստեղծների խումբը, եղել է արքունիքի ամենահեղինակավոր բանաստեղծը: Մոհամադ Աուֆին (13-րդ դար) հաղորդում է, որ Ռուդաքին ծնվել է կույր: Սակայն նրա պատկերներն այնքան տեսողական են և երևակայությունն այնքան վառ, որ ֆրանսիացի արևելագետ Ջ. Դարմաստերը, որը հավաստի չի համարում այդ կենսագրական տեղեկությունը, սրամտորեն նկատել է, թե «Ռուդաքին հաճախ մոռանում է իր կուրության մասին»: Ավելի հավանական է այն վարկածը, որ Ռուդաքին կուրացվել և վտարվել է արքունիքից հակաավատատիրական դարմաթյան (իսմայիլական) շարժմանը համակրելու պատճառով: Մահացել է հայրենի գյուղում՝ աղքատության մեջ:

Նրա դիվանից, որը ժամանակակիցների հաշվումներով կազմել է մոտավորապես 100.000 բեյթ, մեզ է հասել ընդամենը 1000-ը: Անխաթար են մնացել Ռուդաքիի «Խաղողի մայրը» և «Ներբող ծերության» դասիկները:

Ռուդաքիի բանաստեղծական ժառանգությունը աչքի է ընկնում իր անկրկնելի պարզությամբ (սահլ-է մոմթան), ժողովրդական ոգով, մեղեդայնությամբ, հոգեբանական տեսարաններով: Խուսափել է արաբիզմներից, իր խոսքը հարստացրել ժողովրդական բառ ու բանով:

Իրանական որոշ հետազոտողների կողմից Ռուդաքիի քառյակների պատկանելությունը կասկածի տակ է առնվում այն պատճառով, որ նրանք հայտնաբերվել են համեմատաբար ուշ շրջանի (15-րդ դար) ձեռագրերում: Այնուհանդերձ, բոլոր հեղինակավոր հրատարակություններում այդ քառյակները ներկայացված են:

1. «Մաշնունը գիտե վիճակը խենթի ու ցավն անքունի»:

Ըստ ավանդության արաբ պատանի Ղայսը այնպիսի բոցավառ սեր է տածել թուխ Լեյլիի հանդեպ, որ խելագարվել է, թափառել անապատներում, գիշերել շրջապատված վայրի գազաններով: Բնագրում բառախաղ կա. «Մաշնունը գիտե, թե սիրուց մաշնունի (արաբերեն՝ խելագար) վիճակը ինչպիսին է»: Սուֆիական պոեզիայում Մաշնունի նման խենթանալը խորհրդանշում է նյութական հիմքից զուրկ, «մաքուր իդեայի» վերածված սեր:

2. «Քո անունը բացվող օրվա դրոշի պես է փողփողում»:

Այս քառյակը շահին նվիրված ներբող է:

3. «Հովսեփադեմ սիրուհիս խոցեց իմ սիրտը, Եգիպտուհու մատի պես, կտրեց իմ սիրտը»:

Աստվածաշնչի և Ղորանի կերպար Հովսեփը պարսկական պոեզիայում գեղեցկության խորհրդանշ է: Ըստ Ղորանի (12, 31), երբ Հովսեփ Գեղեցիկին առաջնորդում են այն սենյակը, որտեղ նստած էին նրան տեսնելու եկած կանայք, վերջիններս նրա գեղեցկությամբ զմայլված, սեղանին դրված դանակներով կտրտում են իրենց ձեռքերը՝ մրգի փոխարեն:

ՕՆՍՈՐԻ (970-1040)

Աբու - լ - Ղասեմ Հասան Օնսորիի մասին կցկտուր տեղեկություններ են հասել մեզ: Բոլոր աղբյուրներում նշվում է, որ նա եղել է Մահմուդ Ղազնավիի արքունիքի «բանաստեղծների արքան» (մալեբ - ալ - շոարա): Բազմիցս մասնակցել է Ղազնավիի դեպի Հնդկաստան կատարած արշավանքներին, ղասիդեներում փառաբանել և սրբագործել է նրա ավերիչ արշավանքները:

Ելնելով նրա մի քանի ղասիդեներից և 12-րդ դ. պատմագիր Բեյհադիի թողած քանի գուսպ տեղեկություններից, ենթադրվում է, որ նա իր տեղը զիջել է մի ռելուկ» բանաստեղծի: Այդ հանգամանքը մթազնել է նրա կյանքի վերջին ևը: Օնսորին գրել է ղասիդեներ, ղըթաներ մասնավի և 68 քառյակ: Ունի չքեղ, նրբաճաշակ ոճ: Օգտագործել է բանաստեղծական բարդ հնարաններ: Խրախճանքի և բնության նկարագրության վարպետ է:

★

★ ★

1. «Սիրահարը այդ արժանի սիրածի գիրկն ո՞վ է տվել»:

Ի նկատի ունի վարսերի ու դեմքի գուժային խաղը, որտեղ սիրահարը սպիտակ դեմքն է, իսկ արժանի սիրածը՝ խոպոպները:



ՖԱՐՐՈՒԽԻ (մահ. 1037)

Աբու-լ-Հասան էբն Զուլու Ֆարրուխին ծնվել է Սիսթանում, պալատական աստիճանավորի ընտանիքում, ստացել է լավ կրթություն, երգել է և վարպետորեն նվագակցել չանգով: Տարբեր տիրակալների մոտ բախտ որոնելուց հետո հանգըրվանել է Մահմուդ Ղազնավիի արքունիքում, դարձել նրա ներքողագիրը: Նրան և նրա որդուն է նվիրել բազմաթիվ դասիղեններ, հերոսացրել նրան՝ Հնդկաստան կատարած կողոպտչական արշավանքների առիթով:

Մահմուդ Ղազնավիի մահից հետո նրա որդուն է նվիրել շնորհավորական դասիղե՝ որի ոգին «Թագավորը մեռավ, կեցցե թագավորը» թևավոր խոսքն է: Ֆարրուխիի դիվանը ընդգրկում է 200 դասիղե, 28 դազալ և 36 քառյակ: Քառյակները համեմված են ժողովրդական դարձվածքներով և ասացվածքներով:

ՄԱՆՈՒՉԵՀՐԻ (1000-1040)

Աբու Նաջմ Մանուչեհրին ծնվել է Դամղանում: Եղել է Մահմուդ Ղազնավիի պալատական բանաստեղծների «հզոր խմբակի» (Օնսորի, Ֆարրոխի և այլն) անդամ: Նրա քնարական դիվանը պահպանել է 57 դասիդե, 20 դըթա, բազմաթիվ սամմաթներ (քնարական բանաստեղծական ձև) և 7 քառյակ: Մանուչեհրին թեև յրեն համարել է Օնսորիի աշակերտ, սակայն ինքնատիպ և վառ անհատականության տեր բանաստեղծ է: Բուռն խանդավառությամբ գովերգել է գինին: Սիրային թեմաներին ավելի քիչ է անդրադարձել, քան Օնսորին և Ֆարրոխին: Ունի բարդ, զարդաքանդակ ոճ: Բավարարել է վերնախավի գեղագիտական պահանջները:



ԱԶՐԱՂԻ (մահ. 1072)

Աբու - լ - Հասան Ազրաղին ծնվել է Հերաթում: Ստացել է լավ կրթություն: Եղել է սելջուկյան սուլթանների պաշտոնական ներբողագիրը: Պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ նրա հոր՝ գրքավաճառ Իսմայիլ Վարադի տանը թաքնվել է Մահմուդ Ղազնավիից Թուս փախած Ֆերդոուսին: Ազրաղիի բանաստեղծության հիմնական ժանրային ձևը դասիդեն է: Նրան յուրահատուկ են զարդարուն ոճը, հաճախ ֆանտաստիկ պատկերները: Կյանքի երկրորդ շրջանում հարել է իր համերկրացի սուֆի շեյխ Անսարիի ուսմունքին: Քառյակի բովանդակությունը հարստացրել է ինքնաճանաչողական և հայեցողական միտումներով: Ունի 108 քառյակ:

ՄԱՍՈՒԴ ՍԱԱԴ ՍԱԼՄԱՆ (1049-1122)

Ծնվել է Լահորում, պալատական աստիճանավորի ընտանիքում: Հնդկաստանում պարսկական պոեզիայի հիմնադիրն է, եղել է վերջին դազնավիների ներբողագիրը: Դառնալով պալատական խարդավանքի զոհ, 40 տարեկան հասակում բանտ է ընկել և տասը տարի անցկացրել Սու և Նայ ամրոցներում: Կարճատև հաջողությունից հետո նորից է ընկել բանտ: Կյանքի միայն վերջին տարիներն են անցել համեմատաբար հանգիստ պայմաններում: Ղասիդեի վարպետ է, անկրկնելի պարզության (սահլ է մոթան) ոճի կրող, պարսկական պոեզիայում բանտային եղերերգության (հաբսիյե) սկզբնավորողներից մեկը: Հիմնական թեմաներն են՝ սեր, ներբող և բողոք: Մասուդ Սաադն ունի 400 ոտբայի, հագեցած զգացմունքայնությամբ և դրամատիկ հոգեբանական պահերով:

*

* *

1. «Նայը բանտ էր, հիմա՝ դժոխք, ժանտ ու դժնյա է դարձել»:

Նայը այն բանտն է, որտեղ երկար տարիներ տառապել է հեղինակը:

ՄՈՆԶԶԻ (1048-1125)

Աբու Աբդալլահ էրն Մոհամմադ Մոեզզին եղել է սելջուկյան շահ Սանջարի արքունիքի «բանաստեղծների իշխանը»: Աուֆիի (13-րդ դար) հաղորդմամբ Մոեզզին ունեցել է տխուր վախճան: Պատահաբար վիրավորվել է Սանջարի նետից և տևական տանջանքներից հետո մահացել: Նրա բանաստեղծության հիմնական ժանրային ձևը դասիդեն է: Ունի 178 քառյակ: Նրբագեղ-նկարագրական արվեստի (վասֆ) վարպետ է: Սիրային քառյակները ունեն հոգեբանական շեշտվածություն:



1. «Կրծքիս վրա, սրտիս վրա գոհարներ կան պերճ,
Բայց կրծքիս ու սրտիս ցավից տանջվում եմ անվերջ»:

Քառյակը կրում է ինքնակենսագրական բնույթ: Հեղինակը ակնարկում է սուլթանի նետից ստացած վերքի ցավը:

2. «Բայց, տես, ամեն ինչ ազահ Կորխի պես անցավ գետնի տակ»:

Կորխը Աստվածաշնչի (Թիվք, ԻԶ, 10) և Ղորանի (28, 76-81) կերպարներից է: Ազահության պատճառով հողը կլանեց նրան, իր հարստությամբ հանդերձ:

3. «Վրան խփեց, բայց ոչ մեկին և ոչ մի վարձ»:

Այս քառյակը էպիգրամ է ժլատի դեմ:

4. «Գիշերը դառնում է նավ, արևը՝ նավախարխախ»:

Քառյակը կառուցված է նավակ - նավ, հողմ - խարխախ հակադրությունների վրա, որոնք ընդգծում են գիշերվա արագ և դանդաղ ընթացքը:

ՕՄԱՐ ԽԱՅԱՄ (1048-1122)

Օմար էրն էբրահիմ Խայամը ծնվել է Նիշապուրում, վրանագործի ընտանիքում, որտեղից և գալիս է նրա Խայամ գրական կեղծանունը: Սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում, հետագայում այն շարունակել Բալխում և Սամարղանդում: Ցուցաբերել է բացառիկ գիտելիքներ մաթեմատիկայի, աստղաբաշխության, փիլիսոփայության, բժշկության բնագավառներում: Հեղինակ է մոտ տասը մաթեմատիկական և փիլիսոփայական երկերի՝ գրված արաբերեն և պարսկերեն: Եղել է Արիստոտելի, էրն Սինայի և Ալ - Ֆարաբիի հայացքների հետևորդ: Ժողովրդի կողմից ստացել է հաքիմ (իմաստուն) տիտղոսը: Սելջուկյան արքունիքի վեզիր Նեզամ ալ Մուլքի հրավերով տեղափոխվել է Սպահան, որտեղ աստղագիտական դիտարկումների հիման վրա առաջարկել է Նոր և ճշգրիտ տոմար: Խայամին են պատկանում էվկլիդեսի երկրաչափության դժվարին նախադրույթների մեկնաբանությունը, ոսկու և արծաթի քանակության հայտնաբերման մեթոդը այդ խառնուրդներից կազմված մարմինների մեջ: Ենթադրվում է, որ փիլիսոփայական տրակտատներում և քառյակներում արտահայտած ազատախոհական գաղափարներն արդարացնելու համար կատարել է ուխտագնացություն դեպի մահմեդական սրբավայրեր:

Օմար Խայամը համաշխարհային հռչակ ձեռք է բերել իր քառյակներով, որոնց հավաստիությունը հաստատում է նրա ժամանակակից՝ 12-րդ դարի պատմագիր Բեյհադին: Խայամի անունով հայտնի քառյակների պատկանելությունը, չնայած համեմատական և վիճակագրական մեթոդներով դրանց իսկությունը վերականգնելու տեքստաբանների բազմաթիվ ջանքերին, մինչև այսօր էլ ճշտված չէ: Նրանց մի զգալի մասը (82 քառյակ) Վ. Ժուկովսկին անվանել է «թափառող քառյակներ»:

- * *
1. «Սատանան մի կու՛մ գինի թե խմե՛ր՝
Խոնարհում կաներ մարդ - աստծուն հնուց»:

Ըստ Ղորանի (2, 32), Մոհամմադը բոլոր երկնային արարածներին հրամայել է խոնարհվել Ադամի առջև: Բոլորը ենթարկվել են աստծո կամքին, բացի սատանայից՝ Էբլիսից*: Նա անհիծվել և վտարվել է դրախտից:

2. «Ռամազանին մենք կխմենք, մեզ պատկանող միակ ամսին»:

Ռամազանին առաքվել է Ղորանը, Մոհամմադը ստացել է իր առաջին հայտնությունը (Ղորան 2, 181), ծոմը պարտադիր է վաղ առավոտից մինչև ուշ երեկո: Ուտել թույլատրվում է գիշերը: Այս քառյակը մարտահրավեր է Ղորանի պատվիրաններին:

3. «Բահրամ, որ գուռ էիր որսում քո ողջ կյանքում,
Տեսար, թե ոնց գուռը որսաց քեզ աշխարհում»:

Այստեղ բառախաղ: կա. գուռ նշանակում է ցիռ (վայրի էշ), նաև՝ գերեզման: Բահրամ շահը, որ ցիռի հայտնի որսորդ էր, դարձավ գուռի, այսինքն գերեզմանի բաժին:

4. «Մեզանից ով մեղք չի գործել այս աշխարհում, ասա»:

Ըստ ավանդության, երբ Խայամը աստծո կողմից պատժվել է նրա դեմ ըմբոստանալու պատճառով, դիմել է նրան այս խոսքերով:

5. «Որպես ոչինչ՝ ոչինչի մեջ, ոչինչ ես դու, դու չկաս»:

Խայամյան նիհիլիզմի ցայտուն արտահայտություններից մեկն է:

6. «Եղել է մի արևադեմ, լույս Արուսյակ»:

Արուսյակը (Զոհրա-Վեներա) ըստ մահմեդական ավանդության հրապուրել է հրեշտակներ Հարութին և Մարութին, իմացել կախարդական խոսքը և բարձրացրել երկինք: Նա ուղեկցում է մուլորակների խումբը և հայտնի է «Երկնային երաժիշտ» անունով: Զոհրան գեղեցկության, բարի համբավի խորհրդանիշ է:

7. «Թե ես մոգերի գինով հարբած եմ, այդպես եմ որ կամ»:

Միջնադարյան իրանում գինու առևտրով զբաղվում էին զրադաշտականները: Առևտուրը կատարվում էր քաղաքի ծայրամասերում, ավերակ տներում, որոնք կոչվում էին «խարաբաթ»: «Մոգերի գինին խմելը» բանաստեղծական պատկեր է, որն արտահայտում է ընդվզում մահմեդական օրենքների դեմ:

ՍԱՆԱՅԻ

Աբու-լ-Մաջդ ադ-Դին էբն Ադամ Սանային սուֆի բանաստեղծ է, ծնվել է Ղազնայում (ներկայիս Աֆղանստանի տարածք)։ Հրաժարվել է Բահրամ շահի պալատում ծառայելուց և նրա դժգոհությունը մեղմելու համար նրան նվիրել «Ճշմարտության պարտեզ» սուֆիական պոեմը, որն իրավամբ համարվում է սուֆիզմի հանրագիտարան։ Կրոնն ուսումնասիրել է սուֆիական-միստիկական գաղափարները հիմնավորելու համար։ Հեղինակ է ընդարձակ պոեմների՝ «Գիրք սիրո», «Գիրք բանականության» և այլն։ Քառյակները և դազալները աչքի են ընկնում մեղեդայնությամբ, պատկերների պարզությամբ, մոտ են ժողովրդի ոգուն։ Սանային ունի 500-ից ավելի քառյակ։

*
* *
*

1. «Որ արբենա Կորիսը անգամ մյուս կյանքում»։

Տես Մոեզզի, Ծանոթագրություն 2 (էջ 197)։

ԲԱՔԱ ԹԱՀԵՐ (11-րդ դար)

Բաբա Թահեր Օրիյանը քնարերգու բանաստեղծ է, վաղ սուֆիական քառյակի ներկայացուցիչ. ծնվել է 10-րդ դ. վերջին, Համադանում: Ծննդյան և մահվան թվականները անհայտ են: Ըստ մեզ հասած տեղեկությունների, Բաբա Թահերը թափառական դերվիշի կյանք է վարել, կրել է բաբա (հայր) անվանումը, որը ժողովրդի մեջ նրա վայելած հեղինակության ապացույցն է: Ըստ ավանդության, եղել է սուրբ անձնավորություն, լուղացել է սառցաջրում, մերկ ոտքերով քայլել սառույցի և ձյան վրա, բողոքելով, որ «այրվում է», ապրել է Համադանին մոտ Ալվանդ սարի քարայրերում: Բաբա Թահերը յուրահատուկ, վառ անհատականության բանաստեղծ է, ինքնատիպ է ոչ միայն իր լեզվով, այլև քառյակի կառուցվածքով: Դրանք գրված են քառյակի կանոնիկ չափի նրբերանգային շեղումով և պոետիկայում կոչվում են դոբեյթի: Բաբա Թահերը գրել է Լորի բարբառով, որով և ավելի հարազատ է դարձել ժողովրդի ոգուն: Նրա ժառանգությունից մեզ են հասել միստիկական-փիլիսոփայական դատողություններ, մի քանի դազալ և 296 քառյակ:

Բաբա Թահերի լիարժեք և տեքստաբանորեն հավաստի դիվանը հայտնաբերվել և հրատարակվել է պարսիկ հայտնի գրականագետ Վահիդ Դասթգյարդիի կողմից (1926 թ., Թեհրան), որից և մենք թարգմանել ենք:

ԱՄԱՂ (մահ. 1148)

Շահաբ ադ - Դին Ամաղը ծնվել է Բուխարայում: Հայտնի արքունական բանաստեղծ է, սելջուկյան սուլթանների «պոետների արքան» Բուխարայում: Ղասիդեի վարպետ է, դեկորատիվ և նրբաճաշակ բանաստեղծության ներկայացուցիչ: Ունի 18 քառյակ:

*
* *

1. **«Դատաստանի վերջին օրից եմ վախենում,
Հողի տակի անհայտ հորից եմ վախենում»:**

Դատաստանի վերջին օրը (Ղորան, 101, 1-8) կշռելու են մարդկանց մեղքերը. մեղավորները տառապելու են անդունդում և գեհեների կրակներում:

2. **«Ջոնար դարձրեց մեղեսիկը իմ հուրին»:**

Ջոնարը այն գոտին է, որը կապում էին քրիստոնյաները մահմեդականներից տարբերվելու համար, իսկ մեղեսիկը ուղղափառ մահմեդականի պարտադիր հատկանիշներից է: Քառյակի իմաստը սիրուհու ամենակարող լինելն է, սիրահարին հավատափոխ անելը:

Քառյակում մահմեդական կրոնին [մեղեսիկ] հակադրվում են քրիստոնեական (զոնար) և զրադաշտական կրոնի (ատրուշան) խորհրդանիշները:

ՍՈՒՋԱՆԻ [1086-1173]

Մոհամմադ էբն Ալի Սուլանին ծնվել է Սամարղանդի մոտակայքում, եղել է դերձակ, որտեղից և նրա գրական կեղծանունը, Սուլանի՝ ասեղի վարպետ։ Շուկայական թեմաները թափանցել են նրա բանաստեղծություն։ Ցածր, ռամկական ոճը ավելի ցայտուն է նրա երգիծանքում, որը երբեմն հասնում է ուղղակի հայիոյանքի։ Հեղինակ է տիրակալներին նվիրված բազմաթիվ դասիդենների, որոնք նրա համար ապրուստի միջոց են ծառայել։ Ունի «շահրաշուբ» ժանրին պատկանող քառյակներ, նվիրված գեղեցիկ, արհեստավոր-պատանիներին, որոնք, ինչպես այդ անվանումն է հուշում, իրենց գեղեցկությամբ քաղաքի հանգիստը ալեկոծողներն էին։ Սուլանին օգտագործել է բազմաթիվ արհեստների վերաբերող տերմիններ, ազգագրական տեսարաններ։ Նրա բանաստեղծությանը բնորոշ են՝ բարձր ոճի անկում, ռեալիստական պատկերների բազմազանություն, օտարամուտ (արաբերեն, ~~կրացերեն~~ և այլն) բառերի առավել գործածություն։ Նրա դիվանը՝ Նասր ադ-Դին Շահ Հոսեյնիի աշխատասիրությամբ, պարունակում է 55 քառյակ։

1. «Զո զարդատուպի շուրթին դիպավ իմ շուրթը»։

Գեղեցկուհու բերանը համեմատվում է զարդատուպիի հետ, որտեղ 32 մարգարիտ է պահպանվում։ Պարսկական պոեզիայում ավանդական դարձած պատկեր է։

ՋԱՄԱԼ ԱՂ-ԴԻՆ (մահ. 1192)

Մոհամմադ աբու-լ-Ռազադ Ջամալ աղ-Դինը ծնվել է սելջուկյան կայսրության մայրաքաղաք Ապահանում, տոհմական ոսկերչի ընտանիքում: Շարունակել է իր նախորդների արհեստը: Բանաստեղծություններում ցուցաբերել է խոր գիտելիքներ աստվածաբանության բնագավառում: Տիրապետել է արաբերենին, գրել պարսկերեն և արաբերեն լեզուներով: Կենսագրական տեղեկությունների աղբյուր են ծառայում նրա բանաստեղծությունները: Ամենայն հավանականությամբ մեկենասները, որոնց նվիրել է դասիդեններ և դազալներ, ըստ արժանվույն չեն վճարել մեծ ընտանիքի հոգսով ծանրաբեռնված բանաստեղծին, ուստի հաճախ բողոքում է ճակատագրից և կյանքի անարդարությունից: Չստանալով սպասված օգնությունը, Ջամալ աղ-Դինը վերադարձել է շուկա, ոսկերչի իր կրպակը: Մահացել է աղքատության մեջ:

